Էջմիածին

Պաշտօնական ամսագիր
Հայրապետական աթոռոյ
Ս. Էջմիածնի

VIII

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Գերագույն Հոգևոր Խորհրդի շրջաբերական հեռագիրը՝ Ազգային-եկեղեցական ժողովի, Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության, եպիսկոպոսական ձեռնադրության և մեռոնօրհնեքի առնչությամբ . . . 3

Մայր Աթոռի դիվանատան պաշտոնական հաղորդագրությունը՝ Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությունը կազմակերպելու համար Համազգային կենտրոնական ընտրական հանձնաժողով կազմելու մասին 4

Գերագույն Հոգևոր Խորհրդի նամակը ուղղված բոլոր թեմերին՝ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք-Կաթողիկոսի ընտրության առթիվ 5

ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Մեռոնօրհնեք կատարելու մասին . . . 9

Ազգային-եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրություն . 13

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետի ընտրությունը 16

ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.— Սրբալույս Մեռոնի օրհնությունը 20

Իրուսաղեմի Պատրիարքական տեղապահ եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը Անգլիկան եկեղեցվո Պետին հետ 26

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 28

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ.— Առաքելոց վանք-ամրոցը և գյուղատեղը . . 31

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.— Յոթերորդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացին 40

Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ.— Արևաշող երկրի արևավառ նկարիչը . . 48

Ս. Ք.— Արժեքավոր նվեր Երևանի Պետական մատենադարանին . 52

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ 57

Կոմիտասի մահվան 20-ամյակի առթիվ համերգ Բուխարեստի մեջ . 60

Հարավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Մանուկյան Բրազիլի մեջ 61

Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը Կլիվլենդի մեջ . . 62

Ազգային թեմական ընտրությունները Աղեքսանդրիայում . . 62

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1955 թ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ՝ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԾՈՆՈՐՀՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

ԱՌԱՋԻԿԱ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26—30-Ը ՀՐԱՎԻՐՎՈՒՄ Է ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ: ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՆԱԼՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԻՍԿ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ, ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԻՆ՝ ՆԱԵՎ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ: ՀԱՄԱՁԱՅՆ 1945 ԹՎԱԿԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՍՏԱՏԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ, ՁԵՐ ԹԵՄԸ ԻՐԱՎԱՍՈՒ Է ԱՌԱՋԱԴՐԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԹՎՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ: ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՒՄ Է ԱՆՀԱՊԱՂ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԸՆՏՐՎԱԾՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ, ՀԱՅՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԵՌԱԳՐՈՎ ՀԱՅՏՆԵԼ ՄԵՋ՝ ՎԻՃԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԲԱՐԵԽՆԱՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ: ՆԱՄԱԿԸ ՀԵՏԵՎՈՒՄ Է:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

19 օգոստոսի 1955 թ.
Էջմիածին

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԱՏԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությունը կազմակերպելու համար ստեղծված է Համազգային կենտրոնական ընտրական հանձնաժողով հետևյալ կազմով. Գարեգին Պատրիարք Խաչատրյան, խադ արքեպիսկոպոս Աջապահյան, Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյան, Վազգեն եպիսկոպոս Պալճյան, Վահան արքեպիսկոպոս Կոստանյան, քանատեղծ Ավետիք Իսահակյան եվ Ստեփան Կամսարական:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԱՏՈՒՆ

18 օգոստոսի 1955 թ.
Էջմիածին

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆՍՄԱԿԸ ՈՒՂՂՎԱԾ ԲՈԼՈՐ ԹԵՄԵՐԻՆ՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հնավանդ սովորության համաձայն, Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշել է 1955 թվականի սեպտեմբերի 25—30-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հրավիրել ազգային-եկեղեցական ժողով՝ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք-Կաթողիկոսի ընտրության համար. ժամանակն է վերացնելու Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու դարավոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռից սգի սև շղարշը, որը ծածկվել է երջանկահիշատակ և հավետ ողբացյալ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. առաքելաշավիղ Հայրապետի մահից հետո, և ընտրել արժանավոր նոր Գահակալ:

Հանգուցյալ Վեհափառի մահը սգացին մեր եկեղեցու բոլոր սրտացավ հավատացյալները: Հանգուցյալ Վեհափառը, յուրահատուկ խոհեմությամբ, զգաստ ու իմաստուն ղեկավարությամբ, իրատես ու ողջամիտ ազգային-եկեղեցական քաղաքականությամբ, ժողովրդասեր ու հայրենանվեր գործունեությամբ նոր ու խոստումնալից էջ բացեց մեր ազգային-եկեղեցական նոր տարեգրության մեջ՝ Հայաստանյայց եկեղեցու համար:

Մեռավ Գահակալը. բայց կանգուն է Գահը: Վեհափառի մահով չի ավարտվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմական դերը հայ կյանքում: Ս. Էջմիածինը հազարամյակներով հայ ժողովրդի համար հանգիստացել է մի Սրբություն Սրբոց, մեր ժողովրդի ամենանվիրական ուխտավայրերից հնագույնն ու համազգայինը, որի պատմությունը, գոյությունը սերտորեն կապված է եղել հայ ժողովրդի կյանքի պատմության ողջ գոյության հետ: Ս. Էջմիածնի անունն ու խորհուրդը նվիրական ու բանկ է եղել ամեն մի հավատացյալ հայ սրտի համար: Հայ հավատացյալ ժողովուրդը, իր հոգու բովանդակ ջերմությամբ, ազգային-եկեղեցական հայրենության ամենավառ, սրտագին ու սիրաշատ զգացմունքներով է կապվել Ս. Էջմիածնի հետ, որովհետև հայ ժողովուրդը Ս. Էջմիածնի հարազատ զավակն է, նրա հոգևոր ծնունդը: Անա թե ինչո՞ւ Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությունը միշտ էլ հանդիսացել է մեծ ու պատմական իրադարձություն մեր ազգային-եկեղեցական կյանքում:

Ուրախ ենք ազգովին, որ մեր ազգային-եկեղեցական պատկառելի ժողովը տեղի պիտի ունենա այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ միջազգային քաղաքական հորիզոնի վրա երևում են մնայուն խաղաղության առաջին

ու խոստումնալից ծիլերը: Տա՜յր Ամենակալը, որ չորս մեծերի բանակցությունները շոշափելի հիմքերի վրա դնեին ցանկալի և սուրբ խաղաղությունը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համար 1955 թվականի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսները հանդիսանալու են, արդարև, հավետ անմոռանալի և հոգևոր մխիթարության պատմական օրեր:

Համաձայն 1945 թվականի Ազգային-եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրության, որը խոստացումն էր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ոգու և սկզբունքների, Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությանը իրավասու են մասնակցելու մեր եկեղեցու հավատացյալ ողջ զավակները՝ իրենց ընտրած եկեղեցական և աշխարհական պատգամավորներով: Հրահանգվում է ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների ընտրությունը կատարել ըստ վերև հիշված կանոնադրության:

Ազգային-եկեղեցական այդ պատկառելի և սրբազումար ժողովի անդամ են՝

ա) Ս. Էջմիածնի Դերագույն Հոգևոր Խորհրդի անդամները.

բ) Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը իր եպիսկոպոսներով.

գ) Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքները իրենց եպիսկոպոսներով.

դ) Հայոց Եկեղեցու բոլոր առաջնորդները և առաջնորդական փոխանորդները.

ե) Ս. Էջմիածնի, Մեծի Տանն Կիլիկիո, Ս. Երուսաղեմի, Կոստանդնուպոլսի Պատրիարքության միաբանություններից մեկական ներկայացուցիչ.

զ) Եվ հավատացյալ ժողովուրդն իր ընտրած մեկ կամ ավելի պատգամավորներով: (Մինչև 25.000 ժողովուրդ ունեցող թեմը ընտրում է 30 տարին լրացրած մի պատգամավոր: Յուրաքանչյուր թեմ ընտրում է այնքան պատգամավոր, որքան անգամ 25.000 ժողովուրդ պարունակում է իր մեջ: Վերջին 25.000-ը կարող է լրիվ չլինել, բայց ոչ պակաս 10.000-ից):

Ազգային-եկեղեցական ժողովի թեմական պատգամավորների ընտրության մասնակցում են հոգևորականները և քաղաքացիական չափահասություն ունեցող մեր եկեղեցու զավակ հանդիսացող աշխարհական իրավասու ծխականները:

Պատվիրակները պատգամավորին կարող են ընտրել իրենց միջից կամ դրսից:

Անհրաժեշտ է շտապ ձեռնարկել ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների ընտրության և ընտրվածների անունը, հայրանունը և ազգանունը հայտնել մեզ՝ դիմելու բարեխնամ կառավարության՝ վիզաների իրավունք ստանալու:

Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների ընտրության առթիվ ծագած ամեն տարակուսանքների համար կարելի է դիմել նամակով կամ հեռագրով Ս. Էջմիածնի Դերագույն Հոգևոր Խորհրդին:

Ըստ հնավանդ սովորության, այս անգամ ևս, մեր աշխարհական և եկեղեցական պատգամավորները ընտրված կլինեն լավագույն, ազնիվ, բարի, նշմարտապես եկեղեցասեր և չեմ հավատացյալ ծխականներից, որոնք վայելում են իրենց ժողովրդի, թեմի վստահությունը, համակրանքն ու մեծարանքը:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը վստահ է, որ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ, ՍՐՏԱՌՈՒՑ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՄԲ, ԱՅՍ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎՍ ԿԴՐՍԵՎՈՐԵՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱՄՔԻ, ՁԳՏՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ԱԶԳԻ, ԺՈՂՈՎՐԴԻ, ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ, ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՀԱՐԱՁԱՏ ՈՐԴԻՆԵՐԻ ՊԱՏՎԻ, ԵՂՀԻ, ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ, ԵԿԵՂԵՑԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆ Է — ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԴԱՀԻ ՎՐԱ ԸՆՏՐԵԼ ԱՅՆՊԻՍԻ ՄԵԿԻՆ, ՈՐ ՎԱՌ ՊԱՀԻ ԲՈՎԱՆԴԱԿ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳՈՒՄ ՄԵՐ ՆԱԽՆՅԱՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ԷՋՄԻԱԾՆԱՍԻՐԱԿԱՆ ՈԳԻՆ ՈՒ ԲՈՑԱՎԱՌ ՁԳԱՑՄՈՒՆՔԸ, ԸՆՏՐԵԼ ԱՅՆՊԻՍԻ ՄԵԿԻՆ, ՈՐ ԱՅՍՕՐՎԱ ԲԱՐԴ ՈՒ ԴԺՎԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՐԵՆԱ ԲԱՐՁՐ ՊԱՀԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԱՐԱՎՈՐ ԿԵՆՏՐՈՆԻ՝ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՅՐԱՐԱՏՅԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՀՄԱՅՔԸ, ԿԱՐԵՆԱ ԽՈՐԱՑՆԵԼ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍՐՏԱԳԻՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱԾ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԱԽՆՅԱՑ ՈԳՈՒՆ ԵՎ ՕՐԻՆԱԿԻՆ ՆԱԽԱՆՁԱԽՆԴԻՐ ԼԻՆԻ, ԱՁՔԻ ԼՈՒՅՍԻ ՊԵՍ ՊԱՀՊԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՔԵԼԱՀԱՍՏԱՏ ՈՒ ԼՈՒՍԱՎՈՐՉԱՀԻՄՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԿԱՆՈՆԸ. ՄԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԱԶԳԱՅԻՆ ՍՐԲԱԶԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՑՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹՅՈՒՆԸ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԵՎ ԱՇԽԱՏԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ ԵՐԲԵՔ ՍԵՐՏԱՑՆԵԼ ԿԱՊԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԵՏ:

Մեր պատգամավորության պարտքն է կազմակերպված անցկացնել հայրապետական այս ընտրությունը, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ընդհանրության և հայ հավատացյալ ժողովրդի միասնականության վեհ ու սրբազան սկզբունքներով, պատմական այդ ընտրությունը վերածել հայ ժողովրդի միասնականության և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու միության սրտառուչ տոնի, հայ ժողովրդի սիրո, հարգանքի, երախտագիտության, խմբվածության տոնի՝ մեր Մայր եկեղեցու և նրա նոր ու արժանավոր Հովվապետի շուրջը, որպեսզի մի անգամ ևս ողջ աշխարհով մեկ հռչակվի, որ ՄԻ Է ՀԱՅՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՄԻ Է ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ:

Հայրապետական ընտրությունից և օծումից հետո, հոկտեմբերի 4-ին, նշանակված է նորընտիր և նորաօծ Հայրապետի անդրանիկ մեծահանդես հայրապետական տուրք պատարագ ու եպիսկոպոսական առաջին ձեռնադրության շնորհալաշխության հանդեսը:

Շատ գեղեցիկ և համբուրելի սովորության համաձայն, նորընտիր Հայրապետը պետք է կատարի եպիսկոպոսական ձեռնադրություն, իր հայրապետական բարձր գնահատության և քաջալերանքին արժանացնելով մեր այն առաջնորդներին և կուսակրոն եկեղեցականներին, որոնք իրենց եկեղեցասեր և հայրենասեր գործունեությամբ, իրենց թեմերի ազգային-եկեղեցական կյանքի կազմակերպվածությամբ, իրենց ժողովրդի ցանկությամբ արժանացել են եպիսկոպոսության բարձր և պատասխանատու աստիճանին:

Ուրախ ենք արձանագրելու, որ այսօր էլ մեր հոգևորականության շարքերում ունենք մի շարք արժանավոր հովիվներ և առաջնորդներ, որոնք, վստահ ենք, որ կարժանանան նորընտիր Հայրապետի բարձր գնահատության:

Մի երրորդ հոգևոր ուրախություն էլ վերապահված է մեր պատգամավորներին և ուխտավոր հայ ժողովրդին. որոշվել է հոկտեմբերի 8-ին, Սրբոց

Թարգմանչաց տոնին, կատարել Մայր Աթոռում Սրբալույս Մեռոնի օրհնություն:

Սրբալույս Մեռոնի օրհնությունն էլ հայ ժողովրդի սրտին մոտիկ ամենանվիրական ու համաժողովրդական, ազգային-եկեղեցական մեծաշուք ու խորհրդավոր տոնակատարություններից մեկն է, որի նմանը չկա հայ մարդու համար ոչ մի տեղ և ոչ մի առիվ:

Այս ուրախ առիվ հայ հավատացյալ ժողովուրդը հրավիրվում է «դեպի հանուրց Հայաստանյայց Մայր Աթոռը՝ հանդիսատես ու տոնակից լինելու Սրբալույս Մեռոնի մեծագույն և խորհրդավոր հանդեսի կատարմանը»:

Ու կգա հայ ուխտավոր մարդը հեռու թե մոտիկ գաղութներից, ծունկ չոքելու Ս. Էջմիածնի հազարամյա քարերի ու մեռոնադրոշմ սրբություններին առաջ, կգա համբուրելու հայրենի հողը, որի տերն է այսօր հայ աշխատավոր մարդը:

«Մեր նախնյաց և մեր ներկա Սրբություն Սրբոցը՝ հայ քրիստոնյա մարդու Լուսո Տաճարը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր սրբություններով և մեր ներկա Մայր Հայրենիքը՝ իր պատմական հուշարձաններով, որպես մագնիսական ուժ, կբերեն տարաբնակ և հեռաբնակ հայ ժողովրդի ներկայացուցիչներին ու կճամախմբեն պատմական Տաճարի շուրջ, հայրենի կարոտն առնելու...» (Գեորգ Զ.):

Հոգևոր ուրախության այդ օրերին, մենք լիանույս ենք, որ հայ հավատացյալ մարդը՝ հավատով զինված, իր նախնյաց կրոնասեր ու կրոնազգած ոգով ներշնչված կկատարի որդիական իր բարոյական պարտքը Ս. Էջմիածնի հանդեպ: Հին, ավանդական սովորության համաձայն, Սրբալույս Մեռոնի օրհնության առիվ կատարվելիք ընդարձակ ծախսերը՝ միշտ էլ ցանկացել է հոգալ հավատացյալ հայ ժողովուրդը, ԴԱՐԲԱՍ ուղարկելով Մայր Աթոռ: Վստահ ենք, որ այս առիվ էլ. հայ հավատացյալ ժողովուրդը բաց կանի իր սրտի և քսակի բերանը... Մեծատունն ու ունևորը կտան իրենց հարուստ քսակից, իսկ աշխատավորն ու արհեստավոր մարդը՝ իրենց «այրի կնոջ երկու լուման»: Քանակը չէ այնքան կարևոր, որքան այն սերն ու պատրաստակամությունը, որով տրված է այդ նվիրատվությունը Հայ եկեղեցու կարիքների համար:

Պատգամավորները կարող են իրենց հետ բերել այն սրտագին ու սիրաշատ նվիրատվությունները, որոնք կլինեն Մայր Աթոռի պայծառության համար:

Սրենյա՛լ լինի նվիրատուների կյանքը և օրհնյալ՝ հայ ժողովուրդը:

Աղոթե՛նք Ամենակարողին, որ իր հովանի բազուկը տարածի միշտ հայ երկրի վրա, զորացնի հայ ժողովրդին, արիացնի հայ հոգևորականությանը՝ իրենց նվիրական պարտքը կատարելու հանդեպ իրենց Ազգի, մեր փառապանծ Հայրենիքի և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու:

ԴԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

18 օգոստոսի 1955 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՄԵՌՈՆՕՐՀՆԵՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹՅԱՄԲ ՏԵԱՌՆ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՂԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԵԱՔՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՊԱՀԵԱՆՆ, ՍՐԲՈՅՆ ՍԱՂԻՄԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐՅԱՆՆ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆՆ, ԳԵՐԱՇՆՈՐՀ ԱՌԱՔՆՈՐԴԱՅ ՀԱՄՕՐԷՆ ԹԵՄՕՐԷԻՑ ՀԱՅՈՑ, ՀՈԳԵՒՈՐ ՀԱՐՑ, ԵՂԲԱՐՑ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ, ՀԱՐԱԶԱՏԻՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ՝ Ի ԳԱՀԷՆ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ՝ ՏԻՐԱՒԱՆՆ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ

Քսանութ տարի է, որ Ս. Էջմիածնում տեղի ունեցած չէ Սրբալույս Մեռոնի օրհնություն, հայ ժողովրդի սրտին մոտիկ նվիրական եվ խորհրդավոր սուրբ տարողություն, որի հեռեվանքով զրկվել է նա հոգեկան բարձր մխիթարությունից:

Երջանիկ ենք, որ բախտ պիտի ունենանք կատարելու եկեղեցական-ազգային այդ հուզիչ եվ խորհրդավոր հանդեսը՝ Սրբալույս Մեռոնի օրհնությունը, պահպանելով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դարերով սրբազործված եվ նվիրական դարձած սրբազան խորհուրդը, որ՝ որպես հայրենի սուրբ ավանդ, բողել են մեզ մեր երջանկահիշատակ հայրապետները:

* Երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի սույն կոնդակը արտատպվում է մեր ամսագրի 1954 թվականի № IV-ից:— ԽՄԲ.:

Առավել բախտավոր ենք մենք՝ մանավանդ այն պատճառով, որ Սրբալույս Մեռոնի օրհնությունը առաջին անգամ Մենք պիտի կատարենք Մայր Հայաստանի ազատ եվ անկախ պետականության վսեմ պայմաններում, Մայր Հայրենիքի եվ հայրենի հարազատ իշխանության հովանու տակ՝ ի մխիթարություն հայ ժողովրդի եվ ի փառս Հայ Եկեղեցու:

Ս. Գրքում օծման յուղը որպես նյութեղեն միջնորդ է, որով աստվածային Հոգին եվ շնորհը իջնում եվ ներգործում է մարդոց եվ իրերի վերա: Ուստի եվ Հին Ուխտի մեջ՝ բաց հին ժամանակներից, օծումն ուներ նվիրագործող նշանակություն եվ՝ ինչպես առարկաներ, նույնպես եվ անձինք, որոնք նվիրված էին Աստուծո սպասարկության, օծվում էին ձիթենու յուղով: Այսպես՝ օծված էր Մովսեսի Վկայության Խորանը իր բոլոր կահավորությամբ՝ Սրբության Սեղանով եվ Ավազանով: Օծմամբ էր ընդունում նաեվ իր սուրբ կոչումը սեղանին սպասավորող քահանան, որի ամբողջ կյանքը նվիրված պիտի լինի Աստուծո պաշտամանը:

Հայ ժողովրդի համար եվս Սրբալույս Մեռոնը, որպես նվիրական եվ խորհրդավոր սրբություն, սերտորեն կապված է քրիստոնեական պաշտամունքի հետ, ուստի եվ ամեն մի իր եվ անձն այն ժամանակ է միայն սրբազան ույժ ստանում նորա աչքին, երբ Սրբալույս Մեռոնի դրոշմը կա վերան: Նա խաչ է հանում երեսը՝ Եկեղեցու, Ս. Սեղանի, Ս. Ավազանի եվ սրբոց պատկերների առաջ, որովհետեվ Սրբալույս Մեռոնով սրբագործված են, համբուրում է եկեղեցու պաշտոնյայի աջը, որովհետեվ օծյալ է:

Հայ Եկեղեցին մի ազգային գեղեցիկ ավանդություն ունի, այն՝ որ Սրբալույս Մեռոնի օրհնությունը սկիզբ է առել Ս. Լուսավորչից եվ ամեն անգամ՝ նոր Մեռոն օրհնելիս՝ հին Մեռոն են խառնում հետը, որով Ս. Լուսավորչի օրհնած Մեռոնի խմորը անցնում է նորին, եվ այսպես Սրբալույս Մեռոնը կապում է հայի ներկան հեռավոր անցյալի հետ:

Սրբալույս Մեռոնը հանդիսանում է նաեվ ամենասերտ եվ անխզելի զոդը, որով՝ ի սկզբանե ստեղծված հայությունը կապվում է իր քրիստոնեության ծագման վայրի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ: Այս կապն է պատճառը, որ երբ Սրբալույս Մեռոնի կաթսան դրվում է Երկնավոր Ճարտարապետի ցուցմամբ հիմնված Միածնաէջ Տաճարի Ս. Սեղանի առաջ, բեմի վերա, եվ Ս. Լուսավորչի հաջորդ՝ Ամենայն Հայոց Ընդհանրական Հովվապետի օրհնության կոնդակը հրավիրում է իր հավատացյալ հոտին դեպի հանուրց Հայաստանյայց Մայր Աթոռը՝ հանդիսատես եվ տոնակից լինելու Սրբալույս Մեռոնի մեծագույն եվ խորհրդավոր հանդեսի կատարմանը՝ արտասահմանից եվ Հայրենի Երկրի

հեռավոր եվ մերձավոր վայրերից գալիս ու համախմբվում է հայ ժողովուրդը Մայր Աթոռի շուրջը, ուր տեղի է ունենում այնպիսի մեծաշուք եվ հոգեպարար հանդես, որի նմանը չկա հայ մարդու համար ո՛չ մի տեղ եվ ո՛չ մի առթիվ:

Նկատի առնելով՝ որ 1926 թվականից ցայսօր Սրբալույս Մեռոնի օրհնություն տեղի չի ունեցել՝ եվ ներկայումս Հայ Եկեղեցին Սրբալույս Մեռոնի մեծ կարիք ունի, նկատի առնելով նաեվ հայ ժողովրդի կրոնական պահանջն ու անսահման տենչը Սրբալույս Մեռոնի օրհնության խորհրդավոր հանդեսը տեսնելու, այլեվ նորա իրձերի բարգման հանդիսացողների բանավոր եվ գրավոր պահանջկոտ դիմումները՝ Մենք, չնայելով աշխարհի ալեկոծ վիճակին, Ս. Հոգու զորության եվ շնորհին ապավինած, սույն հայրապետական կոնդակով ծանուցանում ենք Մեր լծակից եվ գործակից եղբարց, Եկեղեցու հավատարիմ պաշտոնեության եվ Մեր սիրելյալ հոտին, որ 1954 թվականի սեպտեմբերի 26-ին, Վարագա Ս. Խաչի տոնին, որոշել ենք Սրբալույս Մեռոնի օրհնություն կատարել Հայ Եկեղեցու հնավանդ սովորության համաձայն:

Լիահույս ենք, որ հայ հավատացյալ մարդը՝ հավատով զինված, իր նախնյաց արդարամիտ եվ անձնվեր ոգով ներշնչված, համարձակ կկատարե իր բարոյական պարտքը:

Մենք հավատում ենք, որ մեր նախնյաց եվ մեր ներկա Սրբություն Սրբոցը՝ հայ քրիստոնյա մարդու Լուսո Տաճարը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ իր սրբություններով, եվ մեր ներկա Մայր Հայրենիքը՝ իր պատմական հուշարձաններով, որպես մագնիսական ույժ, կբերեն տարաբնակ եվ հեռաբնակ հայ ժողովրդի ներկայացուցիչներին ու կհամախմբեն պատմական Տաճարի շուրջը՝ Հայրենիքի կարոտն առնելու, հայրենի երկրի անցյալ եվ ներկա հուշարձանները տեսնելու, նորա ներկա կուլտուրական վերելքով հիանալու, նորա տնտեսական խոշոր հառաջխաղացմամբ ոգեվորվելու եվ իր կրոնական ծարավը հագեցնելու՝ համբուրելով իր սրբություններ ու՝ իր սրտին մոտիկ Սրբալույս Մեռոնի օրհնությունը տեսնելով՝ ոգեշնչվելու եվ՝ արձագանքելով իր նախնյաց սրտառուչ զգացմունքին՝ ձայնելու. «Եկայք տեսնեցուք սուրբ զխորանն լուսոյ...»: Հայրենի երբեմնի ավեր երկիրը՝ այսօր շենցած՝ պայծառ պահենք, զորացնենք եվ նորանով զորանանք ու մխիթարվենք: Որպեսզի մենք չպարծենանք միայն մեր հոգեվոր կյանքի կենտրոնի պատկառելի հնությամբ, նրա ասվածակառույց հարտարապետությամբ եվ անցյալ վիճակով, պետք է մեր Հայրենի Տաճարն ու Հայրենի Երկիրը արտաքուստ պայծառ ու հմայիչ եվ ներքուստ կենդանի ու կենսատու պահենք՝ արժանավոր ժառանգ հանդիսանալով մեր ստեղծագործող, հերոսածին, պանծալի նախնյաց:

Աղօթեմք կենսատու Փրկչին, որ տարածե իր հովանի բազուկը Հայ Երկրի վերա, զորացնե եվ արիացնե հայ ժողովուրդն ու հայ հոգեվորականությունը իրենց բարոյական, տնտեսական եվ կրոնական պարտքը կատարելու հանդեպ Հայ Ազգի, Հայրենիքի եվ Հայ Եկեղեցու:

Մաղթեմք սիրո եվ խաղաղության Փրկչին, որ մարդասեր ու խաղաղասեր ոգի ներշնչե ամբարիին, որպեսզի մարդկությունը ստեղծագործական խաղաղ ու երջանիկ կյանք վարե:

Շնորհք եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն:

Գ. Գ.

ԾԱՌԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 21-ն ապրիլի
1954 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԳ,
յինհերորդում ամի Հայրապետութեան Մերոյ,
ի Վանս Սրբոյ Էջմիածնի:

Հաստատեմ՝ ի գործադրություն
ԳԷՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Ի 19 յունիսի 1945 ամի
Ի Ս Էջմիածին

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Գերագույն կանոնադիր մարմինը Ազգային-եկեղեցական ժողովն է։

2. Ազգային-եկեղեցական ժողովը գումարվում է Ս. Էջմիածնում։

3. Ազգային-եկեղեցական ժողովը հրավիրում է Ամենայն Հայոց Մայրագույն-Պատրիարք-Կաթողիկոսը։

4. Ազգային-եկեղեցական ժողովի նախագահն է Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք-Կաթողիկոսը։

5. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո Պատրիարքները ժողովի նախաթոռ անդամներն են։

6. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հիվանդության դեպքում Ազգային-եկեղեցական ժողովին նախագահում են Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Երուսաղեմի և կամ Կոստանդնուպոլսո Պատրիարքը։ Սրանց բացակայության դեպքում նախագահում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահը Կաթողիկոսի հանձնարարությամբ։

7. Ազգային-եկեղեցական ժողովի իրավասությանն ենթակա են հետևյալ հիմնական խնդիրները.

ա. Ընտրություն Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք-Կաթողիկոսի.

բ. Ընտրություն Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների.

գ. Հաստատություն Ազգային-եկեղեցական Սահմանադրության.

դ. Քննություն և վճռահատություն եկեղեցական և այլ կանոնական և ընդհանուր հարցերի.

ե. Կարգավորում եկեղեցական տնտեսական վիճակի։

8. Ազգային-եկեղեցական ժողովը որոշում է իր գրաղմունքների օրակարգը և գործունեության ներքին հրահանգը։

9. Ազգային-եկեղեցական ժողովի անդամ են՝

ա. Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները.

բ. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն իր եպիսկոպոսներով և Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսի Պատրիարքները.

գ. Հայոց Եկեղեցու բոլոր առաջնորդները.

դ. Հայոց Եկեղեցու բոլոր եպիսկոպոսները։

Սանոթություն.— Առաջնորդի անձամբ ժողովին մասնակցել չկարողանալու դեպքում, մասնակցում է թեմի հոգևորականության ընտրյալ հոգևորական ներկայացուցիչը։

10. Ազգային-եկեղեցական ժողովի անդամ են Ս. Էջմիածնի, Մեծի Տանն Կիլիկիո, Ս. Երուսաղեմի միաբանության, Կոստանդնուպոլսի Պատրիարքության մի-մի ներկայացուցիչները։

11. Ազգային-եկեղեցական ժողովի անդամ կարող են լինել ժողովրդից ընտրված 30 տարին լրացրած իրավասու ծխականները։

12. Յուրաքանչյուր թեմի ժողովուրդ մասնակցում է Ազգային-եկեղեցական ժողովին իր ընտրած մեկ կամ ավելի պատգամավորներով։

13. Մինչև 25.000 ժողովուրդ ունեցող թեմը ընտրում է մեկ պատգամավոր. յուրաքանչյուր թեմ ընտրում է այնքան պատգամավոր, որքան անգամ 25.000 ժողովուրդ է պարունակում իր մեջ։

Վերջին 25.000-ը կարող է լրիվ չլինել, բայց ոչ պակաս 10.000-ից։

Սանոթություն Ա.— Յուրաքանչյուր թեմ իր ընտրելի պատգամավորների թվով ընտրում է անձնափոխանորդներ, որոնք փոխարինում են պատգամավորին, եթե նա որևէ պատճառով անկարող է անձամբ մասնակցել ժողովի։

Սանոթություն Բ.— Յուրաքանչյուր թեմ վիճակագրության հիման վրա բաժանվում է շրջանների այն հաշվով, որ յուրաքանչյուր շրջան բաղկանա 25.000 ժողովրդից։

14. Ազգային-եկեղեցական ժողովի թեմական պատգամավորների ընտրության մասնակցում են հոգևորականները և քաղաքացիական չափահասություն ունեցող աշխարհական իրավասու ծխականները։

15. Յուրաքանչյուր 5.000 շունչ ունեցող համայնքը ընտրում է մի պատվիրակ։

Սանոթություն.— Փոքր համայնքները ըստ հարմարության միացվում են պատվիրակ ընտրելու համար։

16. Պատվիրակները պատգամավորին կարող են ընտրել իրենց միջից կամ դրսից։

17. Ազգային-եկեղեցական պատգամավորների, անձնափոխանորդների, պատվիրակների ընտրությունը ՍՍՌ Միության սահմաններից դուրս գտնված թեմերում կատարվում է ըստ տեղական գործող հայոց կանոնադրությունների, սահմանադրությունների և կամ ավանդական կարգերի, հրահանգվելով սույն կանոնադրությամբ։

18. Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների ընտրության առթիվ ծագած ամենատեսակ տարակուսանքների լուծումը տալիս է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը։

19. Կարիք եղած դեպքում Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհուրդը տալիս է հարկավոր բացատրություններ և հրահանգներ, իսկ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքությունները վճռում են իրենց ներքին կանոնադրության համաձայն։

20. Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան դեպքում Կաթողիկոսի ընտրության համար Ազգային-եկեղեցական ժողով հրավիրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահը Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհրդի հետ։

21. Նոր Կաթողիկոսի ընտրությունը տեղի է ունենում Կաթողիկոսի մահվանից ոչ շուտ քան վեց ամիս հետո։

22. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը կատարվում է Ս. Էջմիածնի Տաճարում, սույն կանոնադրության 6-րդ հոդվածի համաձայն։

23. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության կարգը որոշում է Ազգային-եկեղեցական ժողովը։

Սույն կանոնադրությունն ընդունված և վավերացված է 1945 թվականի հունիսի 19-ին տեղի ունեցած Ազգային-եկեղեցական ժողովի երրորդ նիստում։

ԴԻՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ–ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ս. էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով, սեպտեմբերի 25—30-ը հրավիրվում է Մայր Աթոռ Ս. էջմիածնում, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու գերագույն կանոնադիր մարմինը՝ Ազգային-եկեղեցական ժողովը, որը զբաղվելու է Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք-Կաթողիկոսի ընտրության հարցով:

Այս առթիվ սրտագին շնորհակալության և երախտագետ սրտի ամենավառ ու անկեղծ զգացմունքներ ունի Մայր Հայրենիքի և Սփյուռքի ողջ հայությունը Սովետական բարեխնամ կառավարության և հայրենի հարազատ պետության այս նոր ու բացառիկ բարյացակամության համար, որով թույլ է տրվում Ազգային-եկեղեցական ժողովին հավաքվել հայրենի ազատ սահմաններում և նույնքան ազատ պայմաններում ընտրել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Գերագույն Պետին:

Սգի մեջ է դեռևս Մայր Աթոռը... 1954 թվականի մայիսի 9-ին ի Տեր հանգյավ երանաշնորհ ու աստվածարյալ Հայրապետ Ն. Ս. Օծությունն Տ. Տ. Գեորգ Զ. Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք-Կաթողիկոսը:

Երջանկահիշատակ և հավետ ողբացյալ, անմոռանալի Վեհափառ Հայրապետի մահից հետո սգի սև շղարշը չի վերացվել այրիացյալ Մայր Աթոռից:

Սեռ էր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կորուստը: Վեհափառի մահով հայ ազգային-եկեղեցական կյանքից մի մեծ ու անկրկնելի, իմացական ու բարոյական հազվագյուտ ձիրքերով հարուստ անձնավորություն ընկավ ու գնաց հավերժի գիրկը:

Ողջ հայ ժողովուրդը անկեղծ վշտով ողբաց իր հայրենասեր ու մեծագործ Հայրապետի դառնաղետ մահը, որովհետև մեր սիրելի ու պաշտելի Հայրապետի բանկագին անունն ու գործը սերտորեն առնչված են եղել հայ ժողովրդի պատմության վերջին հիսնամյակի ազգային-եկեղեցական մեծ իրադարձությունների հետ: Վեհափառ Հայրապետը իր անկաշառ հայրենասիրությամբ, ժողովրդանվեր գործունեությամբ, իր առաքինազարդ ու անբասիր կենցաղով, Հայ Եկեղեցու նկատմամբ ունեցած իր անսահման սիրով ու նվիրվածությամբ, մեր պատմության մեծ հոգևորականների տեսիլքով և կերպարով, նվաճել էր ողջ հայության սերն ու վստահությունը:

Վեհափառի մահվան առթիվ արտահայտված համազգային մեծ սուգը արդյունք էր որքան Վեհափառի բարձր անձնավորության և անսակարկ արժանիքների, նույնքան և հայ ժողովրդի դեպի Ս. էջմիածինն ու Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետությունը ունեցած որդիական նվիրումի, երախտագիտության, սիրո և հարգանքի:

Սեռ էր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կորուստը: Վեհափառի մահով հայ ազգային-եկեղեցական կյանքից մի մեծ ու անկրկնելի, իմացական ու բարոյական հազվագյուտ ձիրքերով հարուստ անձնավորություն ընկավ ու գնաց հավերժի գիրկը:

Ողջ հայ ժողովուրդը անկեղծ վշտով ողբաց իր հայրենասեր ու մեծագործ Հայրապետի դառնաղետ մահը, որովհետև մեր սիրելի ու պաշտելի Հայրապետի բանկագին անունն ու գործը սերտորեն առնչված են եղել հայ ժողովրդի պատմության վերջին հիսնամյակի ազգային-եկեղեցական մեծ իրադարձությունների հետ: Վեհափառ Հայրապետը իր անկաշառ հայրենասիրությամբ, ժողովրդանվեր գործունեությամբ, իր առաքինազարդ ու անբասիր կենցաղով, Հայ Եկեղեցու նկատմամբ ունեցած իր անսահման սիրով ու նվիրվածությամբ, մեր պատմության մեծ հոգևորականների տեսիլքով և կերպարով, նվաճել էր ողջ հայության սերն ու վստահությունը:

Վեհափառի մահվան առթիվ արտահայտված համազգային մեծ սուգը արդյունք էր որքան Վեհափառի բարձր անձնավորության և անսակարկ արժանիքների, նույնքան և հայ ժողովրդի դեպի Ս. էջմիածինն ու Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետությունը ունեցած որդիական նվիրումի, երախտագիտության, սիրո և հարգանքի:

Ցկար Գանակալը, բայց կանգուն էր Գանը: Ս. Էջմիածինը, Ամենայն Հայոց Հայրապետությունը հայ ժողովրդի և Հայ եկեղեցու «միության արտահայտությունն է»,— գրել է Վենափառը: Անա թե ուր է գաղտնիքը այն զյուրիչ զորության և հրապույրի, որ ունեցել են Ս. Էջմիածինն ու Ամենայն Հայոց Հայրապետությունը հայ ժողովրդի համար:

Ս. Էջմիածի՜ն...

Պատմական ու հոյակապ այդ կոթողը հայ կյանքում կատարած իր ազգային-եկեղեցական-մշակութային բացառիկ դերով ու արժեքով՝ ճանդիսանում է հայ հավատացյալ ժողովրդի ամենանվիրական ուխտավայրերից հնագույնն ու համազգայինը:

Ս. Էջմիածինն ու Ամենայն Հայոց Հայրապետությունը «Հայի զգայուն սիրտն է եղել, որ դարեր շարունակ ապրել է նրա անհուն ցավերով և սակավ ուրախություններով: Ամենայն Հայոց Հայրապետությունը հայի ստեղծող միտքն է եղել, որ լուսավորված քրիստոնեական երկնային լույսով, ստեղծել է գրականություն և գեղարվեստ, նեկա հայի փառքն ու պարծանքը: Ամենայն Հայոց Հայրապետությունը՝ հայի ազնիվ և տոկուն կամքի արտահայտությունն է եղել, տալով առաքինության հերոսներ, աստվածային կամքի ճշմարիտ աշակերտներ» (Գեորգ Զ.):

Այսօր ևս չի ավարտվել Ս. Էջմիածնի, Ամենայն Հայոց Հայրապետության պատմական ու վճռական դերը հայ կյանքում: Ս. Էջմիածինը միշտ էլ իր քեռերի տակ առել ու պահպանել է հայ ժողովրդին, «որպէս հաւ զճագս իւր»:

Անա թե ինչո՞ւ հազարամյակներով և մինչև այսօր Ս. Էջմիածնի անունն ու խորհուրդը նվիրական ու թանկ են եղել ամեն մի հավատացյալ հայ մարդու սրտի համար: Ս. Էջմիածնին նայել ու պաշել, կռվել ու ստեղծագործել են մեր անմոռ նախնիքները:

Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ ԽՏԱՑՈՒՄՆ է ՀԱՅ ՀՈԳՈՒ ԹՌԻՉՔԻ, ԽՈՐԸ ՀԱՎԱՏՔԻ, ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ, ԵԿԵՂԵՑԱՍԻՐՈՒԹՅԱՆ: Նա հայ հոգու քարեղեն երգն է, քարեղեն աղոթքն ու մրմունջը հայ հավատավոր հոգու՝ դեպի երկինք, դեպի Աստված, դեպի կատարելություն իր խոյանքի մեջ արձանացած ու հավերժացած...

Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությունը մեծ ու պատմական իրադարձություն է հանդիսացել միշտ մեր ազգային-եկեղեցական կյանքում:

Կասկած չունենք, որ այս անգամ ևս Ս. Էջմիածնում գումարվելիք ազգային-եկեղեցական մեծ ժողովը, բացառիկ ու պատմական երևույթ կհանդիսանա մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ, որին կմասնակցեն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքության, մեր բոլոր թեմերի պատգամավորները, և որ մի անգամ ևս կհնչեցվի ի լուր աշխարհի որ՝ Մի է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և մի է Հայոց Հայրապետությունը. «Մի է Հայրն մեր, մի և միակոյս ազգն Հայոց» (Հովհան Երզնկացի):

Արդարև, քրիստոնեական ո՛չ մի եկեղեցի ո՛չ մի ուրիշ ժողովրդի կյանքում այնքան վճռական ու հակատագրական դեր չի կատարել, որքան Ս. Էջմիածինը հայ ժողովրդի կյանքում: Ս. Էջմիածինը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիների Մայրը, նախամեծար Արարատյան Մայր Աթոռը, «հաստատեալ և պայծառացեալ ի տեղին իջման Միածնին», հանդիսացել է ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ, ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԱՐԻՍԿԸ:

Երջանկահիշատակ և երանաշնորհ Հայրապետի մահից մոտավորապես մեկ տարի հետո, Մայր Աթոռում հրավիրվում է Ազգային-եկեղեցական մեծ ժողովը, որը կընտրի նոր կաթողիկոսը և կգրաղվի օրակարգում դրված ազգային-եկեղեցական հրատապ հարցերով, հարցեր, որոնք կշոշափեն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կենսունակության, զորացման, պայծառության խնդիրները:

Բովանդակ հայ ժողովրդի, մեր հոգևորականության, ազգային-եկեղեցական թեմերի, մասնավի ՊԱՏՎԻ, ԽՂՃԻ, ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆ է՝ Հայրապետական գահի վրա ընտրել այնպիսի մեկին, որ վառ պահի հայ երկնակամարի վրա և հայ հավատավոր սրտերում լուսա-

վորչի միշտ պլպլացող սուրբ կանթեղը և նախնյաց հայրենասիրական ու էջմիածնասիրական բոցավառ ոգին ու վառ զգացումները, ընտրել իմաստուն, փորձված, արժանավորագույն հոգևորականին, որ այսօրվա բարդ ու դժվար պայմաններում կարենա բարձր պահել Ամենայն Հայոց Հայրապետության վեհիրավ գերագահությունը, Ս. էջմիածնի դարավոր պատմական Աթոռի շքեղությունը, որ կարենա խորացնել Մայր Աթոռի և մեր եկեղեցու մյուս նվիրապետական Աթոռների և թեմերի սրտագին փոխհարաբերությունը, ազգային-եկեղեցական անքակտելի միասնությունը, նախանձախնդիր լինի նախնյաց ոգով և հավատքով, աչքի լույսի պես պահել-պահպանելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաքելանվաստ կարգն ու կանոնը, մեր եկեղեցուն հատուկ դարավոր ազգային սրբազան ավանդությունները, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ինքնուրույնությունը, ազգային նկարագիրը, ուղղափառությունը, ժողովրդական սկզբունքները, ժողովրդանվեր և հայրենանվեր ոգին:

Հարկ է մանավանդ այս ընտրությունը ավելի կազմակերպված անցկացնել ազգային-եկեղեցական տեսակետից, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՎ: Պատմական այս ընտրությունը հարկ է մի անգամ ևս վերածել հայ ժողովրդի միասնականության և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միության տոնի, հայ ժողովրդի սիրո և հարգանքի, խմբվածության տոնի իր Մայր Աթոռ Ս. էջմիածնի, նրա նորընտիր և արժանավոր Գահակալի և հայրենի հարազատ պետության շուրջ:

Այս պատմական ու մխիթարական սրապնդիչ օրերին, չկան և չեն կարող լինել ավելի բարձր շահեր, քան Հայ եկեղեցու, հայ Հայրենիքի, հայ ժողովրդի գերագույն ու նվիրական շահերը:

Մայր Աթոռում ստեղծվել է Համազգային կենտրոնական հանձնաժողով, որն զբաղվելու է կաթողիկոսական ընտրության հետ առնչված կարևոր բոլոր հարցերով, այդ թվում նաև կաթողիկոսական արժանավոր թեկնածուների առաջադրման հարցով:

Այսօր ավելի քան երբեք, այս հայրապետական ընտրության առթիվ, պետք է դրսևորվի բովանդակ հայ ժողովրդի, մեր ազգային-եկեղեցական թեմերի և թեմակալների, մասնավորապես, հայրենակցական կազմակերպությունների կամքի, ձգտումների, գործողությունների միասնությունը, որպեսզի ազգային միածայն ընտրությամբ վերանա սգի սև շղարշը այրիացյալ Մայր Աթոռից և հայ սգավոր սրտերից, կրկին ուրախանա և պայծառանա Հայաստանյայց Առաքելական եկեղեցին և Ազգի սիրով և վստահությամբ շրջապատված՝ նոր Հայրապետը հովվի իր խնամքին հանձնված իր հայրենասեր ու հավատացյալ ժողովրդին:

Մենք վստահ ենք, որ Ազգի և Հայ եկեղեցու անունից Ս. էջմիածնում հավաքվելիք մեր ազգային և եկեղեցական պատգամավորները կմնան իրենց պարտականության բարձրության վրա Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության հարցում:

Հայրապետական ընտրությունից և օծումից հետո, ի մխիթարություն մեր պատգամավորների և հայ ժողովրդի, մեծահանդես շքով կկատարվի նաև հայ ժողովրդի սիրելի Սրբալույս Մեռոնի օրհնության մեծագույն և խորհրդավոր հանդեսը:

Ինչպես հայտնի է, երջանկահիշատակ Գեորգ Զ.ի սրտի ամենաջերմ բաղձանքն էր 1954 թվականի սեպտեմբեր ամսի 26-ին Ս. էջմիածնում կատարել Սրբալույս Մեռոնի օրհնություն: Այդ կապակցությամբ հրապարակվեցին Վեհափառի հեռագիրը, սրբատառ կոնդակն ու շրջաբերականը՝ ուղղված ողջ հայության: Բայց անողոք մահը շտապեց կտրել սիրելի և գործունյա Հայրապետի կյանքի թելը...

Լիահույս ենք, որ այս սեպտեմբերին, որպես ուխտավոր Ս. էջմիածին կգա հայ ժողովուրդը, կգան նրա պատգամավորները, համբուրելու ոչ միայն Լուսավորչի արժանավոր նոր հաջորդի Ս. Աջը, Սրբալույս Մեռոնի կաթսան, այլ նաև հայրենի սրբազան հողը՝ ողջագուրվելով Մայր Հայրենիքում ապրող իրենց բախտավոր հարազատների հետ:

Հայրապետական ընտրությամբ և օծման չափ նեռաֆրֆիր և հայ սրտերի մոտիկ ամենանվիրական ու համաժողովրդական, ազգային-եկեղեցական մեծաշուք ու խորհրդավոր տոնակատարություն է հանդիսացել Սրբալույս Մեռոնի օրհնությունը, Հայ Եկեղեցու դարերով սրբագործված այդ նվիրական խորհուրդը, որը միշտ էլ կատարվել է պատշաճ ու շքեղ հանդիսավորությամբ:

1926 թվականից նետո Ս. էջմիածնում չի կատարվել Սրբալույս Մեռոնի օրհնություն:

Լուսավորչի օրերից մինչև այսօր ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ԿԱԹՍԱՅԻ ՄԵՋ ԻՐ ԱՊԱԳԱ ԿՅԱՆՔԻ, ԻՐ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆ է ԴՐԵԼ: Սրբալույս Մեռոնի կաթսան հայ հավատացյալ ժողովրդի մեռոնաբույր սիրտն է, որովհետև «Սրբալույս Մեռոնը խորհրդանշանն է Հայ Եկեղեցու ՄԻՈՒԹՅԱՆ. դա նշանակում է, որ մենք ամենքս այդ եկեղեցու զավակներն ենք: Աշխարհի ո՛ր անկյուններում էլ լինենք, մենք ՄԻԵՎՆՈՒՅՆ զավակներն ենք մեր Առաքելական և Սուրբ Եկեղեցու» (Գարեգին Ա. Կաթողիկոս):

1955 թվականի սեպտեմբերի վերջերը և հոկտեմբերի սկզբները կոչված է նոր ու պատմական իրադարձություն հանդիսանալու մեր ազգային-եկեղեցական կյանքում նրանով, որ նորընտիր Հայրապետը, Ս. Լուսավորչի աջով, օրհնելու է Սրբալույս Մեռոնը:

1955 թվականի սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 8-ը ցնծառոն է հանդիսանալու, որովհետև «մեր նախնյաց և մեր ներկա Սրբություն Սրբոցը՝ հայ քրիստոնյա մարդու Լուսո Տաճարը՝ Մայր Աթոռ Ս. էջմիածինը՝ իր սրբություններով, և մեր ներկա Մայր Հայրենիքը՝ իր պատմական հուշարձաններով, որպես մագնիսական ուժ, կբերեն հայ հավատացյալներին ու կնամախմբեն պատմական Տաճարի շուրջը, կբերեն Սփյուռքի պատգամավորներին Հայրենիքի կարոտն առնելու, հայրենի երկրի անցյալ և ներկա հուշարձանները տեսնելու և ոգեշնչվելու Մեռոնի օրհնությամբ և արձագանքելու իր նախնյաց սրտառուչ զգացմունքին՝ «եկայք շինեսցուք սուրբ գխորանն լուսոյ» (Գեորգ Զ.):

Ու կգան աշխարհի չորս ծագերից մեր պատգամավորները՝ հարգելու Ս. էջմիածնի հազարամյա քարերն ու մեռոնաբույր սրբություններն, հայրենի հողն ու պատմական հուշարձանները, որոնց վրա հայ ժողովրդի մարի, սրտի, ձեռքերի մեռոնաբույր գեղեցկությունն է հավերժացել:

Ընդունված կարգի համաձայն, կաթողիկոսական ընտրությունից և օծումից նետո, նորընտիր Հայրապետը Սրբալույս Մեռոնով կկատարի իր առաջին եպիսկոպոսական ձեռնադրությունը, իր հայրապետական բարձր գնահատության արժանացնելով հայ ժողովրդի, Հայ եկեղեցու հոգևոր սպասին անձնվիրաբար ծառայող մեր արժանավոր հոգևորականությանը:

Ուրախ ենք արձանագրելու, որ հոգելույս Գեորգ Զ.ի Հայրապետության օրով սկսած Հայ եկեղեցու հոգևոր զարթոնքը շարունակվում է, և Հայ եկեղեցին, թե՛ Մայր Հայրենիքում, թե՛ Սփյուռքում, ապրում է մի նոր ու խոստումնալից վերազարթոնքի շրջան:

Պատմական անմոռանալի օրեր են լինելու, արդարև, Հայ եկեղեցու համար:

Թո՛ղ Տերը հավիտյան անսասան պահի Հայաստանյայց Առաքելական եկեղեցին և նրա դարավոր ու պատմական կենտրոն Ս. էջմիածինը՝ հայրապետական իր Աթոռով:



ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ*

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, ուր դարերով օրհնվել է Մեռոնը, հայ հավատքի համար հանդիսացել է ազգային-եկեղեցական վերնատունը, ուր հավաքվել է հայ հավատացյալ ժողովուրդը իր պատմության մռայլ օրերին, ընդունելու զօրացուցիչ, աստուածացուցիչ, միշտ ընդունող, սրբոյն Ս. Հոգու շնորհաբաշխությունը։ «Առջիք զօրութիւն ի հաստանել Հոգւոյն Սրբոյ ի վերայ ձերս։

Սրբալույս Մեռոնի կաթսայի առաջ իրար են հանդիպել մեր պապերի, մեր նահատակների, մեր հայրապետների հոգիները, մեր անցյալն ու ներկան իրար են գրկել, իրարմով ամրոզչանալու, զորանալու և բարձրանալու համար։ Սրբալույս Մեռոնի կաթսան հայ հավատացյալ և եկեղեցասեր ժողովրդի մեռնարույր սիրտն է, ուր հայ հավատքն ու հոգին, հայ կյանքը ընդհանրապես, օրհնվում, շատանում է և իրը մասունք բաշխվում բոլոր ժամանակների հայության։

Առաջին անգամ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի այս պատմական կամարների տակ, հայ հավատացյալ ժողովրդի ներկայության Սրբալույս Մեռոն է օրհնել մեր հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորիչը, և ամեն անգամ, երբ նոր Մեռոն օրհնելու համար հին Մեռոն ենք խառնում, հետն անցնում է Ս. Լուսավորչի օրհնած Մեռոնի խմորը նորին և այսպես, Սրբալույս Մեռոնը կապում է հայի ներկան հեռավոր անցյալի հետ։ «Նա իբրև իշանէին մարդիկն ամենայն և թագաւորն ի մկրտութիւն անդր ի ջուրն Եփրատ գետոյ... իւղն օծութեան զոր արկանէր Գրիգոր ի վերայ մարդկանն, շրջան առեալ ի մէջ գետոյն՝ շուրջ զմարդկամբն խաղայր... և քրիստոսեան դրոշմաւն առհասարակ ընծայեցուցանէր զամենեսեան լինել ամենեցուն Հոգւովն Սրբով» (Ագաթանգեղոս)։

Մենք դժբախտաբար պատմական մանրամասն տեղեկություններ չունենք այն մասին, թե Ս. Լուսավորիչը ե՞րբ և ի՞նչպես է օրհնել առաջին անգամ Սրբալույս Մեռոն՝ Մայր Աթոռում։ Սակայն մի բան պարզ է, որ գոնե 7-րդ դարի սկզբին, Ս. Մեռոնի օրհնությունը կատարվում էր նույն ձևով ինչպես այսորոր։ «Իւղագործաց արուեստի համաձայն, արդեն նախօրոք պատրաստվում էր «օծութեան իւղը, ամբողջ գիշերներ կատարվում էր հսկում, աղոթք, և ապա Հայրապետը մեծահանդես շքով օրհնում էր Սրբալույս Մեռոնը, իսկ եպիսկոպոսներն ու քահանաները, տարին մի անգամ, Հայրապետից ստանում էին Սրբալույս Մեռոնը Ավագ հինգշաբթի օրը՝ սեղան, եկեղեցի, խաչ օրհնելու և մկրտվածին դրոշմելու համար («Սահմանք Յովհաննու Իմաստասիրի»)։

* Շարունակված ամսագրի 1966 թվականի № VII-ից։

Ս. Էջմիածնից ակնդանարար շուր և մշտահոս աղբյուր է բխում, այսինքն Ս. Հոգու բազմապարգև շնորհքը, որ Աստվածագործ Մեռոնի միջոցով բաշխվում է բոլոր եկեղեցիներին, և հավատացյալների հոգիները նրանով ոռոգված՝ պարարտանում և պտուղ են տալիս...։ Ամեն օրենք, ամեն կարգ ու շնորհաբաշխություն, ամեն հոգեղեն քարոզ և վարդապետություն բխում է Էջմիածնից, այս Ս. Աթոռից, ինչպես աղբյուրից և ապա տարածվում, բաշխվում բոլոր եկեղեցիներին և եկեղեցականներին՝ Քահանայապետի ձեռքով, որ բոլորի գագաթն է և Աստվածագործ Սրբարար Մեռոնի շնորհքովը...։ Ինչպես որ մարմնավոր այգիներն ու պարտեզները ինչ որ ունեն և առաջ են բերում՝ շրով ոռոգվելուց է, այնպես էլ բոլոր եկեղեցիներն ինչ որ ունեն և առաջացնում են՝ Ս. Մեռոնի ոռոգման շնորհիվ է, որ Ս. Էջմիածնից է բխում» (Սիմեոն կաթողիկոս։)

Սրբալույս մեռոնի օրհնությունը ընդհանրապես կատարվում է ազգային-եկեղեցական մեծ տոներին՝ Համբարձման, Հոգեգալստյան, Ս. Էջմիածնի, Խաչի տոներին, և 7 տարին մի անգամ, նայած պահանջներին և կարիքներին։ Այսպես, վերջին ժամանակ, երջանկահիշատակ Գևորգ Դ. Հայրապետը Ս. Մեռոն է օրհնել 1868, 1872, 1878, 1882 թվականներին, Մակար Կաթողիկոսը՝ 1886 և 1890 թվականներին, Խրիմյան Հայրիկը՝ 1897 և 1903 թվականներին։ Վերջին Մեռոնօրհնությունը կատարվել է 1926 թվականին Գևորգ Ե.-ի օրով։

Քսանինը տարի է, ինչ Ս. Էջմիածնում տեղի չի ունեցել Սրբալույս Մեռոնի օրհնությունը, որի հետևանքով հայ հավատացյալ ժողովուրդը զրկվել է հոգեկան բարձր մխիթարությունից։

Ուստի պետք է սպասել, որ առաջիկա Մեռոնօրհնությունը լինի ավելի քան երբեք մեծահանդես, հոգեպարար, որի նմանը չկա հայ մարդու համար ո՛չ մի տեղ և ո՛չ մի առթիվ։ Ու այդ մեծագույն ու խորհրդավոր հանդեսը դիտելու համար Մայր Աթոռ կփութա արտասահմանից և հայրենի երկրի հեռավոր ու մերձավոր դաղութներից ուխտավորների չտեսնված մի բազմություն։

***

Հոգեկան բավարարություն տալու համար այն հավատացյալներին, որոնք զանազան պատճառներով չպիտի կարենան ներկա լինել Սրբալույս Մեռոնի օրհնության հոգեպարար հանդեսին, մենք պիտի չանանք այստեղ խոսել Սրբալույս Մեռոնի պատրաստության կարգի մասին։

Մեր եկեղեցու Մեռոնօրհնության այժմյան կարգը շատ հին է։ Մեզ հասած մի շարք հին ձեռագիր մաշտոցների մեջ (13-րդ դար), գրեթե նույնությամբ առաջ են բերված բոլոր խրատներն ու ընթերցվածները, ինչ որ 1876 թվականի Ս. Էջմիածնում տպված մաշտոցումն է։

Այդ ձեռագրերում կա Մեռոնօրհնության ժամանակ գործածված նյութերի ցանկը, որոնք խառնվում են ձիթենու յուղի հետ Ս. Մեռոն պատրաստելիս։

Ահա այդ նյութերի ցանկը.

1. Բալասան հրեական կամ եգիպտական	Ի (20)	տրամ
2. Հար բալասան	ժ (10)	»
3. Մեխակ (զարանֆիլ)	ժ (10)	»
4. Հնդկական ընկույզ (ճավուզ Թուա)	ժ (10)	»
5. Խնկեղեղ (զասաք զարիե)	ժ (10)	»
6. Նարդոս հնդկական (սմբուլ հինդի)	ժ (10)	»
7. Գղպեղ Ջավայի (քաբաբիե)	ժ (10)	»
8. Շամբա լեղակ կամ սամիթ հունական (բասբասա ուրոմի)	ժ (10)	»
9. Մատաքատրոն (Սադեղ հինդի)	Ի (20)	»
10. Կինամոն (դարչին)	ժ (10)	»
11. Խունկ	ժ (10)	»
12. Հիլ կամ զրդիմանե	Ի (20)	»
13. Ստորաքս կամ բուխուր մերիեմ	ժ (10)	»
14. Սորյակ հլատ (լավր հինդի)	ժ (10)	»
15. Սանդալ սպիտակ կամ սանդալ ապենար	Ի (20)	»
16. Ջուր հասմիկի և այլ ծաղկանց	Ի (20)	»
17. Քրքում (զաֆրան կամ սաֆրան)	Ի (20)	»
18. Մարտակուշ (մերգենգյուլ	Ի (20)	»
19. Մահլաբ (քրքումի մի տեսակը)	ժ (10)	»
20. Վաղամեռուկ (իթխիրե Մեկկա)	Ի (20)	»
21. Կիպարիս (սյուլուտ ցյուրի)	ժ (10)	»
22. Ասարիոն (էզարուն)	ժ (10)	»
23. Ջրվարդ կամ բլբուլ վարդ (յաբանի գյուլ)	Ե (40)	»
24. Նրիցուկ (բաբունաջ)	Ե (40)	»
25. Մանուշակ	ՃԻ (120)	»
26. Ցուլիֆար կամ նունուֆար	ՃԻ (120)	»
27. Նարնջի ծաղիկ	Ե (40)	»
28. Գղպեղ սպիտակ (ֆլֆուլ)	ժ (10)	»
29. Վայրի կակաչի կամ կաչի տերև	Ե (40)	»
30. Մրտենու տերև	Ե (40)	»
31. Նարգիզ (ներգիզ, որ է նրշես)	Ե (40)	»
32. Գտուղ դափնվո (հար-բլ-զար)	Ի (20)	»
33. Նյուման, որ է կաուլի ծաղիկ—ըստ բավականին		
34. Լատեն	ժ (10)	տրամ
35. Կուճապղպեղ (զենջեֆիլ)	ժ (10)	»
36. Մազդաքի (սաղբզ)	Ի (20)	»
37. Ցուտ, որ է ծխանելիք	Ի (20)	»
38. Բալասան, որ է հեղուկ (բելսանկ)	ՃԻ (120)	»



ԻՋՄԱՆ Ս. ՍԵՂԱՆԸ

39. Ամբար	Ն (5)	»
40. Մուշկ	Ե (5)	»
41. Սմբուլ խաթայի	Ժ (10)	»
42. Արմատ մանուշակի (մանավշի ցոլք)	Ժ (10)	»
43. Մատուտակ, հոռոմ խունկ, որ է միա	Ժ (10)	»
44. Նարնջի ծաղկի ջուր	Ի (20)	»
45. Վարդի ջուր	Ծ (50)	»
46. Ծղոշի ծաղիկ	Խ (40)	»

Այս նյութերը՝ անուշահոտ խնկեղեններ, ծաղիկներ, անուշահոտ բույսերի արմատներ, ծաղկաջրեր, յուղային հյութեր և տերևներ են։ Բացարձակ անհրաժեշտություն չէ անշուշտ այս բոլոր նյութերի գործածությունը Մեռոնօրհնեքի ժամանակ։ Սրանց մեջ կան երկրորդական կարևորությամբ նյութեր, որոնք ժամանակի ընթացքում կամ ավելացել են և կամ պակասել։

Ինչպես միշտ, այս անգամ ևս Սրբալույս Մեռոնի ծաղիկները, արմտիքն ու անուշահոտ յուղերը տրամադրել է Իրանա-Հնդկաստանի թեմը իր նախկին առաջնորդի միջոցով, իսկ կարևոր ձիթապտղի յուղը նվիրաբերել է Հունաստանից հավատացյալ Ա. Ա. Գալփաքյանը։

Սրբալույս Մեռոնի պատրաստության մեջ ամենակարևոր տարրը, թե՛ մեր և թե՛ մյուս եկեղեցիների համար, բալասանն է — փշատանման մի ծառի կեղևի տակից ծորող անուշահոտ հեղուկ, որը առաջ բերվում էր Ս. Երկրից՝ Պաղեստինից, իսկ վերջերս՝ Հնդկաստանից, որովհետև այստեղից բերվածը ավելի անուշաբույր է։ Բալասանը պահանջում է մասնավոր պատրաստություն։ Առաջուց կտավատի մաքուր ձեթի մեջ լուծում են այն և մի փոքր կաթսայում էլ՝ ձիթենու մաքուր յուղը, եռացնում են առանձին-առանձին, և ապա տաք-տաք երկուսը իրար խառնում որ զանգվեն, և առանձին պահում մինչև Մեռոնօրհնության օրը։ Մյուս նյութերից կոշտերն էլ լավ ծեծում, մանրացնում են և մաղում, ապա վերցնում են չափավոր մի կաթսա, ներսից խմորով ծեփում, մեջը ձիթենու յուղ և գինի լցնում, հետո բոլոր պատրաստած նյութերը, բացի բալասանից, լցնում կաթսայի մեջ, կաթսայի բերանը ծածկում և եփում, եռ գալուց հետո կրակը պակասեցնում են, և 2 օր շարունակ եփում են մաղմաղ կրակի վրա, երբեմն խառնելով, որ չկպչի տակից։ Ապա վերցնում են և երկու օր թողնում, որ մի լավ պարզի։ Ապա մաքուր կտավներով քամում և մասնավոր անոթների մեջ պահում մինչև Մեռոնօրհնության օրը։ Այս բոլորը կատարվում է Հայրապետի հրամանով, Մայր Աթոռի ավագ լուսարարի և իր օգնականների միջոցով։



Ս. Գեղարդը

Սահմանված օրից քառասուն օր առաջ, Ս. Մեռոնի կաթսան, ձիթենու մաքուր յուղով լի, դրվում է Մայր Տաճարի Ավագ Սեղանի վրա, խաչածայր կափարիչով և 7 շար ծածկոցով ծածկած։ 40 օր շարունակ երեկոյան ժամերգությունից հետո պաշտոն է կատարվում շարականներով, քարոզ-աղոթքներով, ընթերցվածներով։ Մեռոնօրհնեքի նախատոնակին՝ գիշերը հսկում է կատարվում։

Հետևյալ օրը լինում է Մեռոնօրհնության հանդիսավոր շնորհաշխությունը։

Պատարագիչն է լինում Վեհափառ Հայրապետը, որը Վեհարանում զգեստավորվում է հայրապետական շքով և աստիճանով, ինչպես նաև 12 եպիսկոպոսները զգեստավորվում են ըստ պատշաճի Վեհարանում։ Այդտեղ են հավաքվում նաև սարկավագները, դպիրները, կերոնակիրները, քշոցակիրները, ողջ եկեղեցական թափորը, որը կմասնակցի Ս. Մեռոնօրհնության և սուրբ պատարագին։

Միաբանությունը և ամբողջ հոգևորականությունը, շուրջառագդեստ, երկշար կանգնում են Վեհարանի դարբասի մոտ, ընդառաջելու Վեհափառ Հայրապետին։

Վեհափառ Հայրապետի ձեռքին լինում է խաչ և գավազան, իսկ 12 եպիսկոպոսները երկշարք, 6-ը Վեհի աջ կողմից, իսկ 6-ը՝ ձախ կողմից վերցնում են մասունքներ։

Թափորը շարժվում է առաջ Վեհարանից դեպի Մայր Տաճար, այս կերպ.

1. Առջևից գնում են խաչվառակիրները, կերոնակիրները, խաչակիրները, ապա դպիրները։

2. Կարմրազգեստ երկու շաթիրներ (բարապաններ) իրենց գավազաններով։

3. Երկու վարդապետներ տանում են հայրապետական խաչը և գավազանը։

4. Միաբանությունը և հոգևորականությունը՝ շուրջառազգեստ։

5. Վեհափառի աջ կողմից գնացող եպիսկոպոսների ձեռքին լինում են Ս. Ավետարան, Ս. Մեռոնի նյութերի անոթը, Ս. Արիստակես հայրապետի աջը, Ս. Հակոբ Մծբնա հայրապետի աջը, Ս. Գրիգոր Լուսավորչի աջը և Կենաց փայտը։

Ձախ կողմից եպիսկոպոսները տանում են բալասանի անոթը, հին Մեռոն մեռոնաղավնիով, Ս. Հակոբ Ալփայի աջը, Ս. Թովմաս առաքյալի աջը, Ս. Թադեոս առաքյալի աջը և Ս. Գեղարդը։

6. Վեհարանից դուրս գալով, Վեհափառ Հայրապետը մտնում է ամպհովանու տակ, որը տանում են չորս պատվավոր մարդիկ (հին ժամանակներում՝ իշխանները)։ Երկու բուրվառակիր վարդապետներ խնկարկում են Վեհին, մինչ քշոցակիր չորս սարկավագներ շարժում են քշոցները։ Հայրապետի առջևից տանում են հայրապետական քողը։ Վեհափառ Հայրապետի ետևից գնում են լուսարարապետը, գավազանակիրները (ասայակիրները) և երկու քղանցքակիր վարդապետներ։

7. «Տերհուրդ խորհնա» շարականի երգեցողությամբ և Մայր Տաճարի զանգերի զանգահարությամբ թափորը մտնում է Տաճար։ Ավագ Ս. Սեղանի առաջ Վեհափառ Հայրապետը լվացման կարգն է կատարում, և ապա 12 եպիսկոպոսների առաջնորդությամբ բարձրանում է բեմը։ Սկսվում է հայրապետական մեծաշուք պատարագը։

Սուրբ պատարագի ժամանակ երեք եպիսկոպոսները սպասարկում են Վեհափառին կարգով, մեկը կարդում է Ավետարանը, մյուսը՝ ասում է «Հավատամքը», իսկ երրորդը վերաբերում է անում։

Ըստ հնավանդ սովորության՝ Մայր Տաճարի հյուսիսային խորանում՝ Ս. Ստեփանոսի սեղանի վրա պատրաստվում է Ս. Հաղորդության ընծայից սկիհը, հին Մեռոնը և նոր Մեռոնի պատրաստած նյութերը։

Երկու եպիսկոպոս իրենց ձեռքը վերցնելով հին Մեռոնի անոթը և նոր Մեռոնի նյութը շարժվում են առաջ. դրանց ետևից վերաբերում անող եպիսկոպոսը, սկիհը ձեռքին, քշոցակիրների, կերոնակիրների և բուրվառակիր սարկավագների խնկարկությամբ շարժվում են դեպի Հովհաննու Մկրտչի սեղանը և այնտեղից դեպի ավագ սեղանը։

Մեռոնի անոթները դրվում են հատկապես դրանց համար պատրաստված սեղանի վրա և սկիհը ընծայաբերվում է Վեհափառ Հայրապետին։

Միշտ էլ Տաճարում խռնված բազմության միջով անհնարին է լինում այս ձևով կատարել կարգը, դրա համար էլ վերջերս սովորություն է դարձել, հին Ս. Մեռոնը և նոր պատրաստված նյութերը, այլ սրբություններ հետ, նախապես թափորով բերել Վեհարանից և դնել Ավագ Սեղանի վրա, դրանց համար հատուկ պատրաստված սեղանի վրա, իսկ վերաբերումը կատարել Ս. Սեղանի վրա։

Պատարագը նույն հանդիսությամբ և հոգեպարար վեհությամբ շարունակվում է մինչև «Ողջույն»։ «Ողջույնի» ժամանակ Վեհափառ Ս. Հայրապետը բազմում է բեմում դրված հայրապետական իր աթոռի վրա՝ շրջապատված 12 եպիսկոպոսներով. և ահա սկսվում է Ս. Մեռոնի օրհնության կարգը։



Ս. Թադեոս առաքյալի աջը

Եպիսկոպոսները կարգով կարդում են սուրբգրական ընթերցվածները, Ավետարանները, իսկ Վեհափառ Հայրապետը՝ Մեռոնօրհնության հատուկ աղոթքները։

Գրքերի, Ավետարանների և աղոթքների ընթերցումից հետո, լուսարարապետը բացում է Ս. Մեռոնի կաթսայի կափարիչը։ Վեհափառ Հայրապետը լցնում է կաթսայի մեջ նախ ծաղիկների նյութերը, ապա բալասանը և վերջում՝ հին Մեռոնը, մինչ խումբը երգում է բեմի վրա «Առաքելոյ Աղանոյս» շարականը ու հին Մեռոնի ոսկի կաթիլները թափվում են նոր Մեռոնի մեջ...։

Ապա Հայրապետը առնելով նախ Կենաց Փայտը՝ տյառնագրում է նոր Մեռոնը։ Նույն ձևով տյառնագրում և խառնում է Մեռոնը՝ Աստվածամուի։ Ս. Գեղարդով, Ս. Գրիգոր Լուսավորչի աջով, մինչ Մայր Տաճարի կամարների տակ թնդում է հանդիսավոր ու տպավորիչ շեշտերով եպիսկոպոսների «Օրհնեսցի և սրբեսցիս», և դպիրների «Ամէն ալէլուիա»։

Ապա Վեհափառ Հայրապետը կարդում է Մեռոնօրհնության հատուկ աղոթքները, վերջում՝ ավագագույն եպիսկոպոսը՝ Ավետարանը և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»ով ավարտվում է Ս. Մեռոնօրհնությունը։ «Ողջոյնով» շարունակվում է նորից սուրբ պատարագը։

Սուրբ պատարագը ավարտվելուց հետո, եպիսկոպոսները մասունքները ձեռքին, ամբողջ եկեղեցական դասը թափոր կազմած նույն հանդիսավոր ձևով, «Որ զշնորհս աստուածային» շարականը երգելով, ուղեկցում է Վեհափառին մինչև Վեհարանի դարբասը, որտեղ Վեհափառը «Պահպանիչ»ով օրհնում է ժողովրդին և արձակում։

Ս. Մեռոնի կաթսան, շղարշով ծածկված, 7 օր մնում է Ավագ Սեղանի վրա՝ ի համբույր հավատացյալների և ուխտավորների։

***

Ահա իր ամփոփ գծերի մեջ Ս. Մեռոնի շնորհաշարշխության իմաստը և այն հոգեպարար հանդեսի նկարագրությունը։

«Օրէնք ի Սիոնէ ելցեն»։

Հայ հավատացյալ ժողովրդի համար Ս. Էջմիածինը՝ Հայաստանյաց Առաքելական Օկեղեցու այդ պատմական ու ամենահին կոթողը՝ հանդիսացել է հազարամյակներով իմանալի Սիոնը, որը լույս, ուղղություն, ճանապարհ է ցույց տվել հայ հավատացյալ ժողովրդին նրա պատմության մռայլ ու ճակատագրական օրերին, և հասցրել այսօրվա խաղաղ նավահանգիստը։

Ս. Էջմիածինը հայ ազատատենչ ու լուսաբաղձ հոգու, հայ հավատքի, հայրենասիրության մարմնացումն է եղել, որին նայել, աղոթել, ստեղծագործել, ապրել ու մեռել է հայ հավատացյալ ժողովուրդը։ Ահա թե ինչու հայ ժողովուրդը, իր հոգու ամբողջ ջերմությամբ, իր հոգու բոլոր թելերով կապված է մինչև այսօր էլ Ս. Էջմիածնի անվան ու խորհրդի հետ։

Դարերի տառապանքներից, ծանր մղձավանջներից հետո, այսօր, հայրենի պետության ազատ սահմաններում, դեն ու պայծառ է հայության Սրբություն Սրբոց Ս. Էջմիածինը, «Հայոց Ազգի Աթոռը և Քրիստոսի հատուկ սիրելին... կենդանի ջրի միակ աղբյուրը և ջրհորը՝ որը ահա բաշխում է բոլոր հայության հոգևոր ոռոգումը, կենդանարար ջուրը՝ Ս. Մեռոնը... որ ձեր հոգին ու մարմինը պիտի լուսավորեա (Սիմեոն Կաթողիկոս)։

Շնորհաշարշխության այս ուրախ օրերին, ողջ հայ հավատացյալ ժողովրդի սրտագին աղոթքն ու ցանկությունն այն է, որ միշտ կանգուն ու պայծառ մնա Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որպեսզի հայության հոգում չմիջի աստվածային Ս. Հոգին, և Հայ Եկեղեցու իրականների առաջ միշտ պայծառ մնա Լուսավորչի սուրբ կանթեղը՝ որը դարեր շարունակ լույս է տվել Հայոց Աշխարհին։

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԸ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՎՈ ՊԵՏԻՆ ՀԵՏ

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԸ ԲԱՑԱՌԻԿ ՊԱՏԻՎՆԵՐՈՒ ԿԱՐԺԱՆԱՆԱ ՈՒԵՍՏՄԻՆԻՍՏՐԻ ԱԲԲԱՅԱՐԱՆԻՆ ՄԵՋ

ԲԱՑԱՌԻԿ ՊԱՏԻՎՆԵՐ ՈՒԵՍՏՄԻՆԻՍՏՐԻ ԱԲԲԱՅԱՐԱՆԻՆ ՄԵՋ

Ուեստմինիստրի Աբբայարանը բացառիկ դիրք մը կգրավէ Անգլիական Եկեղեցվո մեծ տաճարներու կարգին, որովհետև ան կպատկանի արքայական ընտանիքին և օրվան թագավորը կամ թագուհին իբրև գերագույն Պետը Անգլիական Եկեղեցվո, իր անմիջական իշխանութեան տակ ունի զայն։ Տաճարին և Աբբայարանին պատասխանատու գահերեցը կնշանակվի արքայական հրովարտակով և կախում չունի որևէ եպիսկոպոսե կամ արքեպիսկոպոսե, այլ միայն Վեհապետեն։ Այս առանձնաշնորհումը տրված ըլլալով Ուեստմինիստրի գահերեցին, զայն կդնե բացառիկ դիրքի մը վրա, Անգլիական Եկեղեցվո նվիրապետութեան մեջ, տալով անոր շատ ավելի մեծ ազդեցութիւն քան բազմաթիվ բարձրաստիճան եկեղեցականներ։

Աբբայարանի տաճարը 13-րդ դարուն կառուցված գոթական ոճի ամենեն ճոխ և հարուստ իրագործումներեն մին է։ Շենքին ներսը, սյունախուրձերու անվերջանալի շարքին ընդմեջեն իրենց դույներու հրաշալի զանազանութեան մեջ պսպղացող ապակեփեղկերով (vitrail) և քանդակներու նրբութեամբ, տարօրինակ մթնոլորտ մը կստեղծե այցելուին հոգիին մեջ, մթնոլորտ մը, ուր կրոնական զգացումը կվերացնե մարդը՝ դեպի աստվածայինը։

Երբ Տեղապահ սրբազանը, հոգեշնորհ Տ. Պսակ և հոգեշնորհ Տ. Շահե վարդապետները Աբբայարանի դարավոր շենքին կամարներուն տակեն հառաջանալով հասան տաճարին դուռը և մտան ներս, տարօրինակ զգացում մը համակեց զիրենք ու կանգառին՝ պատցնելու համար իրենց նայվածքները այդ զգացումը ստեղծող սյուներն ի վեր։

Եկեղեցվո պաշտոնյաներեն մի քանին գահերեցին առաջնորդութեամբ պատցուցին սրբազան հայրը հսկա տաճարին բոլոր կողմերը, ցույց տալով բազմաթիվ քանդակներն ու դամբարանները, որոնք կներկայացնեն Անգլիո հին թագավորներու և մեծ առաջնորդներու փառքը։

Ժամը 10.30-ին սրբազան հայրը զգեստավորվեցավ և մեծ թափորով առաջնորդվեցավ Մայր Տաճարի այն դասը, ուր տեղի ունեցավ Անգլիո թագուհիին թագադրությունը։

Հունիսի 29-ը, չորեքշաբթի օրը, երբ սրբազան հայրը մասնակցեցավ Ուեստմինիստրի արարողութեանց, պարզ օր մը չէր, այլ տոնն էր այդ եկեղեցիին, որ կառուցված է Ս. Պետրոս առաքյալի անվան. այդ պատճառով հավատացյալներու մեծ բազմություն մը փութացած էր լեցնել տաճարը, ունկնդրելու համար հանդիսավոր պատարագը և մասնավոր արարողությունը։

Երբ թափորը դաս բարձրացավ, եկեղեցվո գահերեցը սրբազան հայրը առաջնորդեց Ս. Սեղանի աջ կողմը գտնվող աթոռը և իր հետևորդ վարդապետները՝ անոր ետևի երկու աթոռները։

Արարողությունը սկսավ մեծահանդես թափորով մը, որուն կմասնակցեին դպիրներ, մեծ ու փոքր, ճերմակ հագած, զանազան մեծ դրոշներ և մոմեր բարձրացուցած, երեցներ զգեստավորված ճոխ հագուստներով, և գահերեցը։ Թափորը կանգ առավ չորս անգամ, եկեղեցվո չորս կողմը և յուրաքանչյուր անգամ երգվեցան մասնավոր շարականներ, ընկերակցությամբ մեծ երգեհոնին։ Հեռավոր կամարներու տակեն արձագանքող դպիրներու քառաձայն երգը և երգեհոնի լայն նվագը այն տպավորությունը կուտային, թե աննյութական աշխարհի մը մեջ փոխադրված ենք բոլորս։

Մեծ թափորին հաջորդեց հանդիսավոր պատարագը, երգված նույն քառաձայն երգչախումբին կողմե, ընկերակցությամբ մեծ երգեհոնին։

Այս բացառիկ հանդիսությունն ու պատիվը վայելելե ետք, սրբազան հայրը դարձյալ նախագահեց թափորին, որ դասեն դեպի ավանդատուն ուղղվեցավ։ Ապա՝ զգեստները հանելե ետք, ստորագրեց պատվո մատյանը և հրաժեշտ առավ։ Եկեղեցվո գահերեցը, իր պաշտոնական զգեստավորումով, ընկերացավ սրբազան հոր մինչև Աբբայարանի արտաքին դուռը և սպասեց այնտեղ մինչև ինքնաշարժի նստումը։

Այս եղավ այն երրորդ շատ բացառիկ պատիվը, զոր Անգլիկան Եկեղեցին ըրավ Հայոց Եկեղեցվո ներկայացուցիչին, Քենտրբերիի և Ս. Պողոս Մայր Տաճարի ընդունելություններեն ետք։

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՎՈ ՊԵՏԻՆ ՀԵՏ

Քենտրբերիի արքեպիսկոպոսը, որ գլուխն է Անգլիկան Եկեղեցվո, հատկապես հրավիրեց բարձրապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոսը՝ ճաշելու իրեն հետ, Լամբետ Պալասի իր բնակարանին մեջ, հուլիս 1, ուրբաթ կեսօրին։ Այս ճաշը կտրվեր սրբազան հոր մեկնումի առիթով։

Ճաշին ներկա էին արքեպիսկոպոսի քիչ թիվով բարեկամներ և Արքեպիսկոպոսարանի արտաքին հարաբերությանց պատասխանատու գերապատիվ Ուադամս։

Խոսակցությունը դարձավ առհասարակ Երուսաղեմի արդի կացության հետևանքով ստեղծված դժվարությանց շուրջ։ Քենտրբերիի արքեպիսկոպոսը, դոկտ. Ֆիշըր, մասնավոր կերպով հետաքրքրվեցավ Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի, միաբանության և գաղթականներու վիճակով ու հայտնեց իր անկեղծ փափագը ուժեղացած տեսնելու Հայոց Եկեղեցվո այդ դարավոր Աթոռը, որպեսզի կարենա շարունակել իր ստաքելությունը Ս. Տեղյաց մեջ։

Շատ սիրալիր այս խոսակցության ընթացքին, հայերենե անգլիերենի թարգմանն էր Հոդեշնորհ Տ. Պսակ վարդապետ Թումայան, որ շատ վարժ լեզվով մը կհաղորդեր Տեղապահ սրբազանին բացատրությունները՝ Քենտրբերիի արքեպիսկոպոսին։

Ճաշեն ետք, սրբազան հայրը այցելեց գերապատիվ Ուադամսի գրասենյակը և շնորհակալություն հայտնեց այն բոլոր կարգադրություններուն համար, որոնք եղած էին իր միջոցավ՝ հաճելի և օգտակար ընելու համար սրբազանին այցելությունը ի Լոնդոն։

Լամբետ Պալասի բակին մեջ սրբազան հայրը անգամ մը ևս հրաժեշտ առավ Քենտրբերիի արքեպիսկոպոսեն և լուսանկարվելե ետք միասին, քրիստոնեական երկու եկեղեցիներու բարձրաստիճան ներկայացուցիչները բաժնվեցան, ուրախ տրամադրությամբ։

(Բեյրութ, «ՁԱԲԹՈՆՔ» օրաթերթ, 17 հուլիսի 1965 թ.)

ՄԱՑՐ ԱԹՈՌՈՒՄ

Օգոստոսի 7-ին, կիրակի օր, Գերագույն Հոգևոր Խորհրդի կարգադրությամբ, Ս. Հռիփսիմեի տաճարում, հավատացյալների խուռն բազմության ներկայությամբ և Ս. Էջմիածնի միաբանության անդամների մասնակցությամբ, մատուցվեց հոգեհանգստյան հանդիսավոր սուրբ պատարագ՝ Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոնում վերջերս մահացած մեծանուն Գալուստ Կյուլպենկյանի հոգու հանգստյան համար։ Պատարագիչն էր բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն։

Հոգեհանգստյան հանդիսակատարության նախագահում էր Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, որ ընդարձակ դամբանականով դրվատեց հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանի և իր բարեհամբավ գերդաստանի՝ արտասահմանի հայերի կարիքները թեթևացնելու նպատակով կատարած բարերարությունները։

Սրբազանը սուրբգրական գեղեցիկ մեջբերումներով և պատկերավոր լեզվով խոսեց հանգուցյալ Կյուլպենկյանի բարերարության մասին։

«Մեծ, անվանի, հարուստ լինելու ձգտումը,— ասաց սրբազանը,— և՛ բնական է, և՛ հաճելի բոլոր մարդկանց համար, բայց ոչ ոք մեծ չի եղել ու չի կարող լինել, առանց հոգեկան առաքինության, առանց բարոյական իդեալների, մարդասիրական ու ազնիվ ձգտումների, առանց Աստուծու. «Զի ոչ եթէ ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա» (Ղուկ., ԺԲ 15)։

«Մեծանուն հանգուցյալը, որի թանկագին հիշատակը մեծարելու համար հավաքվել ենք այս սուրբ ու պատմական կամարների տակ, այն անհատներից էր, որ կարողացավ իշխել ու ղեկավարել այն հսկա ուժը, որ կոչվում է մամոնա։

«Հայ ժողովուրդը, Հայաստանյայց Առաքելական եկեղեցին ունեցել են մեծ ու սլաշտելի բարերարներ, որոնք իրենց անունն ու հիշատակը առհավետ կապել են հայ ժողովրդի, Հայ Եկեղեցու անվան ու պատմության հետ։

«Ս. Էջմիածնի հարազատ զավակ եկեղեցասեր Կյուլպենկյանի մահով, մի անուն ևս ավելացավ մեր բարերարների ցանկի վրա, բարերարներ՝ որոնք իրենց մտքի, հոգու, սրտի, քսակի բարիքներն են սերմանել ամեն քայլի վրա. «Որում շատ տուաւ, շատ պահանջեսցի ի նմանէ»։

Ապա սրբազանը հանգամանորեն կանգ առավ ընդհանրապես կեսարացիների և առանձնապես հանգուցյալ պարոն Գալուստ Կյուլպենկյանի անօրինակ ձեռներեցության վրա, նկարագրեց նրա կյանքի և գործունեության խիստ ուսանելի ուղին նրա ծնընդավայրն եղող Կեսարիայի (Թյուրքիա) Թալաս գյուղաքաղաքից մինչև Կոստանդնուպոլիս և ապա Եվրոպա, որտեղ նա կարողացել է աստիճանաբար բարձրանալ նավթարդյունաբերության գծով և հասել տնտեսական հզորության ներկա բարձրության։

Անդրադառնալով մեծանուն հանգուցյալի հայ ազգային կյանքին բերած մասնակցությանը, սրբազանը նշեց, որ նա որոշ բարե-

բարութիւններ է կատարել արտասահմանի հայերի հոգևոր, մտավոր և մարմնավոր կարիքների համար։ Նա է կառուցել Լոնդոնի (Անգլիա) հայոց Ս. Սարգիս եկեղեցին, նա է կառուցել Երուսաղեմի հայոց Պատրիարքարանի «Դուրյան մատենադարանը» և այլն։

«Հանգուցյալ բարերարը,— շարունակեց դամբանախոս սրբազանը,— հոգեւոյս Հայրապետին խոստացել էր իր հարստութիւնից բաժին հանել նաև Ս. Էջմիածնին։ Ըստ մամուլում եղած հաղորդումների, նա հարգելով իր այդ խոստումը՝ Ս. Էջմիածնին կտակել է 400.000 դոլար։

«Հանգուցյալը համոզված և գիտակից էջմիածնասերներից մեկն էր։ Նա ուներ թանկարժեք և հնագույն հնութիւններ, նկարներ, արվեստի գլուխգործոցներ, որոնք հիացմունք են պատճառել բոլոր այցելուներին։ Բայց նրա հայրենասեր սրտի համար ամենաթանկագին ու նվիրական սրբութիւնը եղել է այն արծաթյա տուփը, որի մեջ նա խնամքով, գուրգուրանքով, պաշտամունքով պահել է հանգուցյալ Վեհափառ Հայրապետ Գեորգ Զ.ի կողմից ուղարկված մի բուռ հայրենի հող՝ Մայր Հայրենիքից և Ս. Էջմիածնից։ Մեծանուն հանգուցյալը հաճախ իր մոտ այցելած հյուրերին ցույց տալով իր գրասեղանի վրա դրված այդ հայրենի հողով լցված սրբվակը, ասելիս է եղել. «Իմ հնագիտական հավաքածուների մեջ ամենաթանկագինն ու նվիրականը իմ սրտի համար, հայրենի հողով լիքը այս արծաթյա սափորն է, որի մեջ իմ սիրտը կա...»։

«Ես վստահ եմ,— ասաց վերջում սրբազանը,— որ նա, իր մահվան վերջին րոպեին, մտքով սլանում էր դեպի Ս. Էջմիածին, Մայր Հայրենիք, մինչ աչքերը տակավ փակվում էին կարոտն առնելով արծաթյա սափորի Հայրենի հողից...»։

Կյուլպենկյան մեծանուն և օրհնյալ գերդաստանի արևշատության համար եղած սրտագին բարեմաղթություններից հետո, վերջում սրբազանը օրհնեց մի անգամ ևս մեծանուն բարերարի խնկելի հիշատակը։

***

Ս. Աստվածածնի Վերափոխման տոնի բացառիկ բնույթը՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի ստվերաշատ շրջափակն էր քաշել-բերել հազարավոր հավատացյալներ, որոնք օգոստոսի 13-ի շաբաթ օրվանից սկսյալ գունդագունդ գալիս էին մոտակա և հեռակա գյուղերից, նույնիսկ մայրաքաղաք Երևանից, հարմարագույն տեղը գրավելու համար վանքի շրջափակում։ Չէ՞ որ խաղողօրհնեք էր տեղի ունենալու կիրակի օրը։ Չէ՞ որ նախնիքներից որպես ավանդ ու ժառանգ թողնված հոգևոր ուրախության օր էր եղել Աստվածածնի տոնը։ Ուխտավորները գալիս էին, իրենց հետ բերելով մատաղացու ոչխար, այծ, հավ և աղավնիներ։

Օգոստոսի 14-ի կիրակի օրը, վանքի բակը հորդում էր ամեն սեռի ու հասակի մարդկանցով։ Ոմանք մոմ էին վառում, ուրիշներ մորթված մատաղի միսն էին եփում, բաժանում։ Բայց այդ համատարած ուրախության վերևում սավառնում էր մի աներևույթ տրտմություն՝ երշանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետի մահվամբ Մայր Աթոռի կրած սուգի տրտմությունը։

Կեսօրից առաջ, ժամը 11-ին, ուխտավորների բազմությունը ցանցառանում է։ Պատարագը, որ տեղի է ունենում Ս. Հռիփսիմեի տաճարում, իրեն է քաշում ուխտավորներից շատերին։ Պատարագիչն է ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Արարողության ներկա է նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը։ Պատարագիչ սրբազանը, որին սպասարկում է Տ. Կոմիտաս վարդապետը, կատարում է խաղողօրհնեքի արարողությունը։ Օրհնված խաղողը ճաշակում են գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը, միաբանները և ներկա գտնվող հավատացյալները։

Պատարագից հետո, ուխտավորները վերադառնում են Մայր Տաճարի բակը, ուր եռուզեռն ու խանդավառությունը շարունակվում են օրինակելի կարգապահությամբ և օրվա վայել խորհրդավորությամբ։

***

Օգոստոսի 16-ին, Մոսկվայից Ս. Էջմիածին վերադարձան Հոգեշնորհ Տ. Վահան Գալամդարյան, Տ. Պարգև Գևորգյան և Տ. Հայրիկ Ավետիսյան աբեղաները, որոնք հոգեւոր Հայրապետի կարգադրությամբ չորս տարուց ի վեր սովորում էին Զագորսկի աստվածաբանական ճեմարանում։ Ուսմամբ, գիտությամբ և բարձր ձիրքերով օժտված երեք երիտասարդ աբեղաները, ժամանման օրից սկսյալ մտնում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գործուն ծառայության մեջ։ Ցանկանում ենք իրենց Ս. Հոգու շնորհը, կարողություն և հաջողություն։

***

Ս. Էմիածնի Մայր Տաճարը, որպես քրիստոնեական կրոնի հետ կապ ունեցող շենքերից ամենահինը, շարունակում է առինքնել Հայաստան այցելող ամենազգի տուրիստներին և էքսկուրսանտներին։

Օգոստոսի ընթացքում Ս. Էջմիածին այցելածների միջև հիշենք բրազիլիական ճարտարապետների պատվիրակությունը՝ գլխավորությամբ բրազիլիական ճարտարապետների վարչության անդամ Էլիո Լագե Ուշոա Կավալկանտին, Ռիգայից ժամանած մանկավարժների 60 հոգուց բաղկացած խումբը, ադրբեջանցի բժիշկ-բժշկուհիների 40—50 հոգուց բաղկացած խումբը և այլն։ Հարգելի հյուրերին բացատրություն էր տալիս Մայր Տաճարի ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը՝ մանրամասնորեն պատասխանելով նրանց վանքի պատմական անցյալին, ներկայումս կատարվող վերանորոգման, շինարարության, Ամենայն Հայոց Հայրապետության, Հայաստանյայց Եկեղեցուն և Հոգևոր Ճեմարանին վերաբերող հարցումներին։

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ-ԱՄՐՈՑԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏԵՂԸ*

§ 11

Վերջացնելով վանք-ամրոցի նկարագրությունը, փորձենք որոշել ամրոցի մեջ եղած կարևոր շենքերի կառուցման ժամանակը։ Այստեղ, իհարկե, որոշ թվականներ տալու մասին խոսք լինել չի կարող, որովհետև պահպանված սակավաթիվ արձանագրությունները թվագրեր չունեն։ Միակ թվագիրը, որը եղել է վանքի ժամատան մուտքի ճակատաքարի վրա, ներկայումս բոլորովին հողմահարված է։ Բարեբախտաբար, Ջալալյանի և թե նրանից հետո Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի այդ հուշարձաններն այցելելու ժամանակ, այդ թվագիրը պահպանված է եղել, այն է ըստ Ջալալյանի ՈՂԴ=1244 թ., իսկ ըստ Բարխուդարյանի՝ ՈՂԴ=1245 թ.[1]։ Այդ թվականը համընկնում է Առաքելոց բնակատեղում պահպանված մի քանի հուշարձանների վրա եղած թվագրերի ժամանակաշրջանին։ Համաձայն Ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի արխիվային տվյալների[2], բնակատեղի եկեղեցիներից մեկն ունեցել է շինության ՉԻԳ=1274 թ., մյուսը՝ ՉԻԹ=1276 թ., իսկ թեավոր խաչը՝ ՉԼԸ=1289 թ.։ Հետևապես առարկել չի կարելի, որ 1274—1289 թվականներից 30—45 տարի առաջ գոյություն ունեցած լինեն վանք-ամրոցի թե՛ գլխավոր եկեղեցին և թե՛ ժամատունը։ Այստեղ միջանկյալ պետք է նշել նաև, որ ժամատան մուտքի ճակատաքարի վրայի, Գրիգոր Խաչենիսյանցի կամ Խաչքենիսյանցի արձանագրությունը շինարարական բնույթ չունի, այլ նվիրատվական։ Ըստ երևույթին այդ նվիրատուն ապդեցիկ դիրքի տեր, կամ հարուստ մեկն է եղել, որ նրա բավական համեստ՝ երկու պատարագի արժեք ունեցող (80 դահեկանի, ըստ այդ ժամանակներում ընդունված սակագնի) նվերն արձանագրելու համար այդպիսի աչքի ընկնող տեղ են տվել։

Եթե 1244/5 թվականն ընդունենք իբրև ելակետ վանքի գլխավոր հուշարձանների շինության մոտավոր ժամանակը որոշելու համար, կարելի է անել հետևյալ եզրակացությունները։ ա) Ժամատունը գոյություն է ունեցել 1244/5 թվականին և շինված, առնվազն, այսինքն ամենաուշը 1242/3 թվականին, ընդունելով, որ հիշյալ արձանագրությունը փորագրված է մի երկու տարի հետո։ բ) Ժամատան շինարարությունը տևած կլինի 5 տարուց ոչ պակաս և քանի որ գլխավոր եկեղեցին շինված է եղել դրանից առաջ և այդ միջոցը միջին հաշվով 15—20 տարի ընդունելով, վանքի գլխավոր եկեղեցու շինարարությունը կընկնի 13-րդ դարի առաջին քառորդի սահմաններում։

Իհարկե, այս բոլոր թվերն էլ, բացառությամբ ժամատան արձանագրության թվականի, մոտավոր հաշիվներով են կազմված, որոնց իբրև արդարացում կարող են ծառայել նույն դարում (13-րդ դար) Իշևանի և հարևան շրջաններում կառուցված մի քանի այլ հուշարձանների շինարարության ընթացքը (շի-

---

* Շարունակված ամսագրի 1955 թվականի հուլիսի N-ից։

1. Մակար եպիսկոպոս Բարխուդարյանց, «Արցախ», Բաքու, 1895 թ., էջ 372։

2. Ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի հին քարտերը, որոնք կազմված են եղել այդ կոմիտեի գիտական քարտուղար Հ. Եղիազարյանի առաջնորդությամբ 1933 թվականի էքսպեդիցիայի ձեռք բերած նյութերի հիման վրա։

նարարական տեխնիկայի դրությունը) և այդ ժամանակաշրջանի տնտեսական և քաղաքական նման պայմանները, որոնց մասին մենք հիշատակել ենք «Էջմիածին» ամսագրի նախորդ տարիների համարներում (Իշխանի շրջանից՝ Մակարավանք, Դեղձնուտ, Շամշադինի շրջանից՝ Անապատ կամ Նոր-Վարագա վանք, Ալավերդու շրջանից՝ Բարձրաքաշ)։

Առաքելոց վանք-ամրոցի մնացած շենքերից երկրորդ եկեղեցու շինության ժամանակի մասին նույնպես կարելի է մոտավոր կարծիք հայտնել։ Մեր կարծիքով դա ամրոցի ամենահին շենքերից մեկն է, կառուցված իբրև ամրոցի եկեղեցի, վանքի գլխավոր եկեղեցու և ժամատան շինարարությունից առաջ։ Այդ կարծիքը հիմնավորում ենք հետևյալ հանգամանքներով։ Նախ՝ եթե հակառակն ընդունենք, վանքի գլխավոր, գեղեցիկ, ավելի ընդարձակ և կանգուն մնացած հուշարձանների առկայության դեպքում նման անշուք և ավելի փոքր մի նոր եկեղեցու շինությունը միանգամայն անտեղի կլիներ, մինչդեռ այդ անշուք եկեղեցու գոյության պայմաններում վանքի գլխավոր շենքերի կառուցումը, վանքը բարեկարգելու և ընդարձակելու նպատակով, միանգամայն տրամաբանական է։ Երկրորդ՝ այդ եկեղեցու տեղադրությունը տնտեսական շենքերին և բնակարաններին կից, ինքնին մի ապացույց է, որ ընդարձակվող վանքի կոմունալ շենքերը շինվել են հին և արդեն չօգտագործվող եկեղեցուն կից։

§ 12

Նախքան Առաքելոց վանք-ամրոցի հուշարձանների մասին մեր ասելիքը վերջացնելը, անհրաժեշտ ենք համարում նշել հուշարձանների այդ խմբի մի երկու ուշագրավ առանձնահատկությունները։



Սեղանատուն կամ խոհանոց

Խոսքը վերաբերում է վանք-ամրոցի հուշարձանների տեղադրությանը, դրանց շինարարության մեջ կիրառված ձևերին, կառուցողական միջոցառումներին ու հարտարապետական ձևավորմանը։

Նախ խոսենք տեղադրության մասին։ Առաջին իսկ ուշադիր հայացքից նկատելի է, որ վանք-ամրոցի բոլոր կարևոր և խոշոր օժանդակ շենքերը, որոնք մնացել են կանգուն և կիսավեր դրությամբ, շինված են ամրոցի պարիսպներին կից և հատկապես այն պարիսպներին, որոնք ավելի դյուրամատչելի կամ խոցելի են, այսինքն հյուսիսային, արևելյան և հարավային։ Իսկ, ընդհակառակը, արևմտյան, հեղեղատի ձորաեզրի համարյա

անմատչելի պարսպին կից շենքեր չկան, եթե չհաշվենք դրա երկու ծայրերին՝ հարավային և հյուսիսային՝ շինված ժամատան ու գավթի (հյուսիսում) և ընդունարան-դահլիճի (հարավում) այդ կողմին նայող ճակատները։ Անշուշտ, շենքերի այդպիսի դասավորությունը պատահական չէ և այդ արված է որոշ դիտավորությամբ։ Մեր կարծիքով, շենքերի նման դասավորությունը կատարված է իրար զուգորդված երկու նկատառումներով — տնտեսական և ռազմական։ Դրանցից տնտեսական հարցին կանդրադառնանք ստորև, իսկ ռազմական բնույթի շարժառիթները հասկանում ենք այսպես— խոշոր և ամուր շենքերը պարիսպներին կից կառուցելով նպատակ են դրել այդ պարիսպները ներսից ավելի ուժեղացնելու, միաժամանակ հարմարություն ստեղծելու, որ արտաքուստ կատարված հարձակումների ժամանակ ամրոցը պաշտպանողները հնարավորություն ունենան այդ շենքերի կտուրների վրա կանգնել և շարժվել, առանց այդ նպատակի համար հատուկ հարմարանք ստեղծելու։

Ինչպես այդ, նույնպես և մի շարք այլ փաստեր ցույց են տալիս, որ վանք-ամրոցի կառուցողները շինարարության միջոցների ծախսման գործում վերին աստիճանի խնայող մարդիկ են եղել — ա՛յս է երկրորդ առանձնահատկությունը։ Թվենք այդ փաստերը։ Վանքի գլխավոր եկեղեցու, ժամատան և գավթի շինարարության մեջ խնայողություն են ունեցել — եկեղեցուց մի պատ (հյուսիսայինը), ժամատան շենքում՝ երեք պատ (արևելյան, հյուսիսային և արևմտյան), իսկ գավթի շենքում՝ բոլորը, որովհետև արևելքից և հարավից, ըստ երևույթին, ընավ պատեր չեն եղել, այլ դրանց միացման անկյունում մի սյուն, որի վրա և հենվել են այդ կողմերից տանիքի թաղը կրող կամարները։ Հիշված բոլոր խնայված պատերի փոխարեն, բացառությամբ գավթի երկու պատերի, օգտագործվել են ամրոցի հյուսիսային և արևմտյան պարիսպների համապատասխան հատվածները, բավարարվելով միայն պարիսպների ժամատան և գավթի մեջ բացվող ճակատների սրբատաշ երեսպատումով։ Խնայողության նպատակով ավանդական պլանավորումից շեղում է կատարված նաև գլխավոր եկեղեցու կազմության մեջ, կրճատելով բեմի երկու կողմերում եղող խորանները (ավանդատները)։ Խնայողությունն ակնբախ է նաև եկեղեցու և ժամատան շենքերի մեջ արտաքուստ, որովհետև դրանք զարդաքանդակներ և գեղարվեստական այլ ձևավորում չունեն։ Նման խնայողություններ կան և կոմունալ շենքերում։ Այս բոլորը և դրանց նման այլ խնայողությունները, կամ միջոցների տնտեսարար ծախսումը, եթե չասենք ժլատությունը, ինքնին մի արտասովոր երևույթ է հայկական վանքերի շինարարության մեջ, ուստի և, բնականաբար, հարց է առաջանում, թե ո՞վ կամ ովքե՞ր կարող են եղած լինել այս վանքի հուշարձանների կառուցողները։ Համենայն դեպս մի բան պարզ է, որ դրանք երկրի իշխանները կամ ազնվատոհմ մեծահարուստ մարդիկ չեն եղել, որովհետև վերջիններս իրենց հիշատակը հավերժացնելու նպատակով, սովորություն ունեին եկեղեցիների շինարարության գործում մրցել միմյանց հետ։ Նրանցից յուրաքանչյուրը աշխատում էր իր հարևանից ետ չմնալ կառուցվածքի չափերով, ձևավորումով և արտաքին ու ներքին զարդարանքներով, կամ մի որևէ բանով աչքի ընկնել։ Իբրև օրինակ իշխանական այդպիսի առատաձեռնության, բավական է միայն կրկին հիշել Առաքելոց վանքի մոտակա հարևանությամբ եղած հետևյալ հուշարձանները — Ալավերդու շրջանի Թումանյան (Դսեղ) գյուղի մոտերքում Մամիկոնյան Մարծպան իշխանի և նրա որդիների շինած Բարձրաքաշ վանքի եկեղեցին և ժամատունը[1], Շամշադինի շրջանում՝ Նոր-Բերդի տեր՝ Բագրատունի Վասակ իշխանի շինած եկեղեցին[2], Իջևանի շրջանում, Առաքելոցի մոտիկ գտնվող Մակարավանքում, Բազազա իշխանի որդի Վարդանի շինած մեծ եկեղեցին և նույն վանքի վանահայր, իշխանական ծագում ունեցող Հովհաննիսի շինած Փոքր եկեղեցին[3]։

Կարելի է վստահությամբ ասել, որ Մամիկոնյան իշխանների շինած ժամատան, կամ Բազազա իշխանի որդի Վարդանի շինած եկեղեցու միայն զարդաքանդակներն ավելի ծախք և աշխատանք են պահանջել, քան թե Առաքելոց վանքի գլխավոր եկեղեցու շենքն ամբողջովին վերցրած։

Վերոհիշյալ կարծիքը հաստատող մի հանգամանք ևս կա, դա հուշարձանների շինողի, կամ շինարարությունը կազմակերպողի, որը սովորաբար լինում է վանքի վանահայրը, իրենց կատարած աշխատանքը որևէ աչքի ընկնող տեղում արձանագրելու սովորությունն է այդ ժամանակաշրջանում։ Մեր հիշած բոլոր օրինակներում էլ կան շինարարության համար միջոցներ ներդնողների անունները, երբեմն մի քանի տեղում։

Ինչպես տեսանք, Առաքելոց վանքում շինողների մասին որևէ հիշատակություն չկա և իշխանական առատաձեռնությունն ոչ մի հետք, ուստի և վերոհիշյալ փաստերը մեզ

---

1. «Էջմիածին» ամսագիր, 1951 թ. հուլիս-դեկտ. ամիսների համարներում։

2. «Էջմիածին» ամսագիր, 1952 թ., սեպտ.-դեկտ. ամիսների համարներում։

3. «Էջմիածին» ամսագիր, 1954 թ., փետր.-մարտ ամիսների համարներում։

հարկադրում են այդ վանքի հուշարձանների շինողներին այլ տեղ և ա՛յլ դասակարգում փնտրելու։

Թե՛ այս հարցին պատասխանելու և թե՛ մեր նկարագրությունը լրացնելու նպատակով, շարունակենք համառոտակի նկարագրել Առաքելոց բնակատեղը, որի կենտրոնում շինված է վանք-ամրոցը։

§ 13

Առաքելոց գյուղատեղ.— Ինչպես վերը հիշեցինք, այս բնակատեղը երեք թաղամաս ունի և քանի որ մեր ակնարկն սկսել ենք արևելյան թաղամասից, շարունակենք այդ թաղամասում գտնվող մյուս հուշարձանների և շենքերի նկարագրությունը։

Աղբյուրից մոտավորապես հարյուր մետր ցած, բնակատեղը հյուսիսից եղերող ժայռերի մեջ սեպաձև խրված ձորակի բերնին, գտնվում է քաղնիքի շենքը, որից միայն պատերի ստորին մասերն են մնացել։ Այդ շենքի ավերակները թաքնված են վանք-ամրոցից դեպի աղբյուրն իջնող կածանի վերջում, հեղեղատին շհասած, աջ կողմում, իրար խճճված ծառերի և մացառների մեջ։ Դա միջին չափերի՝ 13×10,8 մ. (դրսից) մի շենք է, շինված քարով և աղյուսով, կրե շաղախով։ Այդ շենքի քաղնիք լինելուն ապացույց են պատերի մեջ մնացած, թրծված կավից պատրաստված, չրատար խողովակները, պատերի ծեփը (ներսից) և տեղադրությունը աղբյուրին մոտ, որի շրից և օգտվել են։

Վանք-ամրոցի քարաժայռը հյուսիսային կողմում ձգվող լեռան շղթային միացնող պարանոցի վրա, պարսպից քիչ հեռու, ծառերի տակ նկատելի են մի քանի շենքերի տեղեր, լայն փոսերի ձևով։ Հավանաբար դրանք վանքի տնտեսական օժանդակ շենքերն են եղել, ամրոցից դուրս։

Ամրոցի քարաժայռի խիստ թեքությամբ իջնող հարավային քարոտ լանջի ցածում մի փոքրիկ եկեղեցու պատերն են մնացել։ Եկեղեցին շինված է դետաքարերից և կրաքարից, կրե շաղախով, 7,7×5,7 մ. չափերի (դրսից), մի մետրաչափ հաստություն ունեցող պատերով։ Եղել է թաղապատ, պատերը ներսից ծեփված։ Հարավային պատի վրա, մուտքից աջ, դեռևս երևում են որմանկարի հետքեր — կարմրագույն ձիու վրա հեծած մի մարդ, մարմինը դեպի ետ հակված։ Շատ լավ պահպանված է ձիու առաջին ոտքերից մեկը, հաջող և բնական նկարված։ Մուտքը արևմտյան պատի մեջ է բացված։ Մուտքի կիսաշրջանաձև, խոշոր ճակատաքարն ընկած է ցած, երեսն ի վայր։ Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի 1938 թվականի էքսպեդիցիայի ժամանակ այդ քարը իր տեղումն է եղել և էքսպեդիցիայի դեկավար, Կոմիտեի գիտական քարտուղար Հ. Եղիազարյանը գրի է առել քարի վրայի արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

1 Ի ԹՎ ՋԻԵ ԵՒ ՅԻՇԽԱՆՈՒԹԵ ԱԹԱՊԱԿ Ս-
2 ԱԴՈՒՆԵՆ ԵՍ ԳՈՒԳՈՐ ՔԱՀԱՆԱ ՇԻՆ(Ե)ՑԻ ԶԵԿԵՂԵ-
3 ՑԻՍ ԲԱՋՈՒՍ ԱՇԽԱՏՈՒԹԵ: ՈՐՔ ՍՊԱՍԱՒՈՐՈՆԵՆ ՍՄԱ ԱՌՆԵՆՔ:
4 ԺԱՄ Ի ՏԱՐԵՆ ՅԱՅՏՆՈՒԹԵՆՍ: ՇՆ-
5 ՈՀՈՐ ՏԻԿՆԱ: Ա ԳՈՀԱՐՔ[1](Ի)Ս ԹԷ (?)

Այդ եկեղեցուց 50 մետրաչափ դեպի հարավ, գտնվում է նույն չափերի և նման կառուցվածքի մի այլ եկեղեցի։

Հիշյալ եկեղեցիներից ցած, հյուսիսից հարավ և ապա ուղիղ անկյան տակ դեպի արևվելք, մինչև այդ կողմից բնակատեղը եղերող քարաժայռի շղթան ձգվող հարթ տարածության վրա պահպանվել են բազմաթիվ սենյակների պատերի հիմնաշարքերը։ Այդ սենյակները, որոնք բոլորն էլ կանոնավոր քառակուսի հատակագիծ ունեն, խիստ տարբերվում են բնակատեղի մնացած կանգուն և ավերակ շենքերից նրանով, որ դրանց պատերը շարված են եղել կանոնավոր, քառակուսի տաշված մեծ և միջակ մեծություն ունեցող քարերից։ Սենյակների մեծ մասը խոշոր չափերի են։

Տափարակի կենտրոնում, արևմուտքից արևելք ուղղությամբ, գտնվում է մի մեծ և ընդարձակ, կանգուն շենք, 15,2×10,2 մ. չափերի (դրսից), որը շինված է խոշոր և մանր գետաքարերից և ավազաքարից։ Թաղապատ է, ներսից թաղը գոտկում են երեք կամարներ, որով շենքը բաժանվում է չորս հատվածների։ Ընդերկայնական պատերի մեջ թաղերը կրող կիսամույթերը միացած են ցածրադիր կամարներով, պատերի մեջ առաջացնելով լայն խորշեր։ Առհասարակ այդ շենքի պատերը ցածր են թվում, գուցե այդ նրանից է, որ ներսը լիքն է շինաղբով, իսկ դրսից՝ շրջապատված հողաթմբերով։ Միակ մուտքը, որ բացվում է արևմտյան պատի մեջ, շրջապատի մակերեսից նույնպես ցածր է։ Թե՛ ընդհանուր տեսքով և թե՛ շինարվեստի ման-

1. 5-րդ շարքի «Գոճարք» անունը կարելի է վերծանել նաև իբրև «Գոտարք», որովհետև երրորդ գիրը նման է Լ-ի և Տ-ի։

բամասնությամբ ու չափերով այս շենքը հար և նման է Կիրանց վանքի սեղանատանը, միայն այն տարբերությամբ, որ վերջինը երկու դուռ ունի։ Ըստ Եղիազարյանի տեղեկագրի, տեղացիների ասությամբ այս շենքի մեջ ձիթհանի մեծ քար է եղել, որից և եզրակացություն է արվում, որ դա ձիթհանքի շենք է։ Սակայն, մեր կարծիքով, դա եղել է քարվանսարա կամ դոմ, բայց ոչ ձիթհանք, որովհետև այստեղ չեն երևում ո՛չ բովի և ո՛չ էլ մամլելու բաժանմունքի հետքեր, ինչպիսիք կան մեր երկրի մի քանի շրջաններում մնացած ձիթհանքերում, որոնցից ամենալավ քանդված է։ Ըստ երևույթին, սա երկու կամ երեք բաժանմունքից է բաղկացած եղել, որոնցից հարավային, ամենամեծը, մի խորն ընկած, տափարակի դառիվայր, թեք լանջի մեջ բացվող դուռ ունի։ Մեր կարծիքով դա պետք է եղած լինի ձիթհանքի շենքը, իսկ հիշյալ դուռը, որը շենքի հատակից ցած է դրված և չափերով մեծ չէ, քուպը դուրս թափելու համար է հատկապես շինված։

Թե այդ երկու շենքերից ո՞րն է, իրոք, ձիթհանքի շենքը եղել, կպարզվի ավելի մանրակրկիտ հետախուզությունից, գուցե և պեղումներից հետո։ Համենայն դեպս ձիթհանքի լի-



Սրանոցի կամուրջը

պահպանվածը և տիպականը գտնվում է Տաթևի վանքի մոտ։ Թեև վերջինը 17-րդ դարի շենք է, բայց ամենայն հավանականությամբ պահպանել է այդ արտադրական բնույթը կրող շենքի պլանավորման ընդհանուր սխեման։

Վերոհիշյալ տափարակի արևելյան ծայրին գտնվում է մի այլ մեծ շենք, հյուսիսից հարավ ձգվող, 16,5×9,6 մ. չափերի (դրսից), որի բարձր պատերը դեռևս կանգուն են մնացել։ Տանիքը, որը հավանաբար ծածկված է եղել գերաններով (դատելով պատերի ոչ շատ հաստությունից և բարձրությունից), հենված շենքի ներսում դրված փայտե սյուների վրա, նելն այդ բնակատեղում աներկբայելի է, որովհետև, նախ, դրան իրբև կողմնակի ապացույց կարող է ծառայել մոտակա, Կունեն գետակի վրա շինված, կամրջի «Սրանոցի» անունը և, երկրորդ, ձեթի արտադրությունը հնում եղել է համարյա թե ամեն տեղ, թե՛ վանքերին և թե՛ բնակավայրերին կից։ Բուսական յուղը ծառայել է թե՛ իրբև սննդամթերք և թե՛ իրբև վառելանյութ, լուսավորության կանթեղների համար, մոմի և նավթի գործածությունից առաջ։ Մեզ պատահել է մեր վանքերից մի երկուսում (օրինակ՝ Հնավանք, (Ստեփանավանի շրջան) և Կիրանց վանք) վանքի պատերի տակ տեսնել վայրի

դրությամբ աճած կանեփի թփեր, որոնք այդ տեղերում կարող էին մնացած լինել հնուց մինչև մեր օրերը տարեցտարի թափված և նորից աճած սերմերից։

Վերոհիշյալ տափարակից ցած, մինչև Կունենի ափերը, որևէ շենքի մնացորդներ չեն երևում։ Կունեն գետի վրա Սրանոցի կամուրջն է։ Ջնայած իր անշուք արտաքինին, այդ 9,3 մետր թռիչք և բարձր կամար ունեցող կամուրջը գեղեցիկ է և տպավորիչ։ Կամրջի խոշոր քարերից շինված երկու խելերն էլ հիմնված են առափնյա ժայռերի վրա։ Բարակ կամարը շարված է սեպաձև տեղավորված շերտավոր ավազաքարից։ Կամրջի լայնքը շուրջ երկու մետր է։ Զարմանալի է, որ ըստ երևույթին անպաճույճ այդ կառուցվածքը դարեր շարունակ դիմացել է լեռնային գետակի վարարումների կատաղի հորձանքին և կլիմայական քայքայիչ ուժերին։

Սրանոցի կամուրջից մոտավորապես հարյուր մետր հեռավորությամբ, գետակի ափով ձգվող կածանի աջ եզրին, բնակատեղի հարավային թաղամասում, գետաքարից, ավազաքարից և թրծված աղյուսից շինված պահակատան խարխուլ շենքն է։ Դա մի փոքրիկ ու ցածլիկ շենք է, նեղ դռնով, որը բացված է նախկինում այդ տեղով անցնող ճանապարհի վրա։ Շենքի ներսում, պատերի մեջ կան նեղ ու բարձր, սրածայր գագաթով նիշեր, որոնց կողերը, ինչպես և մուտքի շրջանակը, թրծված աղյուսից են։ Պահակատունը շինված է եղել ոչ թե ճանապարհի պաշտպանության համար, այլ այդ տեղով անցնող ապրանքատար քարավաններից մաքսանձնելու նպատակով։ Պահակատան շրջակայքում, իրար խճճված ծառերի, թփերի և մացառների մեջ մնացել են զանազան շենքերի պատերի հետքեր։

Բնակատեղի մեծագույն, արևմտյան, թաղը տարածվում է հեղեղատի աջափնյա լայն և ընդարձակ, թեթևակի զառիվայրով սարից դեպի գետակի ափն իջնող լեռնալանջի վրա։ Այժմ այդ տարածությունն ամբողջովին ծածկված է ծառերով. բնակարանների հետքեր համարյա թե չեն երևում։ Կանգուն մնացել են միայն երեք ավերված եկեղեցիների պատերը, այն էլ ոչ ամբողջ բարձրությամբ։ Այդ եկեղեցիներից երկուսը համարյա նույն չափերն ունեն ամբողջից ցած, արևելյան թաղամասում գտնված եկեղեցիների համեմատությամբ և նույնպես զանազան տեսակի ու չափի քարերից են շինված և հավանաբար ներսից սվաղված են եղել։ Դրանք, երեքն էլ, պարզ և անպաճույճ շենքեր են։ Մեկը, որը Թևավոր վանք է կոչվում, գտնվում է հեղեղատի ձախափնյա բաղնիքի դիմաց, մոտավորապես 50 մետր հեռավորության վրա։ Մնացած երկուսը, որոնք շինված են իրար կից և գտնվում են մեծ թաղամասի արևմտյան ծայրին, կոչվում են Զույգ եկեղեցիներ։ Դրանցից հարավայինը իր չափերով ավելի փոքր է — 6×4,5 մ. (դրսից)։ Զույգ եկեղեցիներից հյուսիսայինի (մեծի) արևմտյան պատի մեջ բացվող մուտքի կիսաշրջանաձև շատ խոշոր ճակատաքարը, որը խիստ հողմահարված է, ունի հետևյալ արձանագրությունը.

1 Ի Թ [ՋԻԳ][1] . . . . . ԱԾԱՍԷՈ Ե . .
2 ԵՍ ՇՆՈՀՈՒՈՐՍ ՅՈՒՍՈ[Վ] . . . ԵԿԵՂԵՑԻ ԱՅ ԻՐԱ. Ա . . .
3 ԻՄՈՑ ԱՐԴ ՈՐՔ ՍՊԱՍԱՒՈՐԵՆ ԼՄԱ Ի ՏԱՐԻՆ Դ ՊԱՏԱՐԱԳ ՊԱՐՏԻՆ։
ՋԱՏԿԻՆ ԻՄ
4 ՀԱՒՈՆ ԱՒԵՏԵՅՆ + + + + :Բ: ՅԱՅՏՆՈՒԹԵՆ
5 ԻՄ ՄԱՒՈՆ ՄԼՔ[Ա]Ն Ա ՋԻՆ[2] ՈՐ ԽԱՓԱՆԷ

6-րդ շարքի վերջում միայն Ս, իսկ 7-րդի վերջում Շ գրերն են մնացել։

Զույգ եկեղեցիներից քիչ հեռու՝ արևմտյան կողմում՝ կան երկու խաչքարեր, իրար մոտ։ Դրանցից մեկն ընկած է, իսկ մյուսը կանգուն և քարը խաչաձև, որի պատճառով և կոչվում է Թևավոր խաչ։ Այս խաչքարի վրայի արձանագրությունը հողմահարված լինելու պատճառով անվերծանելի է, սակայն թվագիրը — ՉԼԸ պահպանված է պատվանդանի վրա։

1. Փակագծերի մեջ դրված թվագիրը մեզ հայտնել է Հ. Եղիազարյանը։ Գրի է առնված Պատմական հեռությունների պահպանության կոմիտեի 1938 թվականի էքսպեդիցիայի ժամանակ, իսկ այժմ եղծված է։

2. 5-րդ շարքի Ս գրաբ անունից հետո «տ-գիե» բառը համարում ենք «տգի», որը Ղարաբաղի բարբառով «մայր» է նշանակում. իսկ 3-րդ շարքի վերջին գրերը («եկեղեցի» բառից հետո) թերևս լինեն «Ա՝ իրատեց», որով կստացվի — ...[շինեցի] եկեղեցի Ա՝ իրատեց իմոց», որտեղ «իրատեց» բառը փոխարինում է սովորական «տուղեաեց» բառին։

§ 14

Վերլուծելով Առաքելոց խմբի հուշարձանների նկարագրությունը, այժմ փորձենք ամփոփել մեր տպավորությունները և որոշ հարցերի նկատմամբ անել այդ բոլորից հետևող եզրակացություններ։

ա) Հուշարձանների վրա պահպանված թվագրերից (ամենահինը՝ ՈՂԳ=1244 թ. և վերջինը՝ ՉԼԸ=1289 թ.) երևում է, որ դրանց մեծամասնությունը կառուցված է 13-րդ դարում։ Այս դարը Առաքելոց բնակատեղի և վանքի ծաղկման շրջանն է եղել, իսկ թե ե՞րբ է եղել դրանց գոյության սկիզբը և վերջը, դժվար է ասել, առանց ավելի մանրակրկիտ ուսումնասիրության և, մասնավորապես, պեղումների։ Համենայն դեպս մի բան պարզ է, որ լեռնային այդ կիրճը բնակելի է եղել դեռևս 17-րդ դարում։ Դրան վկա են Առաքելոցի խմբից 2—2,5 կիլոմետր ցած, գետակի երկու ափերին մնացած Հին Կունեն գյուղի ավերակները։ Դրանց մեջ, աջափնյա բլրի գագաթին դեռևս կանգուն մնում է Թերումենց աղղից, Ասլամազի որդի Մելիք-Շահնազարի և դրա ամուսին Խանզադեի շինած Աստվածածին եկեղեցին, որի մուտքի ճակատաքարի վրա պահպանված է ՌՃԻԴ=1675 թվակիր շինարարական արձանագրությունը։ Բացի այդ, այս եկեղեցու արևմտյան կողմում գտնվող գերեզմանատան մեջ պահպանված խաչքարերից մի քանիսը նույն դարի թվագրեր ունեն։ Հավանական է, որ Առաքելոց բնակատեղը ավերվելուց, կամ մի այլ պատճառով լքվելուց հետո, նրա ժողովուրդը տեղափոխվել է Կունեն, դրա շինության համար օգտագործելով Առաքելոցի ավերակների պատրաստի քարերը։ Վերջին ենթադրությունն (քարերի օգտագործման մասին) արվում է հիմք ունենալով այն հանգամանքը, որ Առաքելոցի ընդարձակ բնակատեղում բնակարանների նույնիսկ հիմնաքարերը չեն մնացել։ Նույնը կարելի է ասել նաև արևելյան թաղամասի շենքերի և ամրոցի պարիսպների քարերի մասին։ Բնական է եզրակացնել, որ քարերը տարել են մոտակա Կունենի բնակիչները։

Առաքելոցի լքման և Կունենի շինվելու ժամանակին և պայմաններին վերաբերող հարցն առայժմ մնում է անլուծելի։

բ) Այժմ աշխատենք որոշել, թե ի՞նչ տեսակի բնակատեղ է եղել Առաքելոցը։ Պաշտոնապես (Պատմական հնությունների պահպանության կոմիտեի ցուցակում) դա համարվում է գյուղատեղ։ Սակայն մի քանի հանգամանքներ և փաստեր ցույց են տալիս, որ այդ բնակավայրը սովորական գյուղ չի եղել։ Նախ՝ գյուղատնտեսությամբ, այսինքն վարուցանքով և անասնապահությամբ զբաղվելու համար դրա շրջակայքում չկան հարմար հողամասեր, արոտներ և այլ պայմաններ։ Ամեն կողմից խիստ զառիվայր իջնող ժայռոտ և անտառապատ լեռները և դրանց մեջ ընկած խոր ձորերը գյուղատնտեսությամբ զբաղվելու որևէ հարմարություն չեն ներկայացնում և այդպիսի պայմաններում այդ տեղի բնակիչները միայն տեղ-տեղ, մոտակա բացատներում և բնակավայրի մոտերքում փոքրիկ պտղատու այգիներ և բանջարանոցներ կարող էին մշակել։ Պարզ է, որ փոքրիկ այգիներով ու բանջարանոցներով այդպիսի մի ընդարձակ բնակավայրի ժողովուրդը չէր կարող իր գոյությունը պահպանել։

Այն հանգամանքը, որ Առաքելոցում հինգ եկեղեցիներ են եղել, շհաշված վանքի երկու եկեղեցիները, բաղնիք և արևելյան թաղամասում եղած մի շարք ոչ բնակելի ընդարձակ շենքեր, ևս մի ապացույց է, որ այդ բնակավայրը սովորական գյուղ լինել չէր կարող։

Առաքելոց բնակավայրի տիպը բնորոշող, իրար հետ կապ ունեցող երեք հուշարձաններ են մնացել, երեքն էլ կանգուն դրությամբ։ Դրանցից մեկը քարվանսարայի շենքն է, արևելյան թաղամասի կենտրոնում, երկրորդը՝ Կունեն գետակի վրայի Սրանոցի կամուրջը, իսկ երրորդը՝ վերջինից քիչ հեռու գտնվող պահականոցը։ Այս երեք հուշարձանների միատեղ լինելը ցույց է տալիս, որ Առաքելոցը իր ժամանակին եղել է բանուկ ճանապարհների մի հանգույց։

Մեր հոդվածի սկզբում արդեն նշել ենք, որ պատմական Սևորդյաց երկիրը կամ Կայենո գավառը եղել է արտաքին աշխարհից դեպի Հայաստանի կենտրոնական գավառները բացվող դռներից մեկը, և որ այդտեղից են անցել քարավանային հին ճանապարհները։ Այս առթիվ ուշագրավ է Պատմական հնությունների պահպանության կոմիտեի 1938 թվականի էքսպեդիցիայի արդյունքներն ամփոփող տեղեկագրի այն մասը, որը վերաբերում է Լոռու բարձրավանդակից դեպի ներկայիս Իջևանի շրջանը տանող հին ճանապարհներին, որոնց մնացորդներն ու հետքերը էքսպեդիցիան նկատել է այդ ուղղությամբ կատարած իր դիտարշավի ընթացքում։

Այդ զեկուցագրից երևում է, որ Աղստև գետի հովտով ընթացող և տեղ-տեղ նրան միացող մի քանի ճանապարհներ անցնում են Զորառետի հովիտը Աղստև և Ոսկեպար գետերի հովիտներից բաժանող բարձր լեռնաշղթաների լեռնանցքերով։ Այդ ճանապարհներից կարևորը, որ այժմ էլ մասամբ բանուկ է, անցնում է Աւաղերդու շոռանի Քարինջ, Մարց, Լորուտ, Շամուտ և Ահնիձոր գյուղերով և իջնում Կունեն գետակի ձորը, և ապա Կիրանց վանքի և Առաքելոցի վրայով տանում է Քուռ գետի հովիտը։ Կիրանցից

դեպի Առաքելոցը տանող ճանապարհի կեսին, Զայդոշանի կամրջի մոտ, մի այլ ուղի է միանում, որն անցնում է Դեղձնուտի վանքի մոտով, որը ներկայումս էլ ծառայում է իբրև ամառային արոտները տանող ճանապարհ, Ղազախի շրջանի քոչվորների և տեղացիների համար։ Կիրանց վանքի վրայով ընթացող ճանապարհով Ալավերդու շրջանի վերոհիշյալ գյուղերի անասունների հոտերն իջնում են Քուռի հովտի ձմեռային արոտները։

Կունենք դեռակի հովտով անցնող ճանապարհին են միանում նաև Զորագետի հովտում գտնվող Շնող և Կողբ ու դրանց մոտակա գյուղերի վրայով դեպի Ոսկեպարի հովիտն ընթացող ուղիները, որոնց մի ճյուղավորությունը միանում է Կունենի ձորի ճանապարհին։ Կունենի ձորի ճանապարհի մի ճյուղը Առաքելոցի կամրջով (Սրանոցի), դեռակի աջ ափով ընթացել է դեպի Մակրավանք, Կայենո և Աղստևի ձորում գտնվող մի քանի այլ բերդերը։ Այս վերջին ճանապարհը, հավանաբար, նույնպես առևտրական նշանակություն է ունեցել, որի համար և կառուցվել են թե՛ Սրանոցի կամուրջը և թե՛ նրա մոտի պահականոցը։

Այսպիսով պարզ է Առաքելոց բնակավայրի հանգուցային դիրքը այդ ճանապարհների վրա և բնական է, որ այդ տեղով անցնող քարավանները կանգ առնեին և օթևանեին մինչև օրս գոյությունը պահպանող քարվանսարայում։

Վերոհիշյալ տվյալներից ինքնին հետևում է, որ Առաքելոց բնակավայրը լիներ նաև առևտրական մի կետ, և այդտեղ ծաղկած լիներ որոշ արհեստներ և տնայնագործություններ, որոնք սպասարկեին այդ ճանապարհներով անցնող քարավաններին և անցորդներին, ինչպես և Կունենի ձորի և դրան կից լեռնալանջերում գտնվող բնակատեղերին։ Առևտրի ասպարեզում այդ կետը կարող էր լինել իբրև շուկա թե՛ դրսից բերվող մթերքները և թե՛ տեղական հումքի վաճառքի (բուրդ, կաշիներ, մորթեղեն, մազեղեն, փայտանյութ և այլն) կամ փոխանակության համար։

Բնական է, որ այդպիսի առևտրական մի կետի համար անհրաժեշտ կլիներին թե՛ արհեստանոցներ և թե՛ մեծ տարողությամբ պահեստներ։ Ահա այդ տիպի շենքերի մնացորդներն ենք համարում այն մի շարք, տաշված քարով շինված և ոչ բնակարանային տիպի մեծ ու փոքր սենյականման կառուցվածքները, որոնց հիմնապատերը հողի տակից երևում են քարվանսարայի և ձիթհանքի մոտերքում, իսկ ամրոցի տակ բնկած տափաստակի վրա շինված բոլոր շենքերը միասին, ներառյալ քարվանսարան և ձիթհանքը՝ իբրև Առաքելոցի գործարար թաղամասը—շուկան։

Այս բոլորը նկատի ունենալով, Առաքելոց բնակավայրը պետք է համարել ոչ թե սովորական գյուղ, այլ առևտրա-արդյունաբերական տիպի մի գյուղաքաղաք, որի բնակիչները եղել են նյութապես բարեկեցիկ դրության մեջ եղող մարդիկ—տնայնագործներ, արհեստավորներ և վաճառականներ։ Դրանց համեմատաբար բարեկեցիկ դրության մեջ լինելուն ապացույց են այդ բնակավայրում անհատապես և միացյալ ուժերով շինված հինգ եկեղեցիները և բաղնիքը, որոնք թեև անշուք տեսք ունեն, սակայն զգալի նյութական միջոցներ են պահանջել, մանավանդ եթե նկատի ունենանք եկեղեցիների ներքին ձևավորումը։ Խոսքը եկեղեցիները սրբապատկերներով զարդարելու մասին է, որի ապացույցը պահված է ամրոցի տակի, սարալանջին շինված եկեղեցու մեջ։

Հասարակական շենքերի թվում չենք հիշում քարվանսարան, ձիթհանքը, կամուրջը և պահակատունը, որոնց կառուցման շարժառիթները կարող են և բնակավայրի համայնքին չվերաբերել։

գ) Առաքելոց վանք-ամրոցի նկարագրությունից երևում է, որ դրա գլխավոր հուշարձանների—եկեղեցիների, ժամատան, գավթի, ինչպես և կոմունալ շենքերի—կառուցողների մասին որևէ հիշատակություն չկա։ Տեսանք նաև, թե ինչպիսի արտակարգ խնայողությամբ և նպատակահարմար տեղադրությամբ են կառուցված դրանք։ Պարզ է նաև, որ այդ հուշարձաններից որ մեկին էլ վերցնենք, մի մարդու շինած չէ, այլ շատերի կոլեկտիվ միջոցներով և աշխատությամբ, որովհետև, հակառակ դեպքում, եթե շինողը մի անձ լիներ, իր անունը կփորագրեր հուշարձանի պատերին, ինչպես այդ արել են ավելի համեստ հուշարձանների կառուցողները (երկու եկեղեցիները բնակատեղում և Ս. Կարապետ խաչարձանը վանքում)։ Այս ամենը հաշվի առնելով, ենթադրում ենք, որ վանք-ամրոցի հուշարձանների կառուցողները եղել են Առաքելոցի բնակիչները— տնայնագործները, արհեստավորները և վաճառականները, միացյալ ուժերով, ժլատության հասնող պարզությամբ, խուսափելով ոչ կարևորից, ավելորդ պճնաղարդանքից, խնայելով միջոցները, որտեղ հնարավոր է եղել, և շենքերը տեղադրելով կրկնակի նպատակահարմարությամբ։ Այդպես կարող էին վարվել դրամի, աշխատանքի և նյութի արժեքն իմացող մարդիկ միայն։

դ) Սակայն վերոհիշյալ կարծիքի առթիվ կարող են առարկություններ լինել, նկատի ունենալով այդ ժամանակաշրջանի քաղաքական և տնտեսական դրությունը։

Ինչպես տեսանք, Առաքելոցի թվագիր ունեցող հուշարձանները բոլորն էլ, դրանց հետ, թերևս, և թվագիր չունեցող հուշարձանների մի մասը, շինված են 1244—1289 թվականներին, այսինքն մոնղոլական բռնակալության սկզբնական շրջանում։ Ժամանակակից պատմիչ Կիրակոս Գանձակեցին այսպես է բնորոշում արհեստներով զբաղվող ժողովրդի այդ ժամանակվա դրությունը. «... այլ և զամենայն արուեստագէտս, եթէ ի քաղաքս և եթէ ի գիւղս, զամենայն ի հարկի կացուցին... և զի՞ պիտոյ է մանրամասնաբար ասել, զամենայն դուռն շահից հատին ի մարդկանէ...»[1]։ Ուրեմն, հարց է առաջանում, թե ինչո՞ւ էր կարող Առաքելոցի ժողովուրդը, նման պայմաններում, ոչ միայն իր գոյությունը պահպանել, այլև մեր հիշած շինարարությունը կատարել՝ վանք ու եկեղեցիներ և այլ արտադրական ու կոմունալ բնույթի շենքեր կառուցել։ Մեր կարծիքով այդ ամենը կարող էր կատարվել միայն այն դեպքում, եթե Առաքելոց բնակավայրը համարվեր կամ լիներ վանքապատկան, որովհետև համաձայն թե՛ Կիրակոս Գանձակեցու և թե՛ Սյունյաց պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայությունների, մոնղոլների տիրապետության ժամանակ վանքերը և եկեղեցիները ազատ էին հարկերից։ Հետևապես Առաքելոցի բնակիչ արհեստավորները, ոչնչագործներն ու վաճառականները իրև վանքի ծառայող-սպասավորներ կամ ճորտեր, այսինքն վանքի ցուցանակի տակ, լինելով ճկուն և ձեռներեց մարդիկ, կարող էին իրենց արհեստներովն զբաղվել, համեմատաբար բարեկիցիկ կյանք ունենալ և շինարարությամբ զբաղվել, բարեկարգելով վանքը, թեկուզ իրենց անձնական շահը նկատի ունենալով, չհաշվելով ժամանակի բարեպաշտական հակումները։

Թե՛ այս և թե՛ սույն հոդվածում արծարծված այլ ենթադրությունները կարող են հաստատվել կամ հերքվել, եթե ավելի մանրակրկիտ ուսումնասիրություն և պեղումներ կատարվեն այդ հետաքրքիր հուշարձանների խմբում։

1. Կիրակոսի Գանձակեցւոյ Պատմութիւն Հայոց, 1909 թ., էջ 349։



ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻՆ*

Դեզ համար, որպես հայ ժողովրդի պատմության հին շրջանի մասնագետի, հաճելի է հայ մատենագիրների մասին խոսելն ընդհանրապես, սակայն նրանց մեջ կա մեկը, մեզ ավելի հարազատ մեկը, որին մենք սիրում ենք պաշտելու աստիճան — այդ յոթերորդ դարի ականավոր գիտնական, Շիրակի մեծանուն զավակ Անանիա Շիրակացին է։ Ավելի քան քսան տարվա Շիրակացու մատենագրության մեր ուսումնասիրության ընթացքում ո՛րքան մենք մոտից ենք ծանոթացել Շիրակացու գիտական ժառանգության հետ, ո՛րքան խորացել ենք նրա արծարծած հարցերի խորքը, այնքան ավելի է մեծացել ու խորացել նրա հմայքը մեր աչքում։

Անանիա Շիրակացու անձնավորության մասին մենք բավարար տեղեկություններ ունենք. նա գրել և մեզ է թողել իր ինքնակենսագրությունը, որ հայ մատենագրության մեջ հայտնի է «Անանիայի Շիրակունւոյ ճամարոյի որպիսութիւն կենաց» խորագրով։ Շիրակացու այդ ինքնակենսագրականը, իր տեսակի մեջ, բացառիկ երկ է. նման այլ հեղինակի ինքնակենսագրական հայ հին և միջին դարերի մատենագրության մեջ մեզ հայտնի չէ — մեզ հասածները գլխավորապես վարքեր են՝ գրված բարոյախոսական նպատակով։

Շիրակացու ինքնակենսագրականից երևվում է, որ նա ծնվել է Շիրակի շրջանի Անանիա գյուղում, որը, հավանական է, Անիի շրջագարձված ձևը լինի։ Հոր անունն է Հովհաննես։ Մենդյան ճիշտ թվականը մեզ հայտնի չէ, բայց դատելով Շիրակացու իր ուսուցչի՝ Տյուքիկոսի մասին հաղորդած մի տեղեկությունից՝ որ վերջինս իր երիտասարդ հասակում զինվոր է եղել Տիբերիոս կայսեր մոտ,— իսկ մեզ հայտնի է, որ Տիբերիոսը գահակալել է 578—582 թվականներին, իսկ Տյուքիկոսը զինվորությունից հետո, հասուն տարիքին է ուսուցչություն արել Շիրակացուն,— ուրեմն՝ Շիրակացին, մոտավորապես, ծնված պիտի լինի 6-րդ դարի վերջերում, կամ, ամենաուշը՝ 7-րդ դարի սկզբում։

Շիրակացին նախնական կրթությունը ստացել է իր հայրենի գյուղում. այստեղ է նա ծանոթացել կրոնական գրականության, ազգային պատմության և մատենագրության հետ։ Տեղական կրթությունը վերջացնելուց հետո, նրա երազանքն է եղել կատարելագործել իր ուսումը՝ խորանալով առանձնապես համարողության (մաթեմատիկայի) մեջ, համարելով այն «մայր ամենայն իմաստից» (բոլոր գիտությունների մայրը)։ Այդ նպատակով նա պանդխտության գավազան է վերցրել և մեկնել դեպի Արևմտյան Հայաստան։

* Տպագրում ենք պրոֆ.-դոկտ. Ա. Գ. Աբրահամյանի սույն թվականի հունվարի 27-ին Անթիլիասի Կյուլպենկյան սրահում կարդացած դասախոսությունը։— ԽՄԲ.։

Նրա առաջին կանգառը Արևմտյան Հայաստանում եղել է Թեոդոսուպոլիս քաղաքը, ուր խորհուրդ են տվել նրան գնալ Չորրորդ Հայք՝ սովորելու Քրիստոսատուր անունով մի ուսուցչի մոտ։ Շիրակացին գնացել է նրա մոտ և աշակերտել նրան վեց ամիս։ Սակայն շուտով նկատել է, որ իր ուսուցիչը համարողության մեջ աղքատիմաց մեկն է։ «Դիտացի,— գրում է նա,— զի ոչ ունէր զբովանդակութիւնն առուեստին»։

Լավ ուսուցիչ փնտրելու հույսով Շիրակացին շարունակել է իր ճանապարհը դեպի Կոստանդնուպոլիս, բայց կես ճանապարհին հանդիպել է ծանոթ անձնավորության, որ հայտնել է նրան, որ լավագույն մասնագետ ուսուցիչը գտնվում է ո՛չ թե Կոստանդնուպոլսում, այլ՝ Տրապիզոնում, և ինքը տեսել է ուսանողների մի խումբ, որ Կոստանդնուպոլսից եկել է Տրապիզոն՝ սովորելու հայտնի ուսուցիչ Տյուքիկոսի մոտ։ Շիրակացին այլևս չի շարունակել իր ճանապարհը, հետ է դարձել և ուղևորվել դեպի Տրապիզոն։

Տյուքիկոսը հաճույքով է ընդունել երիտասարդ Անանիային և պարապել նրա հետ։ «Եւ սիրեաց զիս որպէս զորդի իւր,— գրում է նա,— և պարապեաց յիս յամենայն խորհրդոց իւրոց, մինչև նախանձեալ ընդ իս ամենայն աշակերտակցաց իմոց՝ որք ի դրանէն արքունի»։ Շիրակացին ութը տարի մնացել է Տյուքիկոսի մոտ, ուսումնասիրել է կարևոր գիտությունները, խորացել է մաթեմատիկայի մեջ, սովորել է տիեզերագիտություն, տոմար, աշխարհագրություն, փիլիսոփայություն և ա՛յլ գիտություններ և բարձր իմացությամբ ծանրաբեռնված վերադարձել իր հայրենի երկիրը. «Եւ արդ՝ ես առուպս Հայաստանեայց, ուսայ ի նմանէ (այսինքն՝ Տյուքիկոսից։— Ա. Ա.) զնզաւր առուեստս զայս, որ թագաւորաց է ցանկալի և բերի յաշխարհս մեր՝ առանց ուրուք լինելով ձեռնտու, միայն ջանիւ իմով անձինս...»։

Վերադառնալով Շիրակ, նա հավաքել է աշակերտներ, պարապել նրանց հետ և միաժամանակ զբաղվել գիտական-հետազոտական աշխատանքներով։ Նրա ստեղծագործական բեղուն շրջանը մոտավորապես պիտի եղած լինի յոթերորդ դարի 30—70-ական թվականները. հայտնի է, որ Շիրակացին Անաստաս կաթողիկոսի հանձնարարությամբ գծագրել է հայկական տոմարը 667—669 թվականներին։

Շիրակացու գիտական աշխատանքները, սակայն, հարթ, հավասար չեն ընթացել։ Փաստեր կան, որ նա հետապնդվել, հալածվել է ժամանակակից տգետ շրջանակների կողմից։

Ուշ շրջանի մեր մատենագրության մեջ ավանդական տեղեկություններ են պահվել այն մասին, որ իբր Շիրակացին իր կյանքի վերջին տարիներին նեղացել է Հայաստանում իր նկատմամբ ցուցաբերված անբարյացակամ վերաբերմունքից, գնացել է ֆրանկների թագավորի մոտ, սովորեցրել է նրան ոսկի պատրաստելու արվեստը և վերջինս, ի պատիվ Շիրակացու, հատուկ մեդալիոն է կտրել տվել, մի երեսը իր, իսկ մյուսը՝ Շիրակացու նկարով։ Այս տեղեկությունը, իհարկե, զուրկ է պատմական հիմքից։

Շիրակացին, մեր հաշվումներով, մահացած պիտի լինի 7-րդ դարի ութսունական թվականներին։

***

Անանիա Շիրակացու ստեղծագործությունից, մինչև վերջին տասնամյակները, քիչ բան էր հայտնի և հրատարակված։ Հայագիտության մեջ հայտնի էին միայն նրա մի քանի աշխատությունները, որոնք ի մի է հավաքել և հրատարակել պրոֆ. Քերովբե Պատկանյանը՝ «Անանիայի Շիրակունւոյ Մնացորդք բանից» խորագրով, որ լույս է տեսել 1877 թվին Պետերբուրգում։ Այդ ժողովածուի մեջ մտել են Շիրակացու տարբեր աշխատությունների պատառիկները, փշրանքները միայն։

Այդ ժողովածուի հրատարակությունից առաջ հայագիտության մեջ հայտնի էին և հրատարակված նաև Շիրակացու չափ ու կշիռների աշխատությունը «Ցաղագս չափոց և կշռորդաց» և «Ցաղագս կշռոց, կշռոց և կշռորդաց» վերնագրով և թվաբանական 24 խնդիրները «Ցաղագս ճարտման և լուծման» վերնագրով։ Հետագայում Շիրակացու երկու աշխատությունները՝ օդերևութաբանական դուշակությունների մի տեքստ «Ցաղագս ամպոց և նշանաց» վերնագրով և տիեզերագի-

տական բովանդակությամբ մի աշխատություն «Ցաղոգս շրջագայութեան երկնից» խորագրով հայտնաբերեց և հրատարակեց հայտնի բանասեր Գալուստ Տեր-Մկրտչյանը «Արարատ» ամսագրի էջերում, 1896 թվին։— Ահա այն ամենը, ինչ հայտնի էր հայագիտության մեջ այն ժամանակ, երբ մենք ավարտելով Երևանի Պետական համալսարանը, աշխատանքի գործուղվեցինք Պետական մատենադարան և սկսեցինք մեր պրպտումները հայկական ձեռագիր աշխարհում՝ Շիրակացու անծանոթ աշխատությունները գտնելու թևավոր հույսերով։

Այն էլ պիտի ասենք, որ միջնադարյան խավար իրականության մեջ, մեր լուսամիտ հեղինակի որոշ մտքեր ու տեսակետներ լայն ընդունելություն չեն գտել պահպանողական շրջանում, և այդ պատճառով Շիրակացու մատենագրությունը չի ընդօրինակվել և թողնվել է անուշադրության։ Դեռևս 11-րդ դարում հայտնի գիտնական Գրիգոր Մագիստրոսը, Պետրոս Գետադարձ կաթողիկոսին գրած իր մի նամակում գանգատվում է, որ Անանիա Շիրակացու գործերը, որոնք հեղինակը մեծաջան աշխատությամբ, թափառումներով և դեգերանքով հավաքել է բազմազան և բովանդակությամբ հարուստ մատյաններից, անուշադրության է թողնվել և «գրվանի տակ» է թաքցվում։

1933 թվականին աշխատանքի անցնելով Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում, Շիրակացու մատենագրության ուսումնասիրությունը մենք սկսեցինք Խորենացուն վերագրվող «Աշխարհացույց»ից՝ նպատակ ունենալով նախ պարզել նրա իսկական հեղինակը։ Այդ տարիներին մեր հայագետների շրջանում բուռն վեճեր էին սկսվել Պատմահոր ժամանակի նկատմամբ, և մենք երիտասարդներս ևս խառնվել էինք այդ վեճերին։ Այդ կապակցությամբ մենք ձեռնարկեցինք ուսումնասիրել Պետական մատենադարանում եղած «Աշխարհացույց»ի ձեռագրերը և համեմատել տեքստերը՝ պարզելու ուշ դարերում կատարված փոփոխությունները և աղճատումները։ Մեր ուսումնասիրությունը հրատարակվեց 1940 թվին «Խորենացուն վերագրվող «Աշխարհացույց»ի հեղինակի հարցի շուրջը» վերնագրով և դրական գնահատականի արժանացավ հայագետների ավագ սերնդի կողմից։ Անհրաժեշտ ենք համարում այստեղ կարդալ հանգուցյալ ակադ. Հրաչյա Աճառյանի կարծիքը։ Նա, անդրադառնալով ակադ. Մանանդյանի «Խորենացու առեղծվածի լուծումը» աշխատության քննադատությանը, գրում է.

«Մանանդյանի այս գործի քննադատության են նվիրված երկու գիրք. նախ Ստեփան Մալխասյանցի «Խորենացու առեղծվածի շուրջը» (Երևան, 1940) և երկրորդ՝ Աշոտ Աբրահամյանի «Խորենացուն վերագրվող «Աշխարհացույց»ի հեղինակի հարցի շուրջը» երկը (տպ. Երևան, 1940)։ Երկու անգամ ուշադիր կերպով կարդացի այս երկրորդ գործը և որպիսի՜ հիացմունք ունեցա հեղինակի աշխատանքի ղուտ գիտական մեթոդի վրա։ Պրպտելով մեր Մատենադարանը, հեղինակը գտել է «Աշխարհացույց»ի 36 ձեռագիր։ Սրանցից 8-ը գրված են ԺԲ—ԺԶ դարերում, մնացյալ 28 հատը 1600 թվից մինչև 1724 թիվը։ Հին ձեռագրերը վերնագրում Խորենացու անունը չունեն։ Առաջին անգամ 1600 թվին վերնագրում կարդում ենք «Մովսէսի Խորենացւոյն» և այս անունը այնուհետև սովորական է դառնում։ Թեև այս անունը կարդում ենք նաև ԺԴ դարում գրված մի ձեռագրի վերնագրում, բայց այդ անունը ավելացրած է ԺԹ դարում։ Սա նշանակում է, որ Աշխարհացույցը Խորենացուն վերագրելու միտքը 1600 թվից է սկսում։ Աշխարհացույցի նախնական վերնագիրն է եղել «Երկրաչափ», որի հետքերը երևում են դեռ հնագույն ձեռագրերի վրա։ Ե՞րբ է գրվել այս Երկրաչափը (=Աշխարհացույցը)։ Մի տեղ հեղինակը հիշում է Կոստանդինոս Անտիոքացու «Քրիստոնէական տեղագրութիւն» երկը, որից քաղվածքներ է արել։ Այս հեղինակը Զ դարից է։ Աշխարհացույցում Արաբիայի մասին խոսելիս այնպես է նկարագրում հեղինակը։ որ դեռ արաբները մի միություն չեն կազմած, հանգիստ բնակվում են երեք տարբեր Արաբիայում (Ապառաժ Արաբիա, Անապատ Արաբիա, Երջանիկ Արաբիա) և դեռ աշխարհակալության չեն դուրս եկած։ Ուրեմն և Աշխարհացույցը գրված է այդ թվականից առաջ, այն է է դար։ Այն բոլոր

հիշատակությունները, որոնք մեջ են բերված քննադատների և մանավանդ Մանանդյանի կողմից՝ ցույց տալու համար, թե Աշխարհացույցը գրված է արաբների արշավանքից հետո (ինչպես Բասրա, Կուֆա կամ Ակողա, Մուծդ=Մուսուլ և այլն) չեն գտնվում Աշխարհացույցի հին օրինակներում։ Ինչպես Աշոտ Աբրահամյանը ցույց է տալիս, Աշխարհացույցը իրրև առձեռն դիրք շարունակ փոփոխության, հավելման ու հապավման է ենթարկվել և այդ բոլորը պարզվում է հնագույն ձեռագրերի համեմատությամբ։ (Փակագծի մեջ ասեմ, որ մաղաբ, դեուսնաղեուսնոr, ախուսնա բառերը զուտ արաբերեն ملاب malab, دهن الحنا duhn-ul-hinna, اكونا axkuna ձևերից են—տե՛ս Սրմ. Բառ. և նրանց ներմուծումը անհրաժեշտ է բացատրել պատշաճ ձևով)։ Ո՞վ է այն անձը է դարից, որին կարելի լիներ վերագրել այսպիսի աշխարհագրություն, եթե ոչ Շիրակացին։ Բայց Աշոտ Աբրահամյանը այս բանը ճշտում և հաստատում է նաև այլ ձևով։ Նա քննում է մի կողմից լեզվական այն ձևերը և մյուս կողմից գիտական այն դաղափարները, որոնք ընդհանուր են Աշխարհացույցի և Շիրակացու անունով հայտնի մյուս գործերին։ Նույնիսկ Աշոտ Աբրահամյանը Գր. Մագիստրոսի թղթերի մեջ (էջ 8) գտնում է երկար մի հատված, որի մեջ հիշված է Անանիա Շիրակացու «Երկրաչափություն»։ Այսպիսով շնչվեցին Մանանդյանի երկու հիմունքները։ Երրորդ պատճառաբանությունը շատ ավելի հեշտ եղավ հերքել։ Աշոտ Աբրահամյանը գտնում է մեր մատենադարանում Մովսես Խորենացու և Զաքարիա կաթողիկոսի աշխատակցությամբ գրված Աստվածամոր պատկերի պատմությունը։ Դուրս է գալիս, որ այդ երկու անձինք, իրարից դարերով անջատ, գրել են նույնանուն մի մի երկ, և ինչ որ գրել ուշ ժամանակ այս երկուսի գործերը առանձին-առանձին և հատված-հատված առընթերագրել է, ամեն մեկի մոտ էլ նշանակելով Մոս. (=Մովսէս) և Զք. (=Զաքարիա)։ Կորավ ուրեմն այս երրորդ բացառիկ փաստն էլ և Թ դարի ենթադրությունը հալվեց։ Աշոտ Աբրահամյանը ցույց է տալիս նաև, որ «Անանուն» կոչված ժանակագրությունը, որ նույնպես պատկանում է Շիրակացու գրչին, ունի մի հատված «Մովսէսի Խորենացւոյ և Անդրէասի» վերնագրով և իրոք արտագրված է Խորենացու Պատմությունից։ Բացի սրանից Շիրակացու «Զի՞նչ է ամիսն» գրվածքում, որ դեռ անտիպ է, կա Ս տող մի հատված Հայկի մասին, որ նույնպես Խորենացուց է քաղված։— Կա մի կարևոր կետ, որ Խորենացու ո՛չ կողմնակիցները և ո՛չ էլ հակառակորդները ի նկատի չեն ունենում։ Ենթադրենք Խորենացուն տարիներ Ը կամ Թ դար, ովքե՞ր պիտի լինեն այն երկու նշանավոր հայրերը, որոնք պիտի փոխանակեն Սահակին և Մեսրոպին։ Մանանդյանը գրել է իր գրքում (էջ 136) «Ճաւանուեն Օվայեցի Հովհաննես Ն Կաթողիկոսր»։ Որքա՞ն տատանվեց արդյոք հեղինակը և ո՞րքան գիմադրեց նրա գրիչը այս անունը գրելու համար։ Մի ողորմելի ոչնչություն, որ 22 տարվա կաթողիկոսության ընթացքում ուրիշ ոչինչ չի արել, եթե ոչ Բուղայի արշավանքների ժամանակ աստանդական թափառել և վերջն էլ մեռել է» (Հրաչյա Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», Դ հատոր, էջ 426—428)։

«Աշխարհացույց»ի հեղինակի հարցում մեզ հետ համաձայնվել է նաև ակադ. Ստեփանոս Մալխասյանցը։ Նա իր «Խորենացու առեղծվածի շուրջը» վերնագրով աշխատության մեջ գրում է. «Անհրաժեշտ եմ համարում հայտնել, որ 1936 թվին, երբ ես այս աշխատությունը գրում էի, ակադեմիկոս Մանանդյանի բերած ապացույցները՝ Աշխարհացույցի Խորենացուն պատկանելու մասին՝ ինձ ես բոլորովին համոզիչ թվացին, և ես ուրախացա, որ այս կնճռոտ խնդիրը վերջնականապես լուծվեց բավարար կերպով։ Բայց 1938 թվին ես Երևանում կարդացի Պետական ձեռագրատան ավագ աշխատակից Աշոտ Աբրահամյանի ձեռագիր աշխատությունը Անանիա Շիրակացու և քննության առարկա եղող Աշխարհացույցի մասին։ Աշոտ Աբրահամյանը մի առ մի քննում է ակադ. Մանանդյանի բոլոր ապացույցները հօդուտ նրա կարծիքի, թե Աշխարհացույցը Խորենացուն է պատկանում, հերքում է այդ ապացույցները և իր կողմից բազմաթիվ անհերքելի ապացույցներ է բերում, որ այս Աշխարհացույցը պատկանում

է Շիրակացուն։ Ի միջի այլոց՝ նա մի առ մի քննելով Պետական մատենադարանի Աշխարհացույցի 36 ձեռագիր օրինակները և նրանց ճյուղագրությունը կազմելով՝ ցույց է տվել, որ նորենացու անունը կրում են Աշխարհացույցի նորագույն ձեռագրերը (սկսած 1600 թվականից), իսկ նրանից առաջ գրված հնագույն 7 օրինակ հեղինակի անուն չեն կրում։ Բերում է նաև մի շարք մատենագրական ցուցումներ, համեմատություններ Շիրակացու գրվածքների և Աշխարհացույցի։ Ինձ համար այլևս կասկած չմնաց, որ Աշխարհացույցը Շիրակացու գործն է։ Այս բացատրությունը տալուց հետո, այլևս հարկ չեմ համարում իմ այս աշխատության մեջ գրածս փոփոխել, քանի որ իմ տարաձայնությունն ակադ. Մանանդյանի հետ ոչ այնքան վերաբերում է Աշխարհացույցի հեղինակի անձին, որքան գրության ժամանակին և իմ պնդումները, թե Աշխարհացույցը 9-րդ դարի գործ չէ, այլ 7-րդ դարի կամ ավելի հին ժամանակի՝ դարձյալ մնում են իրենց ուժի մեջ» (էջ 24)։

Այսպիսով, անվիճելի դարձավ, որ «Աշխարհացույցը Շիրակացու աշխատությունն է. իսկ այն, ինչպես գիտեք, բացառիկ արժեք ունի ո՛չ միայն Հայաստանի, այլև մեր հարևան ժողովուրդների՝ Վրաստանի, Պարսկաստանի, Աղվանից աշխարհի և Հյուսիսային Կովկասի պատմական աշխարհագրության համար։ Այս մասին առանձին աշխատություն ունի գրած պրոֆ. Հ. Մարկվարտը («Eranschahr nach der Geographie die Ps. Moses Choren»), հետաքրքրվողը կարող է կարդալ այն։

***

Շիրակացու գիտական աշխատություններից բացառիկ արժեք ունի նրա թվաբանությունը, որի համար և նա ստացել է «համարող», այսինքն մաթեմատիկոս մականունը։

Մինչև վերջին ժամանակները Շիրակացու մաթեմատիկական աշխատություններից հայագիտության մեջ, ինչպես ասացինք, հայտնի էին միայն նրա թվաբանական 24 խնդիրները «Ցաղագս ճարտման և լուծման» վերնագրով։ Այս խնդրագիրքը անցյալում հրատարակվել է մի քանի անգամ. հրատարակվել է «Բազմավէպ»ի «Սիոն»ի և «Արարատ»ի մեջ։ Այն թարգմանվել է նաև ռուսերեն՝ ակադ. Հովսեփ Օրբելու կողմից, որը վերահրատարակել է պրոֆ. Լ. Մելիք-սեթ-բեկը մաթեմատիկայի պատմությանը նվիրված իր ռուսերեն մի աշխատության հավելվածում։ Շիրակացու թվաբանության ուսումնասիրությամբ վերջերս մասնագիտական լուրջ ուսումնասիրություն է սկսել մաթեմատիկոս դոցենտ Գ. Պետրոսյանը։

Առաջին անգամ ակադ. Հովսեփ Օրբելին է, որ ուսումնասիրելով այս խնդրագիրքը, եկել է այն եզրակացության, որ ներկա խնդրագիրքը Շիրակացու ամբողջական գործը չէ, այլ նրա ընդարձակ աշխատության միայն մի հատվածը։ Շիրակացու խնդրագիրքը, ինչպես նաև նրա մյուս ստեղծագործությունները, հասել են մեզ ոչ ամբողջական ձևով։

Մեր պրպտումները լիովին արդարացրին ակադեմիկոսի կռահումները։ Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 1760 ձեռագրում մեզ հաջողվեց հայտնաբերել Շիրակացու թվաբանության ընդարձակ տեքստերը և հրատարակել նրանք 1939 թվին Երևանի Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ»ի 11-րդ հատորում, իսկ հետագայում մտցնել այն մեր «Անանիա Շիրակացու Մատենագրությունը» հատորի մեջ, որ լույս տեսավ 1944 թվին։ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Շիրակացու թվաբանական աշխատության մի ընդօրինակություն, Կոստանդնուպոլսի Պատրիարքարանի ձեռագրերից մեկում, մեզնից առաջ, հայտնի է եղել Բաբգեն կաթողիկոս Կյուլեսերյանին, բայց նա չի հրատարակել, բավարարվել է փոքրիկ նմուշներ բերելով, չհիշելով անգամ ձեռագրի համարը։

Մեր Մատենադարանում հայտնաբերված Շիրակացու թվաբանության տեքստից պարզվեց հետևյալը (բերում ենք մեր եզրակացությունները «Անանիա Շիրակացու Մատենագրություն» աշխատությունից).

1. Շիրակացին իր թվաբանության դասագիրքն սկսում է աշակերտներին ուղղված մի ներածականով, որն ունի «հոստոման աշա-

կերտացնե վերնագիրը։ Իր այդ ներածականում նա հանձնարարում է աշակերտներին ջանասիրությամբ սովորել թվաբանության դասընթացքը, որն ինքը շարադրել է սեղմ և պարզեցված ձևով։

2. Շիրակացու ներածականին անմիջապես հետևում են նրա դումարման աղյուսակները, որոնք կոչվում են «Ընդունելուրիւն», այսինքն՝ դումարում, ընդունել բառից՝ թվերն իրար վրա ավելացնելու իմաստով։ Այս աղյուսակը կազմված է հետևյալ ձևով.

Ա Ա Բ	1+1=2
Ա Բ Դ	1+2=3
Ա Դ Դ	1+3=4

Բ Բ Դ	2+2=4
Բ Գ Ե	2+3=5
Բ Դ Զ	2+4=6

Է Է ԺԴ	7+7=14
Է Ը ԺԵ	7+8=15
Է Թ ԺԶ	7+9=16

«Ընդունելուրիւն»ը, ինչպես երևում է, համարվել է թվաբանական դասընթացքի առաջին մասը և կոչվել է «Նախավարժու�ն»։

3. Դումարման գործողությանը հետևել է հանումը, որը կոչվել է «Թացերթուրիւն» կամ «Թացդրուրիւն», բաց տալ՝ բաց երթալ իմաստով։

Հանման գործողության մեջ ընորոշ է նվազելին հանելիից առաջ դնելու երևույթը։ Ասվել՝ այսքանից հանած այսքան, հավասար է այսքանի, այլ այսքանը հանած այսքանից հավասար է այսքանի։ Բերենք մի աղյուսակ.

Ա Բ Ա	1-ը	հանած	2-ից = 1-ի
Ա Գ Բ	1-ը	հանած	3-ից = 2-ի
Ա Դ Գ	1-ը	հանած	4-ից = 3-ի

Բ ԺԱ Թ	2-ը	հանած	11-ից = 0-ի
Բ Ժ Ը	2-ը	հանած	10-ից = 8-ի
Բ Թ Է	2-ը	հանած	9-ից = 7-ի

Հանման գործողությունը թվաբանական դասագրքում համարվել է դասընթացքի երկրորդ մասը և կոչվել է «Գերավարժուման»։

4. Հանման աղյուսակներից հետո շարադրվել են բազմապատկման աղյուսակները՝ փոքրիկ, կոկիկ առաջարանով։ Բազմապատկման գործողությունը կոչվել է «Բազմապատիկք»։ Աղյուսակների շարադրման եղանակը նույնն է, ինչ «ընդունելութեանը» և «բացդրութեանը».

Ա Բ Բ	1×2 = 2
Բ Բ Դ	2×2 = 4
Բ Գ Զ	2×3 = 6

Ժ Բ Ի	10×2 = 20
Ի Բ Խ	20×2 = 40
Լ Բ Կ	30×2 = 60

Ճ Ա Ճ	100×1 = 100
Մ Բ Ն	200×2 = 400
Ն Բ Պ	400×2 = 800

Բազմապատկության աղյուսակը Շիրակացին սկսում է մեկից և հասնում է 81 միլիոնի (9.000×9.000=81.000.000)։

Հետաքրքիր է այստեղ մեծ թվերի համար բյուրի նշանի գործածությունը՝ 10.000 մեծացումով։ Գեռ իր ժամանակին բանասեր

Գալուստ Տ. Մկրտչյանը, «Արարատ»ում տեղավորած իր հոդվածներից մեկում, պարզել է բյուրի և կեսի նշանների գործածությունը հայ մատենագրության մեջ և բերել մի քանի օրինակներ։ Բյուրի նշանը Շիրակացու թվաբանության դասագրքում գործ է ածված բազմաթիվ անգամներ։ Նրա թվական համարժեքը հետևյալն է. եթե սովորական թվահաշվում Ա ունի մեկի նշանակություն, ապա նրա վրա բյուրի նշան դնելիս ստանում է Ա=10.000. նշանակություն, կամ ժ=100.000-ի, ռ=1.000.000-ի, Ռ=10.000.000-ի և այլն։

Շիրակացու «Բազմապատիկքոի վերջին աղյուսակը հետևյալն է.

Ա՝ = 10.000	Խ՝ = 400.000	Ջ՝ = 7 000.000
Բ՝ = 20.000	Ծ՝ = 500.000	Ղ՝ = 8.000.000
Գ՝ = 30.000	Կ՝ = 600.000	Ղ՝ = 9.000.000
Դ՝ = 40.000	Հ՝ = 700.000	Ռ՝ = 10 000.000
Ե՝ = 50.000	Ձ՝ = 800.000	Ս՝ = 20.000.000
Զ՝ = 60.000	Ղ՝ = 900.000	Վ՝ = 30.000.000
Է՝ = 70.000	Ճ՝ = 1.000.000	Տ՝ = 40.000.000
Ը՝ = 80.000	Մ՝ = 2.000.000	Ր՝ = 50.000.000
Թ՝ = 90.000	Յ՝ = 3.000.000	Ց՝ = 60.000.000
Ժ՝ = 100.000	Ն՝ = 4.000.000	Ւ՝ = 70.000.000
Ի՝ = 200.000	Շ՝ = 5.000.000	Փ՝ = 80.000.000
Լ՝ = 300.000	Ո՝ = 6.000.000	Ք՝ = 90.000.000

Այսպիսով, պարզվում է, որ մեզ մոտ, արաբներից առաջ, զերոյի գործածությունը, ճիշտ է պրիմիտիվ ձևով, բայց եղել է, և այդ հնարավորություն է ընձեռել միլիոնների հաշվումներ կատարել։

«Բազմապատիկքը համարվել է Շիրակացու թվաբանական դասագրքի երրորդ դասընթացքը և կոչվել է «նռավարժություն»։

5. Բազմապատկության աղյուսակներից հետո Շիրակացու դասագրքում շարադրվել է «դարա» և «կոճատ» թվերի շարքը, այսինքն «կենտ և զույգ» թվերը. զույգ թվերի շարքը սկսվում է՝ Բ Դ Զ Ը Ժ և այլն։ Կենտ թվերի շարքը սկսվում է՝ Ա Գ Ե Է Թ ԺԱ և այլն։ Ուշադրության արժանի է Շիրակացու յուրատեսակ մոտեցումը կենտով սկսվող տասնավորներին. նրա մոտ օրինակ՝ 10, 30, 50, 70 թվերը ո՞չ թե զույգ թվեր են, այլ՝ կենտ։

6. Շիրակացու թվաբանության դասագրքի հինգերորդ բաժնում շարադրված է «Վեցհազարեակ»ը՝ նրա ամենից դժվար վերծանելի տեքստը։ Ի միջի այլոց, պետք է ասեմ, որ «Վեցհազարեակ»ը, ինչպես և նախորդ թվաբանական աղյուսակները, Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի վերև հիշված ձեռագրում անլափ խառնված էին և աղավաղված։ Դրանով պետք է բացատրել, որ ձեռագրերի այնպիսի ճանաչված մասնագետ, ինչպիսին Հ. Ն. Ակինյանն է, մեր

մատենադարանի այս ձեռագիրը բնութագրելիս, Շիրակացու թվաբանությունը սխալմամբ համարել է «Մասն ինչ պարզատումարիս»։

«Վեցճազարեակ»-ը հայագիտության մեջ վաղուց էր հայտնի, սակայն մնում էր չվերծանված։ «Վեցճազարեակ»ի շուրջ ստեղծված էին զանազան առասպելներ. այն համարում էին ախթարք և մոգական ինչ-որ խորհրդավոր իմաստներ վերագրում նրան։ Հնում քաղաքացիություն ուներ նույնիսկ այն կարծիքը, որ այդ տեքստը, ընդհանրապես, անկարելի է վերծանել. ո՛վ փորձի վերծանել, կարող է խելագարվել։ Բավականին երկար ժամանակ մենք զբաղվեցինք այդ տեքստի վերծանությամբ։ Համառությամբ շարունակեցինք «Վեցճազարեակ»ի մեր պրոպրտումները, մինչև որ վերջնականապես վերծանեցինք։

Վերծանությունից պարզվեց, որ Շիրակացու «Վեցճազարեակ»ը — այդ մաթեմատիկական տեքստ է, նրա թվաբանական բաժանման գործողությունը։ «Վեցճազարեակ» է կոչվել այն պատճառով, որ վեց հազար (6.000) թիվն է, որ բաժանվում է հայկական այբուբենի բոլոր տառաթվերի վրա՝ հին բաբելական վեցական սիստեմով։ Թերենք մի փոքրիկ աղյուսակ.

Ա	Ճ	Ճ	1-ը	6.000	անգամ կա 6.000-ի մեջ,
Բ	Վ	Ճ	2-ը	3.000	անգամ կա 6.000-ի մեջ,
Գ	Ս	Ճ	3-ը	2.000	անգամ կա 6.000-ի մեջ,
Դ	ՌՇ	Ճ	4-ը	1.500	անգամ կա 6.000-ի մեջ,
Ե	ՌՄ	Ճ	5-ը	1.200	անգամ կա 6.000-ի մեջ,
Զ	Ռ	Ճ	6-ը	1.000	անգամ կա 6.000-ի մեջ,
Է	ՊԾԷ	Ճ	7-ը	857	անգամ կա 6.000-ի մեջ (կլոր թվով),
Ը	ՉԾ	Ճ	8-ը	750	անգամ կա 6.000-ի մեջ և այլն։

Վերծանության դժվարությունն առաջացել է նրանից, որ միջնադարում արտագրող մեր գրիչները չհասկանալով այդ աշխատության իմաստը, անխիղճ ձևով աղավաղել են, սակայն այժմ դժվար չէր վերականգնել, երբ հասկանալի դարձավ տեքստի իմաստը։

Շիրակացու «Վեցճազարեակ»ին հետևել են նրա թվաբանական 24 խնդիրները, որոնք, ինչպես ասացինք, մեզնից առաջ հայտնի էին հայագիտության մեջ և հրատարակված։

Թվաբանական այս խնդիրներից հետո Շիրակացին շարադրել է իր ուրախական ինը խնդիրները, կամ ինչպես ինքն է անվանել՝ «Խրախճանականմ»ը։ Անհրաժեշտ ենք համարում այստեղ թարգմանաբար բերել նրա այդ խնդիրներից մեկը, որպեսզի դուք պատկերացնեք նրանց բնույթը.

«Ասա ընկերոջդ՝ թե մի հոն (հին ժողովուրդներից մեկի անունը) ինձ մոտ 100 տարի թոշնապահ էր և օրական 100 ձու էր ուտում. իմացիր, թե քանի՞ ձու է կերել ընդամենը։ Եթե քո ընկերը լավ հաշիվ գիտի, իսկույն կասի՝ կերել է 365 բյուր (3.650.000) ձու, իսկ եթե տգետ է՝ ապա նրա շարշարանքը թվերի վրա ուրախություն կպատճառի քեզ»։

Շիրակացին, «Խրախճանականմ»ից հետո, գրել է իր փոքրիկ վերջաբանը, որը, դժբախտաբար, հասել է աղավաղված վիճակով։

(Շարունակելի)

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐԵՎԱՇՈՂ ԵՐԿՐԻ ԱՐԵՎԱՎԱՌ ՆԿԱՐԻՉԸ

(Ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի
ծննդյան 75-ամյակի առթիվ)

Մայրամուտը մոտենում է։ Վրա է հասնում Երևանի ամառային սքանչելի երեկոն։ Վառ արևը դեռևս ցերեկվա պես այրում է, սակայն քիչ առաջ տեղացած կարճատև հորդ անձրևը արդեն զովացրել է մայրաքաղաքի բարեզարդ, մաքուր փողոցները։ Ջրի կաթիլները սկսել են շողշողալ ծառերի խիտ սաղարթների վրա։ Փչում է ամառային օրվա այդ ժամերի համար սովորական երևանյան քնքուշ, զով քամին։ Ներծծված Սևանի սառնորակ ջրերի, Գեղամա գմբուխտյա սարալանջերի զովությամբ, նա քմահաճորեն շոյում է ուրախ երևանցիների զգեստները, մազերը, որոնք աշխատանքային օրից հետո դուրս են եկել փողոց զբոսնելու։ Ամենուրեք տիրում է բերկրալի աշխուժություն. ամեն կողմից լսվում են աշխույժ խոսակցություններ, խինդ ու ծիծաղ, երաժշտություն։

Եվ ահա, հանկարծ, Օպերայի շենքի մոտով անցնող մարդկանց մեջ շշուկ է տարածվում. մարդիկ կանգ են առնում և ուշադիր նայում անցնող երկու պատկառելի անցորդների, որոնք թևանցուկ քայլում են փողոցով. ովքե՞ր են նրանք, ինչո՞ւ են նրանք գրավում անցորդների ուշադրությունը— Նրանցից մեկը գեղանկարչության պոետ Մարտիրոս Սարյանն է, իսկ մյուսը՝ պոետիայի նկարիչ Ավետիք Իսահակյանը, որոնք հավասարաչափ սիրված են բոլորի կողմից։ Հայկական կուլտուրայի այդ երկու խոշորագույն ներկայացուցիչները, ինչ-որ հանդիսավորությամբ, քայլում են դեպի Օպերա։ Նրանք՝ այդ երկու ականավոր մարդիկ, հայրենի կառավարության այդ երկու հեղինակավոր անդամները, քայլում են իրենց հարազատ հողի վրա հաստատուն քայլերով, այն հողի, որի փառքը նրանք բարձրացրել են իրենց երգած ու նկարած Մասիսից ու Արագածից էլ վեր։

Դեմ-հանդիման եկող մարդկային հոսանքը հաճոյակամորեն նրանց առաջ ընկրկում, ճանապարհ է տալիս։

Երկու բարեկամները՝ դույների կախարդը և խոսքի հմայիչ վարպետը գնում են Պետական օպերայի թատրոնը՝ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի երջանիկ ծննդյան 75-ամյա հոբելյանական հանդեսին ներկա լինելու։

Թատրոնի հսկայական հանդիսասրահը լեփ-լեցուն է։ Այստեղ են հավաքվել մայրաքաղաքի առաջավոր գիտնականները, գրողները, նկարիչները, կոմպոզիտորները, ճարտարապետները և գիտական ու հասարակական այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ։

Գեղեցիկ զարդարված բեմում, նախագահության շարքում, նստած են կուլտուրայի մինիստր Անդրանիկ Շահինյանը, ակադեմիկոս-բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, ժողովրդական արվեստագետ-քանդակագործ Արա Սարգսյանը, Հայաստանի Նկարիչների միության նախագահ Գաբրիել Գյուրջյանը, Նկարիչների միության պատասխանատու քարտուղար Էդվարդ Խարեկյանը, գրողներ Նաիրի Զարյանը, Ստեփան Զորյանը, Արազին, ՍՍՌՄ ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանը, Գիտությունների ակադեմիայի փոխ նախագահ Մկրտիչ Ներսիսյանը և եղբայրական ռեսպուբլիկաներից ժամանած բազմաթիվ անվանի հյուրեր։

Հանդիսականները բուռն և երկարատև օվացիայով են դիմավորում բեմում երևացող



Ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյան

Թանկագին հոբելյարին՝ Մարտիրոս Սարյանին։

Նկարչուհի Հռիփսիմե Սիմոնյանը և քանդակագործ Բ·երեզա Միրզոյանը հոբելյարին մատուցում են կարմիր վարդերի մի մեծ փունջ։ Քանդակագործ ամուսիններ Կարո Մեծատուրյանը և Էդգա Աբրահամյանը մա-

աուցում են իրենց ձեռքով քանդակած մի գեղեցիկ մեդալ՝ հոբելյարի նկարով։ Ճարտարապետները մատուցում են գեղեցիկ ու խոշոր մի վազա։ Մատուցվում են բազմաթիվ այլ նվերներ ևս։

Կուլտուրայի մինիստր Անդրանիկ Ճահինյանը, ներածական խոսքով, բաց է անում հանդիսավոր ժողովը։

Մարտիրոս Սարյանի կյանքի ու գործունեության մասին զեկուցման համար խոսք է տրվում Պետական պատկերասրահի դիրեկտոր Ռուբեն Պարսամյանին։

Մարտիրոս Սարյանը ծնվել է 1880 թվականին Նոր-Նախիջևանում, աշխատավոր գյուղացու ընտանիքում։ Վաղ հասակից զրկվելով հորից, նա ապրում է իր մեծ եղբոր՝ Հովհաննեսի խնամակալության ներքո։ Արդեն իսկ դպրոցական դասընթացից, ապագա նկարիչն արտակարգ ընդունակություններ է ցուցաբերում նկարչության մեջ։ Երեխայի հարազատները որոշում են նրան տալ նկարչական կրթություն։ 1897 թվականին կոնկուրսի քննությունները փայլուն կերպով հանձնելուց հետո, Սարյանն ընդունվում է Մոսկվայի նկարչական, Ճարտարապետական և քանդակագործական բարձրագույն դպրոցը,— այն հռչակավոր դպրոցը, որի անվան հետ կապված են ռուսական ռեալիստական արվեստի այնպիսի ականավոր դեմքեր, ինչպիսիքն են՝ Ա. Սավրասովը, Վ. Պոլենովը, Վ. Մակովսկին, Վ. Սերովը և ուրիշները։

1901 և 1902 թվականներին, արձակուրդների ժամանակ, Սարյանը գալիս է առաջին անգամ Հայաստան և նկարում հարազատ բնության իր առաջին պեյզաժները։

Ուսման դասընթացը գերազանց ավարտելուց հետո, Սարյանը թեակոխում է նկարչի ինքնուրույն ուղին։ Արևի լույսով և արևելյան կոլորիտով տոգորված նրա վառ փայլուն նկարները հիացմունք են առաջ բերում Մոսկվայի առաջավոր նկարիչների շրջանում։

Իր Հայրենիքին ծառայելու բուռն ձգտումով համակված, Մարտիրոս Սարյանը 1921 թվականի օգոստոսին, իր ընտանիքի հետ միասին, տեղափոխվում է Երևան ու գործուն մասնակցություն ունենում նկարչական դպրոցի, թանգարանի, հին հուշարձանների կոմիտեի և այլ կուլտուրական ձեռնարկների կազմակերպման գործում։

Հարազատ հողի վրա սկսվում է նկարչի ստեղծագործության նոր, առավել բեղմնավոր ժամանակաշրջանը։

Տարեցտարի ավելի ու ավելի փայլուն կերպով նա ստեղծում է իր սիրեցյալ Հայրենիքի բնությունը պատկերող հիանալի կտավներ, ստեղծում է մեր Հայրենիքի ականավոր գործիչների, այն է՝ Գարեգին Լևոնյանի, Արուս Ոսկանյանի, Վահրամ Փափազյանի, Միքայել Մանվելյանի, Հասմիկի, Եղիշե Չարենցի, Ասքանազ Մռավյանի, Ալեքսանդր Թամանյանի, Ավետիք Իսահակյանի, մարաջախտ Բաղրամյանի, ծովակալ Իսակովի և ուրիշների դիմանկարներից կազմված մի հիանալի պատկերասրահ։

Իրան, Եգիպտոս, Թյուրքիա, Հունաստան, Իտալիա և այլ երկրներ կատարած նրա ուղևորություններն է՛լ ավելի են ընդլայնում նրա հարուստ նկարչական մտահորիզոնը։ Նրա ստեղծած շարունակ նորանոր աշխատությունները ավելի են մեծացնում նրա հռչակը։

Մեր մեծանուն նկարիչը միաժամանակ լավ հասարակական աշխատող է։ Երկար տարիներ նա նախագահն է Հայաստանի Նկարիչների միության։ Նա հանդիսանում է նաև ՍՍՌՄ Նկարիչների միության կազմկոմիտեի անդամ։ 1947 թվականին ընտրվել է ՍՍՌՄ Նկարչական ակադեմիայի իսկական անդամ։

Սովետական Միության կառավարությունը բարձր գնահատելով Մարտիրոս Սարյանի աչքի ընկնող ծառայությունները, երկու անգամ նրան պարգևատրել է երկրի բարձրագույն պարգևով՝ Լենինի շքանշանով։ 1954 թվականի մարտի 14-ին Սարյանը երրորդ անգամն է, որ միաձայն ընտրվում է ՍՍՌ Միության Գերագույն Սովետի պատգամավոր։

Մոսկվայի մեծ թատրոնում Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի բեմադրությունը ձևավորելու համար, որ ընդհանուր հիացմունք առաջ բերեց, Սարյանն արժանացավ Ստալինյան մրցանակի։

«Սարյանը ազգային կոլորիտի նկարիչ է. նրա արվեստի արմատները սուզվում են մեր

հին արվեստի մեջ։ Սակայն, երբ օտարը հիանում է մի ուրիշ ժողովրդի արվեստով, հասկանում է, գնահատում և սիրում, ապա այդ արվեստն անվիճելիորեն դառնում է համամարդկային։ Մարտիրոս Սարյանի արվեստը բովանդակ աշխարհինն է, սիրելի է բոլորին»,— գրում է մեր բոլորին սիրելի Վարպետը՝ Ավետիք Իսահակյանը։

«Սրտանց սիրում և խորապես հարգում եմ Հայաստանի խոշորագույն և Սովետական Միության մեջ առաջավոր նկարիչ Մարտիրոս Սարյանին՝ նրա կենսահորդ արվեստի վառ օրինակի համար»,— գրում է հայտնի ակադեմիկոս Իգոր Գրաբարը։

Արևաշող Հայաստանի մեծ նկարչի մասին հիացմունքով են խոսել նաև ուկրաինական խոշորագույն ռեժիսյոր Դովժենկոն, ռուս ակադեմիկոս-նկարիչ Պլատովը, խոշորագույն ռուս արտիստներ Նեժդանովան, Պիրոգովը, վրացի նկարիչ Ուչա Ջապարիձեն և բոլոր նրանք, որոնց համար ընդհանրապես թանկ է գեղեցիկը և ազնիվը։

Սարյանի 75-ամյակի կապակցությամբ հոբելյանական հանձնաժողովի հասցեով Սովետական Միության զանազան ծայրերից՝ կուլտուրայի, գիտության, գրականության, արվեստի զանազան ականավոր գործիչներից ստացվել են հարյուրավոր ողջույնի նամակներ և հեռագրեր։

Մեր ժամանակի խոշորագույն նկարիչներից մեկի՝ մեր թանկագին հայրենակից Մարտիրոս Սարյանի ծննդյան 75-ամյակին նվիրված այդ երեկույթը անցկացվեց չտեսնված խանդավառությամբ։

Ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը լավագույն բարեկամն է նաև մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի։ Նա, վերջերս, Ավետիք Իսահակյանի հետ հաճախ է լինում Էջմիածնում՝ Տաճարի վերանորոգման աշխատանքների ընթացքն անձամբ դիտելու և շինարարներին ու որմանկարիչներին խորհուրդներ տալու համար։— Եվ դա հասկանալի է. ուրիշ էլ ովքե՞ր, եթե ոչ հայկական արվեստին լավագիտակ այդ երկու անձնավորությունները, այդ մեծ հայրենասերները պիտի սրտացավեին և դուրգուրանքով հետևեին հնագույն ճարտարապետական այնպիսի մի հուշարձանի, ազգային այնպիսի մի շնաշխարհիկ կոթողի վերանորոգման աշխատանքներին, ինչպիսին Էջմիածնի Մայր Տաճարն է։ Ուրիշ էլ ովքե՞ր, եթե ոչ Մարտիրոս Սարյանը, վրձինի այդ հոյակապ վարպետը, պետք է հետևեր հմայիչ Նաղաշ Հովնաթանի սքանչելի որմանկարների վերականգնման աշխատանքներին։

Ամբողջ հոգով, ամբողջ սրտով ցանկանում ենք Մարտիրոս Սարյանին երկար կյանք, արգասավոր աշխատանք՝ ի փառս օրավուր աճող, օրավուր ծաղկող մեր լուսաշող մշակույթի։

Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆՎԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ

Ռումինահայ թեմական խորհուրդը, թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանի նախաձեռնությամբ, Սովետական Միության հետ բարեկամական կապերի Ռումինական ընկերության (ԱՌԱՌԻՍ-ի) միջոցով, Հալեպական ՍՍՌ Պետական մատենադարանին նվեր է ուղարկել մեծ արժեք ներկայացնող 42 հայերեն ձեռագրեր։

Ռումինահայ թեմական խորհրդի նվեր ուղարկած այդ ձեռագրերը, դարերի ընթացքում, պահպանվել են Սուչավայի, Բոտոշանի, Ռոմանի, Ֆոկշանի, Բուխարեստի և այլ քաղաքների հայկական եկեղեցիներում։ 1927 թվականին, երբ Բուխարեստում բացվել է «Ռումանահայ կեդրոնական մատենադարանը», ռումինահայ ձեռագրերի մեծ մասը կենտրոնացվել է այնտեղ։ Հետագայում, երբ նշված հիմնարկության փոխարեն հիմնվել է Բուխարեստի «Հայ մշակույթի տուն» և ստեղծվել հատուկ ձեռագրական բաժին, ձեռագրերի թիվը մեծացել է և հասել 150-ի։ Ահա այդ ձեռագրերի ժողովածուից են վերցրես Երևանի Պետական մատենադարանի նվեր ստացած վերև հիշված 42 ձեռագրերը։

Դարերի ընթացքում բազմաթիվ հայերեն ձեռագրեր են գրվել Ռումինիայում, բայց նրանց մեծ մասը ժամանակի ընթացքում մատնվել է կորստյան։ Միջնադարյան տարեգրու Մինաս Թոխատեցին իր «Ողբ ի վերայ Օլախաց երկրի հայերուն» մեծարժեք քանատեղծության մեջ հաղորդում է 1551 թվականին Ռումինիայի Բուկովինա և Մոլդովա շրջանների յոթը հայաշատ քաղաքներում մեծ թվով հայերեն ձեռագրերի ոչնչացման մասին։ Հայերեն ձեռագրեր են ոչնչացվել հետագա թվականներին ևս։

Եվ ահա դարերի արյան ու մոխիրների միջով հասած ու ցարդ ռումինահայ սերունդների կողմից գուրգուրանքով պահպանվող հայերեն ձեռագրերի հավաքածուի ընտիր մասն է, որ օրերս ռումինահայ թեմական խորհրդի նվիրատվությամբ մուտքագրվեց Երևանի Պետական մատենադարանի հայերեն ձեռագրերի հարստատ գանձարանը։

Ստորև զետեղում ենք Ռումինիայից ստացված հայերեն ձեռագրերի ամբողջական ցանկը և տալիս այդ ձեռագրերի համառոտ նկարագիրը, փակագծերում զետեղելով Երևանի Պետական մատենադարանի հայկական ձեռագրերի ֆոնդում վերոհիշյալ ձեռագրերի ստացած նոր համարները։

1. *(№ 9434)* Ճաշոց գիրք.— Ընդօրինակվել է 1313 թվականին Երուսաղեմում Կարապետ երեցի կողմից։ Ձեռագրի հիշատակարանում հիշվում է Կիլիկյան Հայաստանի թագավոր Օշին։ Ձեռագիրը ավելի ուշ ստացել է Ալեր տիկինը։ Մի ժամանակ ասպատակողների ձեռքը գերի ընկնելուց և հետո էլ գերությունից ազատվելուց հետո, 1687 թվականին սույն ձեռագիրը տեղափոխվել է Ռումինիայի Տրանսիլվանիա շրջանի Ճուրճով (Գեորգեն) քաղաքը, որտեղ էլ նույն թվականին վերամշակվել է Ստեփանոս դպիր Կամենեցացու կողմից, որից հետո ձեռագիրը մինչև Բուխարեստի մատենադարանը փոխադրվելը երկար ժամանակ պահպանվել է Սուչավայի հայկական եկեղեցիներից մեկում։

2. *(№ 9485)* Ճաշոց գիրք.— Ընդօրինակվել է 1459—1460 թվականներին Աքքերմանում (ներկայումս Բելգորոդ-Դնեստրովսկի, Ուկրաինական ՍՍՌ) Նիկողայոս եպիսկոպոսի կողմից։ Ձեռագրի պատվիրատուն է Կյուրեղը, որը նվիրել է Ռումինիայի շրջաններից Մոլդովայի Ցաշ քաղաքի հայոց Ս. Աստվածածին եկեղեցուն։ Այս ձեռագիրը ևս Կաֆայում 1351 թվականին գրված ու 1451 թվականին գտնվող վերոհիշյալ քաղաքի նույն եկեղեցուն նվիրված ու այժմ Բուխարեստում պահվող Ավետարանի հետ կարևոր փաստ կարող է ծառայել Ցաշի Ս. Աստվածածին եկեղեցու ունեցած հին անցյալը ապացուցելու տեսակետից։ Հիշատակարանում գրիչը հիշում է նաև իր մի շարք օգնականներին, որոնք թուղթ են կոկել, տողն են քաշել, ծաղկելուն, այսինքն նկարելուն են ընկերակցել և այլն։ Ձեռագիրը ոսկյա, հակառակ գրչի և նվիրատուի փափագին, երկար ժամանակ չի մնացել Ցաշում։ 1618 թվականին հիշվում է մի Տեր Աստվածատուր, որը Սուչավայում ձեռագրի վերջի թերի մնացած մասն է լրացնում։ Իսկ սրանից հետո ավելի քան 300 տարի Սուչավայում պահվելուց հետո փոխադրվել է Բուխարեստի հայկական մատենադարանը։ Հիշատակարանում հիշվում է Մոլդովայի Մեծն Շտեֆան իշխանը (1457—1504 թ.թ.)։

3. *(№ 9486)* Մաշտոց.— Արտագրվել է 1555 թվականին Լվովում, Ներսես քահանա Արքիշեցու կողմից։ Հիշատակարանում հիշվում է Լեհաստանի թագավոր Զիգմունդ երկրորդ Ավգուստոս։ Ձեռագիրը երկար ժամանակ պահվել է Սուչավայի Ս. Սիմեոն հայկական եկեղեցում։



Բուն Մեսրոպյան երկաթգրով գրված
10-րդ դարի Ավետարանի պատառիկ

4. (№ 9487) Մաշտոց.— Ընդօրինակվել է 1565 թվականին Տեր Անդրեասի պատվերով։ Տեղն ու արտագրողի անունը անհայտ են, հիշատակարանի այդ մասը պատռված լինելով։ Ձեռագիրը Ռումինահայ մատենադարանին է նվիրել Ռումինահայ թեմի հանգուցյալ առաջնորդ Հուսիկ արքեպիսկոպոս Ջոհրապյանը (1871—1942 թ. թ.)։

5. (№ 9488) Կանոնագիրք.— Ընդօրինակվել է 1621 թվականին Կամենեցի Ս. Աստվածածին և Ս. Նիկողայոս հայկական եկեղեցիներում Գրիգոր քահանայի կողմից։ Հիշատակարանում հիշվում է Լեհաստանի թագավոր Զիգմունդ երրորդը։

6. (№ 9489) Հայսմավուրք.— Արտագրվել է 17-րդ դարի առաջին կեսին Կաֆայում, Մինասի ու նրա ուսուցիչ Պարսամի կողմից։ Մաղկել և կազմել է Նիկողայոս դպիրը։ Ձեռագիրը գրվել է վազամեռիկ կաֆայեցի Դեմիրի պատվերով և իր եղբոր՝ խոջա Հակոբի միջոցով նվիրվել է Ցաշի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն։ Ցաշի հայոց այդ երկրորդ եկեղեցին կառուցվել էր 1816 թվականին, բայց 1828 թվականի հրդեհի ժամանակ այն հրո ճարակ էր արվել։ Հետագայում հայերի բոլոր փորձերը՝ այդ եկեղեցին կառուցելու և նրան կից հայ աղջկանց դպրոց բաց անելու համար հաջողություն չունեցան։ Ներկայումս այդ եկեղեցու հիմքն իսկ չկա։

7. (№ 9490) Շարակնոց.— Ընդօրինակվել է 1640 թվականին Կոստանդնուպոլսում։ Ձեռագիրը Ռումինահայ մատենադարանին նվիրվել է հնագետ դոկտ. պրոֆ. Գրիգոր Ավագյանի կողմից։

8. (№ 9491) Ճաշոց.— Ընդօրինակվել է մագաղաթի վրա 1667 թվականին Կոստանդնուպոլսում Փիլիպոս քահանայի կողմից, Տեր Հովհաննեսի և Տեր Գոդոսի պատվերով։ Ձեռագիրն ունի բազմաթիվ խորաններ, լուսանցազարդեր և գարդագրեր։ Ձեռագիրը Ռումինահայ մատենադարանին նվիրվել է Բուխարեստի ավագ քահանա Իգնատիոս Քիլիմլյանի կողմից, որը այն գտել է Համաշխարհային առաջին պատերազմի ընթացքում Սիրիայի Դամասկոս քաղաքում տարագրյալներից։

9. (№ 9492) Տոնացույց.— Արտագրվել է 1632 թվականին։

10. (№ 9493) Ավետարան.— Ընդօրինակվել է 1712 թվականին Մարաշում, Զաքարիա քահանայի կողմից, Տեր Հուսիկի պատվերով։ Այս ձեռագիրը ևս նվիրվել է Իգնատիոս ավագ քահանա Քիլիմլյանի կողմից։

11. (№ 9494).— Քարոզգիրք.— Քարոզգրքում ամփոփված են Հակոբ Նալյան Պատրիարքի անտիպ քարոզները։ Ձեռագիրը գրված է Հեղինակի կողմից Հավանաբար Կոստանդնուպոլսում, 1758 թվականին։ Սույն ձեռագիրը ևս նվիրվել է 1928 թվականին Իգնատիոս ավագ քահանա Քիլիմլյանի կողմից։

12. (№ 9495) Խորհրդատետր.— Ընդօրինակվել է 1690 թվականին Գևորգ դպրի կողմից Գրիգոր Նարբենա քահանայի համար։ Հավանաբար գրվել է Սուլավայում։ Ձեռագիրը բերվել է Սուլավայից։

13. (№ 9496) Տոնացույց.— Արտագրված մագաղաթի վրա 1660 թվականին Ռումինահայ մատենադարանին նվիրել է Ա. Ճապուրովը։

14. (№ 9497) Ավետարան.— Ընդօրինակվել է 17-րդ դարի սկզբին Պողոսի կողմից, խոջա Անդրեասի ու խոջա Պաղտասարի պատվերով և այս վեր-

Ղուկաս ավետարանիչ

(14-րդ դարի ձեռագիր։ Մանրանկարը՝ Սարգիս Հիմակի)։

Ճաշոց գիրք

(Ընդօրինակված 1667 թ., Կոստանդնուպոլսում)։

չիններիս կողմից նվիրվել է Ճաշի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն։

15. (Մ 9498) «Սէր Աստուծոյ և անառաջ նոտագոյն ժառանգութիւն».— Ընդօրինակվել է 1810 թվականին Սերովբե դպիր Պետրոսյան Ակնեցու կողմից, Կոստանդնուպոլսում։ Իտալերենից թարգմանվել է Ղուկաս վարդապետ Խարբերդցու կողմից 1741 թվականին Հովհաննես Պատրիարք Կոստանդնուպոլսեցու խնդրանքով և համառոտվել է Սրուսաղեմի փոխանորդ Պողոս լիհանեան վարդապետ Ադրիանուպոլսեցու կողմից։ Ձեռագիրը Ռումինահայ մատենադարանին նվիրել է Ռումինահայ թեմի հանգուցյալ առաջնորդ Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրապյանը։

16—17. (Մ Մ 9499 և 9500) Բժշկարան.— Բաղկացած է երկու հատորից։ Գրվել է հայ հեղինակի կողմից 19-րդ դարի սկզբին։ Հեղինակն ու տեղը անհայտ են։ Հավանաբար գրվել է Կոստանդնուպոլսում։ Սույն ձեռագիրում կան մարդաբանության, առողջապահության, դիետիկայի, մանկաբուժության և հատկապես վիրաբուժության հարցերին նվիրված բազմաթիվ նյութեր։ Հեղինակը իր աշխատությունը գրելիս օգտագործել է օտար և հայ բժիշկների փորձը։ Հայ երևելի բժիշկներից հեղինակը հիշում է իր ուսուցիչ «Թիֆլիզեցի Յովհաննէս հարտար բժշկին» և Հնդկաստանում երկար տարիներ բժշկությամբ զբաղված Կարբեցի բժիշկ Դավիթ Մկրտչյանին։ Սույն բժշկարանի երկու հատորները Ռումինահայ մատենադարանին է նվիրել 1938 թվականին ռումինահայ բանաստեղծ Զարեհ Պլպուլը։

18. (Մ 9501) «Համառօտ պատմութիւն անցիցեն».— Հավանաբար Մանվել վարդապետ Կյումյուշխանեցու մի ընդարձակ աշխատության համառոտագրությունն է։ սույն ձեռագիրը, որ բովանդակում է նյութեր նվիրված Դանիել-Դավթյան կաթողիկոսական պայքարին։ Գրվել է Կոստանդնուպոլսում 1799—1800 թվականներին։

19. (Մ 9502) «Զանազան մեկնութիւն».— Ընդօրինակվել է Կոստանդնուպոլսում 1823—1824 թվականներին, Գևորգ վարդապետ Իզմիրցի Ֆրանկյուլյանի կողմից։ Ձեռագրի գրիչը ռումինահայ պատմության մեջ ծանոթ է որպես Գևորգ Եպիսկոպոս Էմմիշեի և 1842 թվականին Կոստանդնուպոլսի Պատրիարքի կողմից նշանակվել է Բուխարեստի և Մոլդովայի հայերի առաջնորդ։ Նա թողել է նաև իր կողմից հեղինակված մի քանի երկասիրություններ։ Գևորգ Եպիսկոպոսը վախճանվել է Բուխարեստում և թաղվել հայկական եկեղեցու բակում։ Սակայն այսօր նրա գերեզմանի հետքը կորել է։

20. (Մ 9503) Քարոզգիրք.— Ընդօրինակվել է 1795 թվականին և մեծ մասամբ բովանդակում է Սիմեոն Երևանցու քարոզները։ Ձեռագիրը գարձյալ նվիրվել է Իգնատիոս ավագ քահանա Քիլիմլյանի կողմից։

21. (Մ 9504) «Պանդարան գիտելեաց».— Ընդօրինակվել է Ֆոկշանում 1839—1849 թվականներին ռումինահայ ուսուցիչ Մարտիրոս Ջերքեզյանի կող-

Տայսամաւուրք

(Ընդօրինակված 17-րդ դարում Կաֆայում)

մից։ Ձեռագրում կան գտորոցում դասավանդելի մի շարք առարկաների վերաբերյալ նյութեր հայերեն և ռումիներեն լեզուներով։ Կարևոր նշանակություն ունեն 19-րդ դարի առաջին կեսի ռումինահայ անվանի մանկավարժների՝ Գաբրիել և Աստվածատուր վարժապետների գրվածքները նվիրված Ֆոկշանի հայկական դպրոցին, շնորհակալական երգեր ուղղված ռուսական և մոլդովական պետություններին, երգիծական մի հետաքրքրական գրվածք Բուխարեստի հայկական դպրոցի մի շարք աշխատողների մասին և այլն։ Ձեռագիրը Ռումինահայ մատենադարանին նվիրվել է Սուլավայի հայերի հոգևոր հովիվ Գնել քահանա Մանուելյանի կողմից 1929 թվականին։

22. (№ 9505) Ջարոզդիրք.— Ընդօրինակվել է 1771 թվականին Հայրենում Ս. Հակոբ Մծբնա սարկավագ Տեր Մելքոնի կողմից։ Պատկանել է ռումինահայ քահանա Ղևոնդ Միքայելյանին։ Ռումինահայ մատենադարանին նվիրել է վերջինիս որդին՝ Գրիգոր Միքայելյանը։

23. (№ 9506) Քիրակեռություն ճայերեն լեզվի.— Գրել է դասատու Հովհաննես Ս. Անդրեասյանը 1867 թվականին Կոստանդնուպոլսում։ Հեղինակը Բուխարեստի հանգուցյալ ավագ քահանա Հարություն Անդրեասյանն է (1838—1925 թ. թ.)։ Ձեռագիրը նվիրվել է հեղինակի որդու՝ հանգուցյալ Խաչիկ Անդրեասյանի կողմից։

24. (Մատենադարանի արխիվային բաժին, թղթապանակ 88բ, վավերագիր № 147).— Բուխարեստի հայ համայնքի ղեկավարներից առևտրական Կարապետ Անուշյանի անձնական հաշվեմատյանը (1845—1857 թ. թ.)։ Բուխարեստի Հայ մշակույթի տան արխիվային բաժնում գտնվում է Վալախիայի իշխան Բարբու Նտիրբեյի հրովարտակը, որով Կարապետ Անուշյանին տրվում է պիտարի աստիճան։ Կարապետ Անուշը մահացել է 1870 թվականին։ Նա հավանաբար զավակն էր ռումինահայ առաջին երգիծաբան Գրիգոր Անուշի, որի մեծադիր նկարն ու գրած ձեռագիրը պահվում է դարձյալ Հայ մշակույթի տանը։

25. (№ 9507) «Թումիրոս Կուրանին և յԱյրարատեան մուզայից զրկեալ ի Բնարէ».— Գրել և հավանաբար նաև հեղինակ՝ խաչատուր Գրիգորյան-Սահակյանը։ Գրվել է 1832—1845 թվականներին Մոսկվա—Բուխարեստ։ Ձեռագիրը ամբողջովին պաշտոնողական մի գրվածք է Հայ Եկեղեցուն և լույս տեսած «Մուզայք Արարատեան» հատորին, որի աշխատակիցներից մեկն էր հավանաբար նաև այս ձեռագրի հեղինակը։ Ձեռագիրն ուղղված է պապական եկեղեցու և վերոհիշյալ հատորը ընդունող Մխիթարյանների դեմ։ Ձեռագիրը նվիրվել է Հաշիպապ Աճեմյանի կողմից։

26. (Մատենադարանի արխիվային բաժին, թղթապանակ 88բ, վավերագիր № 148).— Ագրիանուպոլիս քաղաքի հայերի վիճակագրությունը, կազմված Ղևոնդ քահանա Փափազյանի կողմից 1881 թվականին։

27. (Մատենադարանի արխիվային բաժին, թղթապանակ 88բ, վավերագիր № 149).— Աղեքսանդրիա քաղաքի հայերի վիճակագրությունը, կազմված Ղևոնդ քահանա Փափազյանի կողմից 1888 թվականին։ Վերոհիշյալ վիճակագրությունների հեղինակը ռումինահայ պատմության մեջ հայտնի է իր տպագրական բազմամյա ժրալան գործունեությամբ։ Ղևոնդ քահանա Փափազյանը Ռումինիայի Գալաց և Բուլլա քաղաքներում բաց է արել տպարան և տպագրել մի շարք կարևոր նշանակություն ունեցող հայերեն գրքեր և նկարներ։ Սույն վիճակագրությունները Ռումինահայ մատենադարանին նվիրվել են տիկին Մարիա Զորաբաբեյի կողմից։

28. (Մատենադարանի արխիվային բաժին, թղթապանակ 88բ, վավերագիր № 150).— Բուխարեստի հանգուցյալ Հարություն ավագ քահանա Անդրեասյանի անձնական արխիվն ու ինքնակենսագրությունը։ Արխիվում գտնվում են մի շարք նամակներ գրված Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի, Գրիգոր եպիսկոպոս Ադրիանուպոլսեցու, Հուսիկ արքեպիսկոպոս Չոհրապյանի, Գնել եպիսկոպոս Գալեմքյարյանի, Զավեն Պատրիարք Եղիայանի, յաշցի հայագետ Լուսիկ Սրմագաշյանի և ուրիշների կողմից։ Ձեռագիրը Ռումինահայ մատենադարանին նվիրել է հանգուցյալ Խաչիկ Անդրեասյանը։

29. (№ 9508). Բառգիրք ֆրանսերեն-ճայերեն-թյուրքերեն լեզուների.— Ձեռագրում կան նաև ֆրանսերեն լեզվի քերականության համառոտ կանոններ և այլն (սկզբից թերի)։ Ձեռագիրը գրվել է 19-րդ դարի սկզբին։

30. (№ 9509) Ավետարան.— Ընդօրինակվել է 1265 թվականին Կիլիկիայի Մաշկևոր վանքում Կիրակոսի կողմից թեոդոս փակակալի պատվերով։ Կազմել է Կիլիկիայի հայտնի կազմարար Առաքել Հեսազանենը։ Հիշատակարանում հիշվում է Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթում առաջինը։ Երկար ժամանակ սույն ձեռագիրը պահվել է Ռոմա քաղաքում։ Նա Ռումինիայում պահվող ամենահին ձեռագիրն էր։ Ձեռագիրը ցուցադրվել է 1908 և 1930 թվականներին Բուխարեստում բացված ու հայ կուլտուրային նվիրված ցուցահանդեսներում։ Դումիտրու Դան ռումինացի դիտուն քահանան այս ձեռագրի մասին ևս ուսումնասիրություն է գրել։ 1947 թվականին այս ձեռագիրը Ռոմանի հայ թաղականության կողմից նվիրվեց Բուխարեստի Հայ մշակույթի տան մատենադարանին։

31. (№ 9510) Ավետարան.— Գրված մագաղաթի վրա 14-րդ դարում։ Հիշատակարանը ընկել է։ Ունի 4 խորան և 4 ավետարանիչների նկարներ։ Մանրանկարների ոճից երևում է, որ ձեռագիրը նկարազարդել է Կիլիկյան Հայաստանի նշանավոր մանրանկարիչ Սարգիս Պիծակը։ Ուշադրավ է նաև այս ձեռագրի պահպանակը, որը իր հնագրական տվյալներով ներկայացնում է 10-րդ դարում բուն Մեսրոպյան երկաթագիր տառերով գրված Ավետարանի մի թերթը։ Ձեռագիրը երկար ժամանակ պահպանվել է Բոտոշան քաղաքի հայկական եկեղեցում։

32. (№ 9511) Հայսմավուրք.— Ընդօրինակվել է Խարի և Պողոս դպրի կողմից մահտեսի Հովհաննեսի պատվերով 17-րդ դարում։ Հիշատակարանը ընկել է։

Ձեռագիրը երկար ժամանակ պահպանվել է Սուչավայում։ Ձեռագրում երևում է 1791 թվականի Սուչավայի Ս. Խաչ եկեղեցու և հայ հոգաբարձության կնիքը։ 1947 թվականին այս ձեռագիրը ևս այլ բազմաթիվ արխիվային նյութերի հետ միասին կարելի եղավ Սուչավայից փոխադրել Բուխարեստի Հայ մշակույթի տան մատենադարանը։

33. (№ 9512) «Շարցմունք Խոյմանուց».— Ընդօրինակվել է Հայի Խաչ Գաղատացու կողմից Լվովի Ս. Աստվածածին եկեղեցում 1813—1815 թվականներին։ Հիշատակարանում հիշվում է նաև Լեհաստանի Զիգմունդ թագավորը։ Ձեռագրում կան Հովհաննես Երզնկացու, Վարդան Այդեկցու, Գրիգոր Տաթևացու և Հակոբ Ղրիմեցու մի շարք գրվածքները։ Ձեռագիրը երկար ժամանակ պահպանվել է Բոտոշանի հայկական եկեղեցում։

34. (№ 9513) Կանոնագիրք և Դատաստանագիրք.— Պարունակում է Հայոց եկեղեցու մի շարք ժողովներում սահմանված կանոններն ու հայ նշանավոր գիտնական Մխիթար Գոշի Դատաստանագիրքը։ Ձեռագիրը 1711 թվականին պահվել է Թեքիրդաղում (Ռոսսիա) և մի ժամանակ պատկանել է հայ պատմիչ Աբրահամ Երևացուն, քանի որ երևում է 1708 թվականը կրող նրա անձնական կնիքը։ 1736 թվականին այս ձեռագիրը արդեն Ցաշուն է, բայց 1860 թվականին բոտոշանցի Հակոբ վարժապետ Հակոբյանը այն նվիրում է քաղաքային հայ ազգային թանգարանին։ Երկար ժամանակ այս ձեռագիրը կորել էր և միայն 1948 թվականին այն հնարավոր եղավ գտնել Բուխարեստում։

35. (№ 9514) Աղվոս.— Հիշատակարանը ընկել է։ Ընդօրինակվել է Մուսիկ (կամ Մուսես) անուն գրչի կողմից 18-րդ դարում։ Ձեռագիրը երկար ժամանակ պահվել է Բոտոշանի հայկական եկեղեցում։

36. (№ 9515) Առաջնորդ ճամբակագրության Ֆրանսերեն և Ռայերեն.— Հեղինակն է ռումինահայ Հ. Վարդան Ըստարյանը (1842—1886 թ. թ.), որը գրել է Վիեննայում։ Նվիրվել է Ցաշնց։

37. (№ 9516) Զանազան պատվիրներ.— Բովանդակում է ա) «Պատմութիւն Պղնձե քաղաքին», բ) «Պատմութիւն յաղագս Փահլուլ թագաւորին և գ) «Պատմութիւն աղչկան և մանկան և հարցմունք նոցա ընդ միմեանս»։ Ձեռագիրը ընդօրինակվել է Բարսեղ Այալի կողմից 1831 թվականին Սուչավայում։ Նվիրվել է Գնել քահանա Մանասյանի կողմից Սուչավայից։

38—42.— Ռումինիայի շրջաններից Տրանսիլվանիայի Հայաքաղաք ՆդիսաբեՍուպոլում (Ներկայումս Դամբրովեն) տեղի ժողովրդապետ Հովհաննես ավագերեց Գապտեպովյանի կողմից հեղինակված և նրա իսկ ձեռքով գրված քարոզագրքերի հետևյալ ժողովածուները.

ա) (№ 9517) «Կենացը դիցացի պարտաւորութիւնքը». 1818 թ.։

բ) (№ 9518) «Լուսաւորոյ յորում պատուիրանքը...». 1823 թ.։

գ) (№ 9519) «Փրկչաւն շարշարանքը օխտը քարոզի մէջ». 1826 թ.։

դ) (№ 9520) «Օխտը աղցացութիւնն քարոզ և մէկ քանի բաղումն պատճառու ասած պիզի զուրցէ Ը». 1827 թ.։

ե) (№ 9521) «Դաս մը մանարտիկ բաղումնու զուրցեր մէկ աղցացութիւնն մը քարոզնու ճիւրիրով. ու շատ օգնա ըրիւն, ու խօճա ասմուճիներ». 1830 թ.։

Սույն քարոզագրքերը հատկապես կարևոր նշանակություն ունեն Տրանսիլվանիայի (Անտիայի) հայերի այժմ անհետացած բարբառը ուսումնասիրելու համար։

Ռումինահայ թեմական խորհրդի կողմից Երևանի Պետական ձեռագրատան (Մատենադարանին) նվեր ուղարկված 42 հայերեն ձեռագրերը մեծ արժեք են ներկայացնում հայկական գաղութների պատմության ուսումնասիրման համար։ Մի շարք ձեռագրերում նյութեր կան Ռումինիայի, Լեհաստանի, Ուկրաինայի և այլ վայրերի հայերի մասին։ Այս ձեռագրերը արժեքավոր են նաև Ռուսաստանի, Ռումինիայի, Լեհաստանի և այլ երկրների պատմության համար։

Վերև թվարկված ձեռագրերը արդեն մշակվել ու մուծվել են Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի հայերեն ձեռագրերի հարուստ ֆոնդը և դարձել են սովետական գիտական հասարակության ուսումնասիրության առարկան։

Ռումինահայերի կատարած հայրենասիրական այս նախաձեռնությունը գնահատելի է և օրինակելի մեր մյուս հայկական գաղութների համար նաև։

Ս. Ք.

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 1955 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ.— Սովետական Հայաստանի Վիճակագրական վարչությունը հրապարակել է հաղորդագրություն ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացման պետական պլանի կատարման 1955 թվականի առաջին կիսամյակի արդյունքների մասին։

Ըստ այդ հաղորդագրության, Սովետական Հայաստանի սահմաններում գտնվող արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները համախառն արտադրանքի թողարկման ընթացիկ տարվա առաջին կիսամյակի պլանը կատարել են 105 տոկոսով, ըստ որում՝ միութենական ենթակայության ձեռնարկությունները՝ 105, իսկ ռեսպուբլիկական և տեղական ենթակայության ձեռնարկությունները՝ 106 տոկոսով։

Արդյունաբերական արտադրանքի թողարկումը ռեսպուբլիկայում, անցյալ 1954 թվականի առաջին կիսամյակի համեմատությամբ, ընդհանուր առմամբ, աճել է 14 տոկոսով, ըստ որում, միութենական ենթակայության գծով այդ աճը կազմում է 17, իսկ ռեսպուբլիկական արդյունաբերության գծով՝ 12 տոկոս։

Կիսամյա պլանը զգալի չափով գերակատարված է արդյունաբերության արտադրանքի մի շարք այնպիսի կարևոր տեսակների թողարկման գծով, ինչպիսիք են՝ ալյումինը, պղինձը, էլեկտրական էներգիան, մեռազահատ հաստոցները, կոմպրեսորներ, առանցքակալներ, սուպերֆոսֆատ, ցիանամիդ, կարբիդ, ծծմբաթթու, ավտոդողեր, ցեմենտ, սպիրտ, բամբակյա և բրդյա գործվածքեղեն, պատրաստի հագուստեղեն, կաշի, կոշկեղեն, մահճակալներ, կենցաղական յուղ, պահածոներ, օճառ, գինի, կոնյակ և այլն։

Ընթացիկ տարվա գարնանացանի պլանը, ամբողջովին վերցրած, կատարված է, ըստ որում, հացահատիկային կուլտուրաների ցանքի պլանը կատարված է 118 տոկոսով։

Ամ 1-ը հուլիսի տվյալներով, անցյալ տարվա նույն ժամանակվա համեմատությամբ ռեսպուբլիկայում ավելացել է կովերի ու ոչխարների գլխաքանակը, ըստ որում 40 տոկոսով ավելացել է ստացված կաթի քանակը։

Հիմնական (կապիտալ) շինարարության կիսամյա պլանը կատարված է 108 տոկոսով, մանրածախ ապրանքաշրջանառության պլանը՝ 102 տոկոսով։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Օգոստոսի ընթացքում Հայաստան այցելեցին Եվրոպա-Սովետական Միություն ընկերության, Լեհական Ժողովրդական Ռեսպուբլիկայի ճարտարապետների և բրազիլիական ճարտարապետների պատվիրակությունները։

Հյուրերը շրջեցին Հայաստանում, դիտեցին երկրի պատմական հուշարձանները, ծանոթացան Երևանի շինաբարությանը, այցելեցին կրթական և կուլտուրական հաստատությունները, եղան առանձին գործարաններում։ Ինչպես միշտ, ամենուրեք հյուրերին ցույց տրվեց շերմ, սիրալիր ընդունելություն։

Բրազիլիական ճարտարապետների պատվիրակությունը մեկնելուց առաջ հանձնել էր հետևյալ նամակը մամուլում հրատարակելու համար.

«Հրաժեշտ տալով Երևանին, բրազիլիական ճարտարապետների պատվիրակությունը իր խորին շնորհակալությունն է հայտնում հայ ժողովրդին, հատկապես սովետահայ ճարտարապետներին՝ շերմ հյուրասիրության համար։ Երևանում և առհասարակ Հայաստանում մենք մեզ զգում էինք ինչպես մեր տանը։ Սրրտանց նշում ենք, որ հայ ժողովրդի մեջ մենք նկատեցինք բազմաթիվ լավ գծեր, որոնք հատուկ են նաև մեր ժողովրդին։ Թանկագին Հայկական Ռեսպուբլիկային, ուր մենք անցկացրինք երկու հիանալի օրեր, ցանկանում ենք հաջողություններ խաղաղ ստեղծագործական աշխատանքի բնագավառում»։

ԵԱՂՈՂԻ ՆՈՐ ՏԵՍԱԿՆԵՐ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի այգե-դենդրոլոգական ինստիտուտը մեծ աշխատանք է կատարում խաղողի նոր, ավելի բերքատու, լեռնային շրջանների կլիմայական պայմաններին դիմացող տեսակներ աճեցնելու ուղղությամբ։

Անցյալ տարվանից ռեսպուբլիկայի առանձին շրջաններում մշակվում են խաղողի մի քանի նոր տեսակներ, որոնց հեղինակներն են ինստիտուտի գիտական աշխատողներ Ս. Գոլոսյանը և Ս. Խաչատրյանը։ Այդ տեսակները կոչվում են՝ «Հայաստան», «Վարդենիկ», «Հրազդան», «Տոկուն», «Արագածիս»։

Նոյեմբերյանի, Եռմշգադեկի, Իջևանի շրջաններում բավական ընդարձակ տարածություններ վրա մշակվում են խաղողի մի շարք տեսակներ, որոնք ստացվել են Հայաստանի սելեկցիոներների երկարամյա աշխատանքների շնորհիվ։

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԻՆԱՐԵՆ ԼԵԶՎՈՎ.— Շանհայում, չինական պատանեկան հրատարակչությունը լույս է ընծայել սովետահայ գրող Վ. Անանյանի «Մանկությունը լեռներում» պատմվածքների ժողովածուն։ Գիրքը չինարեն է թարգմանված ռուսերենից։ Այն նկարազարդված է նկարիչ Գ. Խանջյանի կողմից։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐ ՇԵՆՔԵՐ.— Առաջիկա ուսումնական տարվա սկզբներին Երևանում օգտագործման կհանձնվեն ուսումնական մի շարք նորակառույց շենքեր։ Դրանցից առանձնապես ուշադրավ է Պոլիտեխնիկական ինստիտուտի չորսհարկանի հոյակապ շենքը, որը կառուցված է Նարնջագույն տուֆից ճարտարապետ Ա. Մամիշանյանի նախագծով։ Այն ունի 26.000 խորանարդ մետր ծավալ։ Գլխավոր ճակատի երկարությամբ ձգվող սյունաշարը մի առանձին շուք և գեղեցկություն է տալիս այդ նորակառույցին։

Այգեստան փողոցի վրա ավարտվում է Պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի շենքը, որն իր ճարտարապետական գեղեցկությամբ քաղաքի այլի ընկնող նորակառույցներից մեկն է։

Այս տարի մայրաքաղաքի կրթական հաստատությունները կստանան ևս 5 նորակառույց շենքեր, որոնցից 2-ը կհատկացվեն միջնակարգ, իսկ 3-ը՝ մասնագիտական դպրոցների համար։

ԳԻՏԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ.— Գնալով ընդարձակվում է գիտական աշխատությունների փոխանակումը Հայաստանի և արտասահմանյան երկրների գիտնականների միջև։

Վերջերս Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան նամակ էր ստացել Խորվաթիայի մաթեմատիկոսների և ֆիզիկոսների ընկերությունից, որով հարցվելական գիտնականները ցանկություն էին հայտնել կապ հաստատել Հայաստանի մաթեմատիկոսների հետ։ Ի պատասխան այդ նամակի, օրերս Գիտությունների ակադեմիան Հարավսլավիա ուղարկեց հայ գիտնականների 15 աշխատություն՝ նվիրված մաթեմատիկայի և մեխանիկայի հարցերին։

Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրերի» նոր համարներից, ինչպես նաև մի շարք զեկուցումներ ուղարկված են Արգենտինա, Բելգիա, Հնդկաստան, Հոլանդիա և այլ երկրներ։ Ֆրանսիական ազգային գրադարանի խնդրանքով ուղարկված են հայ հեղինակների մի շարք աշխատություններ։

Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի հաստատությունից Չեխոսլովակիայից և Լեհաստանից նամակներ են ստացվել, որով հիշյալ երկրների գիտնականները խնդրում են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գր. Ղափանցյանին՝ ուղարկել մի շարք գիտա-հետազոտական հոդվածներ լեզվաբանության, հատկապես փոքր-ասիական մեռած լեզուների հետ կապված հարցերի վերաբերյալ։

Իր հերթին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան վերջերս մեծ քանակությամբ գիտական աշխատություններ և պարբերական հրատարակություններ է ստանում Անգլիայից, ԱՄՆ-ից, ժողովրդական դեմոկրատիայի երկրներից։

ՀԱՄԵՐԳՆԵՐ ՍԵՓՈՒՌՔԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.— Ինչպես հայտնի է, Սեփուռքի հայությունը բացառիկ հետաքրքրություն է հանդես բերում Երևանից տրվող ռադիոհաղորդումների նկատմամբ։ Առանձնապես մեծ է հետաքրքրությունը դեպի հայկական քաղաքիկ երգն ու երաժշտությունը։

Թե որքան մեծ է այդ հետաքրքրությունը, վկայում է այն փաստը, որ Երևանի ռադիոյի վարչությունը վերջին 6 ամսում արտասահմանյան երկրներում բնակվող հայերից ստացել է մոտ 400 նամակ-հայտեր, որոնցով ռադիո-ունկնդիրները ցանկություն են հայտնել լսելու իրենց սիրած երգերն ու մեղեդիները։

Ռադիոյի վարչությունը սիրով ընդառաջում է ունկնդիրների ցանկություններին։ Ոչ մի նամակ անհետևանք չի մնում։

Հաճախակի կազմակերպվում են ռադիո-համերգներ՝ նվիրված հայ կլասիկ և ժամանակակից երաժշտագետների ստեղծագործություններին։ Արդեն հաղորդվել են համերգներ Կոմիտասի, Ա. Սպենդիարյանի, Ա. Սաքյանի և մյուս երաժշտագետների ստեղծագործություններից։

Շոշ համերգներ են տրվել Սիրիայի, Լիբանանի, Իրանի և այլ երկրների ռադիո-ունկնդիրների պատվերներով։

Համերգներին մասնակցում են Երևանի լավագույն կատարողական ուժերը և երաժշտական խմբերը, հատկապես Հայկական ժողովրդական երգի-պարի ու Ռադիո-ինֆորմացիայի գլխավոր վարչության ժողովրդական գործիքների վաստակավոր անսամբլները, որոնք մեծ ժողովրդականություն են վայելում։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Հայաստանի քաղաքային և գյուղական շինարարության մինիստրությունը Երևանում կառուցում է մի խոշոր գործարան, որտեղ արտադրվելու են շինարարության համար անհրաժեշտ մասեր՝ երկաթ-բետոնե սալեր, բլոկներ, դռներ, պատուհաններ և այլն։ Ամբողջ արտադրանքը հատկացվելու է մինիստրության նորակառույցներին։ Գործարանը կգրավի 12 հեկտար տարածություն։ Այնտեղ կաշխատեն յուրաքանչյուր 2.000 բանվորներ։

Մի շարք նոր ձեռնարկություններ է կառուցում Հայաստանի արհեստագործական կոոպերացիան։ Այսպես, օրինակ, Երևանում կառուցվում է մահճակալների նոր գործարան, որը տարեկան կարող է թողարկել մինչև 45.000 հատ մահճակալ։ Նման գործարան է կառուցվում նաև Լենինականում։ Ղափանում, Ճամշադինում, Նոր Բայազետում և Երևանում կառուցվում են կահույքի ֆաբրիկաներ։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Ներկայումս Հայաստանի 7 շրջաններում՝ Էջմիածնում, Նոր Բայազետում, Ապարանում, Արտաշատում, Բասարգեչարում, Ճահուլյանում և Կոտայքի շրջանի Գառնի գյուղում կառուցվում են նոր հիվանդանոցներ, որոնց բոլորն էլ բացվելու են ընթացիկ տարում։ Հիվանդանոցները կունենան տարբեր հիվանդությունների բուժման անհրաժեշտ բաժիններ։

Բացի հիշյալ հիվանդանոցներից, այս տարի ռեսպուբլիկայում բացվելու են սանիտարական-էպիդեմիոլոգիական 4 կայաններ և 4 դիսպանսեր։

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՆԱԽՈՐՁԱԿԻՆ.— Ռեսպուբլիկայի հանրակրթական դպրոցները պատրաստվում են նոր ուսումնական տարվան։ Շատ վայրերում արդեն ավարտված է դպրոցական շենքերի նորոգումը, գույքի համալրումը, դպրոցահասակ երեխաների հաշվառումը, ուսուցչական կազմի կոմպլեկտավորումը։

Նոր ուսումնական տարվանից Հայաստանում գործելու են 1170 հանրակրթական դպրոցներ։ Քաղաքներում և գյուղերում բացվելու են 30 նոր միջնակարգ դպրոցներ։ Առաջին դասարանները կընդունվեն շուրջ 30.000 մանուկներ։ Մանկավարժական աշխատանքի

կանցնեն բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտած ավելի քան 800 երիտասարդ դասատուներ։

Նախատեսված 90 անուն դասագրքերից 83-ը արդեն լույս է տեսել։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.— Օգոստոսի 1-ից Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սկսվել են ընդունելության քննությունները։ Ընդամենը քննություններին մասնակցում են մոտ 16.000 պատանիներ ու աղջիկներ, որոնց ժամանել են ինչպես ռեսպուբլիկայի շրջաններից, այնպես էլ Անդրկովկասի հայաբնակ շատ վայրերից։ Միջին հաշվով յուրաքանչյուր տեղի համար քննություն են տալիս 5 հոգի։ Դիմողների թիվը զգալի չափով ավելի է, քան նախորդ տարիներում։

Ավելի քան 2.000 հոգի քննություն են տալիս Պոլիտեխնիկական ինստիտուտում, 1.700 հոգի՝ Գեոդեզիական համալսարանում, մոտ 2.000 հոգի՝ Ե. Երևանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում և այլն։

ՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ.— Հայաստանի Գեոդեզիական պատկերասրահը հաճախ շրջիկ ցուցահանդեսներ է կազմակերպում ռեսպուբլիկայի խոշոր գյուղերում և շրջանային կենտրոններում՝ նպատակ ունենալով գյուղական աշխատավորության լայն խավերին ծանոթացնելու նկարչական արվեստի լավագույն նմուշների հետ։

Վերջերս այդպիսի ցուցահանդես բացվեց Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղի նորակառույց ակումբի դահլիճում։ Ցուցադրված էր ինչպես ժամանակակից, այնպես էլ անցյալի հայ և ռուս նկարիչների մոտ 130 գործ։ Ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն առաջացրեց։ Այն դիտելու համար մեծ թվով այցելուներ էին գալիս նաև հարևան գյուղերից։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՆՈՐ ԳՈՐԾԵՐ.— Սովետական Հայաստանի երաժշտագետները անդուլ կերպով աշխատում են նոր ստեղծագործությունների վրա։ Ա. Սաֆյանը ավարտել է «Զանգեզուրի լեռներում» 5 մասից բաղկացած սիմֆոնիկ պատկերները և այժմ գրում է «Արարատյան հովտի երգերի» նոր շարք։

Երաժշտագետ Գ. Խաչատրյանը աշխատում է նոր օպերայի վրա, որը կոչվում է «Խաչատուր Աբովյան»։ Նոր գործեր են գրում Է. Միրզոյանը, Ա. Հարությունյանը, Է. Հովհաննիսյանը, Կ. Զաքարյանը, Վ. Կոտոյանը և ուրիշներ։

Գ. Եղիազարյանը գրել է «Ռուզան» բալետը, որի բովանդակությունը վերցված է գյուղական կյանքից։ Առաջիկա թատերաշրջանում այդ բալետը կբեմադրվի Ալ. Սպենդիարյանի անվան թատրոնում։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՀՎԱՆ 20-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ՀԱՄԵՐԳ ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՄԵՋ

«Ստեփան Շահումյան» մշակույթի տան «Կոմիտաս» երգչախումբը Ռումեն Ժողովրդական Ռեսպուբլիկայի «Աթենեուշ» սրահին մեջ մեծ համերգ մը տվավ՝ հանճարեղ կոմպոզիտոր Կոմիտասի մահվան 20-ամյակի հիշատակության համար։

Համերգին ներկա էին պաշտոնական հյուրեր, կոմպոզիտորներ և դիրիժորներու հոծ բազմություն մը։

Համերգեն առաջ դոկտ. Գր. Բամպուքճյան խոսեցավ Կոմիտասի կյանքին ու ստեղծագործություններուն մասին։ Ան ցույց տվավ, թե Կոմիտաս ստեղծագործած է խորապես ուսումնասիրած ըլլալով հայ պատմական ավանդությունները։ Հանճարեղ կոմպոզիտորը իր ստեղծագործ աշխատանքն ու կորովը ի սպաս դրավ հայ ժողովրդական երաժշտության զարգացման։

Սովետական Հայաստանի մեջ մեծ ժողովրդականություն կվայելեն Կոմիտասի ստեղծագործությունները։

Խմբավար Կ. Հարությունյանի ղեկավարությամբ «Կոմիտաս» երգչախումբը դեղարվեստական բարձր մակարդակով մը կատարեց Կոմիտասի «Գարուն ա», «Անձրև եկավ», «Գուլթաներդ», «Կալի երգ», «Սիփանա քաջեր» և ուրիշ երգեր։

Համերգին իրենց աջակցությունը բերին մայրաքաղաքի ծանոթ մենակատարներն ու դաշնակահարուհիները։

Ռումեն Ժողովրդական Ռեսպուբլիկայի Օպերայի և բալետի թատրոնի մենակատար Անահիտ Քերփիչյան երաժշտական բարձր մակարդակով մը և շերմ զգացումներով երգեց «Միրանի ծառ», «Հով արեք», «Հայաստան» և ուրիշ երգեր։

Ռումեն Ժողովրդական Ռեսպուբլիկայի Օպերայի և բալետի թատրոնի մենակատար Արաքս Սվաճյան սրտահույզ ապրումներով երգեց «Քելե, քելե», «Կռունկ» երգերը։

Ռումեն Ժողովրդական Ռեսպուբլիկայի Օպերայի և բալետի թատրոնի մենակատար Կարպիս Զոպյան դրամատիկ ապրումներով երգեց «Երկինք ամպել է»։

Դաշնակահարուհիներ Մելինե Մինաս և Շաքե Եղեկիելյան հաջողեցան վարպետությամբ ընկերակցիլ դաշնամուրի վրա մենակատարներու երգերուն։

Գնահատելի է խմբավար Կ. Հարությունյանը, որ կարողացավ դեղարվեստական բարձր մակարդակով մը մեկնաբանել Կոմիտասի հոգեթով երգերը։

Հասարակության պահանջով համերգը կրկնվեցավ հունիս 13-ին միևնույն սրահին մեջ։

Թե՛ երգչախումբի երգիչները, թե՛ խմբավարը և թե՛ համերգի ընթացքին ելույթ ունեցող մենակատարներն ու դաշնակահարուհիները արժանացան հանդիսականներու խանդավառ և բուռն ծափահարություններուն։

(Բուխարեստ, «ԱՆՎԱՆ» ամսաթերթ,
հունիս, 1955 թ.)

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲՐԱԶԻԼԻԱ ՄԵՋ

Մաղկազարդի կիրակին, Բուենոս-Այրեսի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցվո մեջ պատարագելե, քարոզելե հետո, Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Մանուկյան Ավագ շաբթշաբթի օր, օդանավով մեկնեցավ Սան-Պաուլո, թեմական այցելություն տալու Բրազիլիայի համայնքին։ Նույն օրը, ապրիլ 5-ին, հետ միջօրեի ժամը 4-ին, Նորին Սրբազնությունը ժամանեց Սան-Պաուլոյի օդակայանը։ Դիմավորության եկած էին երեք քահանա հայրերը, վարչության ատենապետն ու անդամները, Մարաշի և Հաչնո հայրենակցական միությանց և Հ. Օ. Մ.-ի ներկայացուցիչները և բավական թիվով ազգայիններ։ Նորին Սրբազնությունը առաջնորդվեցավ Ս. Գեորգ Մայր եկեղեցին, ուր ընդունվեցավ «Հրաշափառով», և աղոթելե վերջ՝ օրհնեց հավատացյալները։ Նույն երեկո սրբազանը հյուրասիրվեցավ ատենապետ տիար Անդրեաս Ճաֆերյանի բնակարանը, քահանա հայրերու հետ միասին։

Նորին Սրբազնությունը նախագահեց Ավագ շաբթու բոլոր արարողությանց, վեհություն և փայլ տալով խորհրդավոր Ոտնալվայի, խավարման, Թաղման և Ճրագալույցի արարողությանց։ Քարոզեց Ավագ հինգշաբթի գիշերը, խոր լռության ու մթության մեջ. «Տրտում է ոգի իմ մինչև ի մահ» և «Հոգիս յոժար է, բայց մարմինս տկար» բնաբանով, հուզելով ներկա հավատացյալներու հոգին՝ Տիրոջ Գեթսեմանիի մատնության մահասարսուռ տաղնապի ու խաչելության հոգեխոով խորհուրդովը։

Ս. Զատկի արևաշող ու պայծառ կիրակին, սուրբ անմահ պատարագ մատույց Նորին Սրբազնությունը, հոծ բազմության ներկայության։ Ս. Սեղանին կսպասարկեին ավագ սարկավագներ։ Սուրբ պատարագի երգեցողությունը կատարեց «Մելոդիաս Արմենիա» երգչախումբը։ Սրբազան հայրը քարոզեց «Քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի» բնաբանով, տալով Հարության կենսաներոգ պատգամը, իբրև տոն կյանքի հաղթանակին՝ մահվան վրա, ըսելով, թե աշխարհի բոլոր հզորները, կայսրեր, թագավորներ և աշխարհակալ զորավարներ,— Հ. Կեսար, Մեծն Ալեքսանդր, Նապոլեոն, և մինչև մեր ժամանակներու բռնակալները,— ամենքն ալ պարտվեցան աշխարհեն, Հիսուս միայն կրցավ ըսել. «Ես հաղթեցի աշխարհի, վասնզի սուրբի տեղ Սեր գործածեցիս։ Իր հարությամբ հաղթահարեց մահվան ու մարդկությունը ազատագրեց,— «Մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբ իւրով մեզ զկեանս պարգևեաց։

Տիրոջ Հարության հրաշքը կշարունակվի Իր եկեղեցիին մեջ, որ Իր մարմինն է, շնորհիվ եկեղեցվո սրբազան խորհուրդներուն, որոնց միջոցավ մենք հաղորդակցություն կպահենք Աստուծո հետ, ու արժանի կդառնանք հավերժական կյանքի պարգևին։

Հայ ժողովուրդը հավատաց Հիսուսի Հարության լույսին ու անոր հետևեցավ մինչև Գողգոթա, շալկելով իր խաչը և Հիսուսի շնորհիվ հաղթեց մահվան, հարություն առավ իր ավերակներեն ու վերապրեցավ իր մահվանեն։ Ս. Գրիգոր Պարթև այդ լույսին, «Աշխարհի լույս»ին լուսարարը եղավ, իր կանթեղը վառեց անկե ու դայն կախեց Հայաստանի երկինքեն, Արագածի կատարեն, Ս. Էջմիածնի խորանեն ու ամեն հայու հոգիեն։

Այս տարի Զատիկը բացառիկ շուքով ու հանդիսավորությամբ տոնվեցավ Սան-Պաուլոյի մեջ։ Պատվիրակ սրբազանի ներկայությունը խանդավառեց ու ներշնչեց հայ պանդուխտ ժողովուրդը, վերարծարծելով անոր սրտին մեջ մեր հայրերու լույս հավատքը և հայրենասիրական ոգին։

Կարժե հոս գնահատել Հ. Օ. Միության ընդամուհիներն ու եկեղեցասեր տիկինները, որոնք մեծ զոհաբերությամբ՝ եկեղեցվո բեմն ու դասը զարդարած էին կանաչ և վարդագույն գեղեցիկ գորգերով։

Աստված օրհնե և վարձատրե զիրենք։

(Բուենոս-Այրես, «ՀԱՅ ԿԵԴՐՈՆ», պաշտոնաթերթ Հայաստանյայց Առաքելական Եղեղեցվո հոգաբարձության, № 8, հունիս, 1955 թ.)

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆԸ ԿԼԻՎԼԵՆԴԻ ՄԵՋ

Ամերիկայի հայոց բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայան անցյալ շաբթվան ընթացքին, իր առաջնորդական առաջին այցելությունը տվավ Կլիվլենդի հայ գաղութին։

Նորին Սրբազնությունը մայիս 21-ի գիշերը օդանավով Կլիվլենդ հասավ։ Մխական խորհուրդի անդամները օդանավակայանին մեջ դիմավորեցին սրբազան հյուրը և առաջնորդեցին ծխական խորհրդի ատենադպիր պարոն Խոսրով Ոսկերիչյանի բնակարանը։

Մամբրե սրբազանը մայիս 22-ի կիրակին, կեսօրե առաջ, այցելեց Կիրակնօրյա դպրոցը և հետ միջօրեին՝ Եպիսկոպոսական Ս. Ալբընս եկեղեցվո մեջ հանդիսավոր սուրբ պատարագ մատուցց, քարոզեց և հոգևորապես մխիթարեց Կլիվլենդի հայ գաղութը։ Ան իր հոգեշունչ քարոզը երեք մասերու բաժնած էր, ըստ այդ կիրակիի մոտավորապես հանդիպող երեք պատմական մեծ դեպքերու — Համբարձման տոն, երջանկահիշատակ Տ. Գեորգ Կաթողիկոսի մահվան առաջին և նահատակաց սգատոնի քառասներորդ տարեդարձները։

Համբարձման տոնի նշանակությունը ամփոփ կերպով վերլուծելե և բացատրելե հետո, Մամբրե սրբազան, էջմիածին իր երեք այցելություններուն առթիվ մոտեն ծանոթացած ըլլալով երանաշնորհ Հայրապետին, արժանավորապես ներկայացուց Անոր մեջ մարդը, մտավորականը և դիվանագետը, և ներբողելից շեշտերով խոսեցավ մեծ Հայրապետի բազմապիսի արժանիքներուն, հոգեկան և բարոյական մեծության, խորաթափանց մտքին, Հայաստանի կառավարության հանդեպ բռնած ուղիղ դիրքին և այլնի մասին, որոնք, ըսավ, դինք արժանի ըրին Գեորգ Մեծագործ տիտղոսին։ Ըսավ, թե միայն մեկ փափագին չհասավ, այն է աչքովը տեսնել էջմիածնա Մայր Տաճարը նորոգված, որուն իրագործման համար այնքան ջանք ու աշխատանք թափեց։ Բայց, ըսավ, Մայր Տաճարը կնորոգվի հիմա։

Նահատակաց տոնի բաժնին մեջ վեր առավ այն պարագան, թե մինչ հին ազգերեն շատեր կորած են և անոնց անունը միայն կմնա պատմության մեջ, հայ ազգը, հակառակ դարերով նահատակված ըլլալուն, կապրի դեռ և պիտի ապրի հավետ։ Առաջին քրիստոնյա ազգն ենք, ըսավ, և քրիստոնեությունը ընդունելնիս մեր ազգային գոյությունը ապահովեց։ Խրատեց ժողովուրդը լմոնալ նահատակաց հիշատակը և անոնց օրինակին հետևելով ամեն գինով պահել մեր պապենական հավատքը։ Հորդորեց նոր սերունդը սորվելու մեր լեզուն, պատմությունը և ապրիլ որպես հայ։

Հավարտ սուրբ պատարագի, ի պատիվ սրբազանին, ճաշկերույթ սարքված էր եկեղեցվո ներքնասրահին մեջ։

(Նյու-Յորք, «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԵԿԵՂԵՑԻ», պաշտոնաթերթ Ամերիկայի հայոց Առաջնորդարանի, № 8, օգոստոս, 1955 թ)

ԱԶԳԱՅԻՆ ԹԵՄԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅՈՒՄ

Կիրակի, 1955 թ. մայիսի 29-ին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 6-ը, օրինապահության, կանոնավոր կարգապահության մթնոլորտում, տեղի ունեցան Ալեքսանդրիայի ազգային թեմական ընտրությունները։

Երեկոյան ժամը 9.27-ին, «Տիգրան Երկաթի սրահը համախմբված հազարավոր հայեր որոտընդոստ ծափահարություններով և խանդավառ բացագանչություններով թնդացրին դահլիճը։

Ընտրելիների ցանկը պատրաստված էր։

Քվեարկելու իրավունք ունեցող ազգայիններ թիվը 1.344 էր, որոնցից ընտրություններին մասնակցեց 1.232-ը, այսինքն մեծամասնությամբ։

Երեսփոխաններ ընտրվեցին հեղինակավոր ազգայիններ։

Հաջող ընտրությունների առթիվ, ազգաշունչ խանդավառ ճառերով հանդես եկան, ինչպես և շնորհակալության սրտատրոփ խոսքեր ուղղեցին ժողովրդին Ալեքսանդրիայի հայկական գաղութի մի շարք ազգային-հասարակական գործիչներ։

Ընտրություններից հետո տեղի ունեցավ համերգային-գեղարվեստական բաժինը ի մեծ ուրախություն ներկաների։

Ուշ գիշերին տեղի ունեցան ընտանեկան խրախճանքներ և պարեր։ Ալեքսանդրիայի ազգային-թեմական ընտրությունների այս բարեհաջող և ուրախառիթ լուրը հեռագրով հաղորդվեց Սփյուռքահայ մյուս թեմերին։

(Քաղված Գահիրեի «ԱՐԵՎ» օրաթերթի 30 մայիսի 1955 թվականի №-ից)